

ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔ

«Օրինականություն» գիտագործնական և ուսումնամեթոդական հանդեսի խմբագրական խորհուրդն իր և դատախազության համակարգի բոլոր աշխատակիցների անունից ջերմորեն շնորհավորում է ՀՀ Գլխավոր դատախազ Գևորգ Կոստանյանին ծննդյան տարեդարձի կապակցությամբ՝ մաղթելով նրան ամուր առողջություն, աշխատանքային անսպառ եռանդ և բազում հաջողություններ:



Երկրում օրինականության ամրապնդման, մարդու իրավունքների պաշտպանության արդյունավետության բարձրացման և հանցավորության դեմ տարվող պայքարում Ձեր սկզբունքայնությունն ու հետևողականությունը, Ձեր մասնագիտական հմտությունները թող որ մշտական ուղեկից լինեն արդի մարտահրավերներին հաջողությամբ դիմագրավելու, աշխատանքային դժվարությունները հաղթահարելու և նորանոր հաջողություններ արձանագրելու դատախազության արդիականացման ճանապարհին:

№ 85

Հիմնադիր և հրատարակիչ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱԽԱՋՈՒԹՅՈՒՆ

ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԴԱՏԱԽԱՋՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԳՈՐԾՆԵՎԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԵՍԵԹՈՂԻՎԱԿԱՆ ՀԱՆՐԵՍ

Խմբագրության հասցեն.
0010 ք. Երևան, Վ. Սարգսյան 5
Հեռախոս՝ 511 530, ֆաքս՝ 585 152
Էլ. հասցե՝ orinakanutyun@genproc.am
www.genproc.am
ISSN 1829-4219

© Համակարգչային շարվածքը,
ոճը, տառաձևերը և էջադրումը՝
«ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ»

Հանձնված է արտադրության՝
25.11.2014թ.
Ֆորմատ՝ 70x100 1/16
Տպաքանակը՝ 500
Ծավալը՝ 8 պայմ. մամուլ
Գրանցման վկայական՝ N 688

Տպագրված է
«Պոլիգրաֆ բիզնես» ՍՊԸ տպարանում
Երևան, Գ. Քոչարի 21

© «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ», 2014 թ.

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է 1997 ԹՎԱԿԱՆԻՑ

Էմիլ Բաբայան << գլխավոր դատախազի տեղակալ, Հայաստանի ամերիկյան համայնքի իրավագիտության ֆակուլտետի ավագ դասախոս, (խորհրդի նախագահ)

Թամարա Շաքարյան << գլխավոր դատախազության իրավական ապահովման և եվրախնամության բաժնի պետ, իրավ. գիտ. թեկնածու, << կառավարման ակադեմիայի իրավագիտության ամբիոնի դասախոս, (գլխավոր խմբագիր)

Դավիթ Մելքոնյան << գլխավոր դատախազության մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման վարչության պետ, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ

Մհեր Հակոբյան << գլխավոր դատախազության իրավական ապահովման և եվրախնամության բաժնի դատախազ, իրավ. գիտ. թեկնածու

Գևորգ Դանիելյան << սահմանադրական դատարանի խորհրդական, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի Սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

Վահրամ Շահինյան << հատուկ քննչական ծառայության պետ, իրավ. գիտ. թեկնածու (համաձայնությամբ)

Հովհաննես Սյրեփանյան << գիտությունների ազգային ակադեմիայի պետաիրավական հետազոտությունների բաժնի վարիչ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

Գառնիկ Սաֆարյան << գիտությունների ազգային ակադեմիայի փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի առաջատար գիտաշխատող, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

Արման Թաթոյան << արդարադատության նախարարի տեղակալ, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ (համաձայնությամբ)

Ռուբեն Մելիքյան Արդարադատության ակադեմիայի ուսուցիչ, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ (համաձայնությամբ)

Գլխավոր խմբագիր՝ Թ. ՇԱԶԱՐՅԱՆ

2014

Հանդեսը ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի (ԲՈՀ) կողմից ընդգրկված է թեկնածուական (1999թ.) և դոկտորական (2002թ.) ատենախոսությունների հիմնադրույթների հրապարակման համար ընդունելի գիտական պարբերականների ցանկում:



**ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՁ
ԳԵՎՈՐԳ ԿՈՍՏԱՆՅԱՆԻ
ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՀՀ
ՆԱԽԱԳԱՀ ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ**

Մեծարգո պարոն Նախագահ,

Ընդունեք իմ ջերմ շնորհավորանքները Հայաստանի Հանրապետության անկախության 23-րդ տարեդարձի կապակցությամբ:

Շատ քիչ երկրների է հաջողվել անկախության առաջին երկու տասնամյակում պահպանել հռչակածը, ավելին՝ հաղթել պարտադրված պատերազմում ու դիմակայել շրջափակմանը, հաստատել ներքին և արտաքին կայունություն ու մեծ տեմպերով զարգացնել տնտեսությունը: Հենց այս անշրջելի ձեռքբերումներն են, որ մեզ հավատ ու հույս են ներշնչում, վստահություն, որ վաղվա օրն առավել գեղեցիկ ու արժանավոր է լինելու: Վստահ ենք, որ Ձեր ղեկավարությամբ և բոլորիս միահամուռ ջանքերով հասնելու ենք այդ նպատակներին և սերունդներին ենք ավանդելու ամուր և բարեկեցիկ երկիր:

Եվս մեկ անգամ շնորհավորելով Անկախության տոնի կապակցությամբ՝ մաղթում եմ Ձեզ հաջողություններ՝ հանուն մեր պետության հզորացման ու մեր ժողովրդի բարեկեցության:

Խորին հարգանքով՝ Գ. Կոստանյան

ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՉԻ ՀՐԱՄԱՆՆԵՐՈՎ՝



Ծառայողական պարտականությունները պատշաճ կատարելու համար և Անկախության տոնի առթիվ հուշանվերներով են խրախուսվել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ **Էմիլ Բաբայանը** և Արարատի մարզի դատախազ **Համբարձում Մելիք-Սարգսյանը**:

«Օրինականություն» գիտագործնական և ուսումնամեթոդական հանդեսի խմբագրական խորհուրդը իր և դատախազության համակարգի բոլոր աշխատակիցների անունից ջերմորեն շնորհավորում է ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ **Էմիլ Բաբայանին** ծննդյան տարեդարձի կապակցությամբ՝ մաղթելով նրան քաջառողջություն, արգասաբեր մասնագիտական գործունեություն և նորանոր հաջողություններ:

Աշխատանքի կազմակերպման Ձեր մոտեցումները դատախազության համակարգի առջև դրված բարդ ու դժվարին խնդիրներն արդյունավետ լուծելու նոր ուղի է ու թող որ Ձեր մասնագիտական հմտությունները, մարդկային բարձր որակները և պատասխանատվության բարձր զգացումը Ձեր մշտական ուղեկիցը լինեն դատախազության կայացման ու զարգացման գործում:



ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՅԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

2014 թվականի հոկտեմբերի 10-ին տեղի ունեցավ Արդարադատության ակադեմիայի կառավարման խորհրդի նիստը: Օրակարգում ընդգրկված էր մեկ հարց՝ խորհրդի նախագահի ընտրության հարցը: Խորհրդի նախագահի պաշտոնում առաջադրվեց միայն ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Էմիլ Բաբայանի թեկնածությունը, ով գաղտնի քվեարկությամբ ընտրվեց միաձայն: «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքով՝ Ակադեմիայի կառավարումն իրականացնում

է Ակադեմիայի կառավարման խորհուրդը: Վերոնշյալ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ խորհրդի նախագահն ընտրվում է խորհրդի կազմից, գաղտնի քվեարկությամբ: Խորհրդի նախագահն ընտրվում է մեկ տարի ժամկետով՝ դատախազ և դատավոր անդամների միջև ռոտացիոն սկզբունքով: Հիշեցնենք, որ մինչ այսօր Արդարադատության ակադեմիայի խորհուրդը նախագահում էր Վարչական վերաքննիչ դատարանի նախագահ Յուրայանը:



ՀԱՆԳԻՊՈՒՄ

ՀՀ ՂԵՒԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ԵՒ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԿԱՏԱՐԻՆ

ՀՀ գլխավոր դատախազ Գ.Կոստանյանն ընդունել է ԵՒ մարդու իրավունքների հանձնակատար Ն.Մուիժնիեկսի (Nils Muizhnieks) գլխավորած պատվիրակությանը: Հանդիպմանը մասնակցել են նաև ՀՀ գլխավոր դա-

տախազի տեղակալ Է. Բաբայանը, ԵՒ-ում ՀՀ մշտական ներկայացուցիչ Ա. Պապիկյանը:

Հանդիպման ընթացքում քննարկվել են Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանությանն առնչվող մի շարք հարցեր: Անդրադարձ է եղել մարտի մեկի գործի քննությանը, ինչպես նաև ՀՀ-ում անչափահասների և կանանց իրավունքների պաշտպանության հետ կապված առկա օրենսդրական խնդիրներին: Հանձնակատարի խնդրանքով ՀՀ գլխավոր դատախազն անդրադարձել է նաև քրեական դատավարության մոր օրենսգրքի ընդունման հետ կապված հարցերին:

ՀՀ գլխավոր դատախազը ԵՒ մարդու իրավունքների հանձնակատարի հետ քննարկել է ՀՀ պետական սահմանի մի շարք տեղա-



մասերում արձանագրված միջադեպերի առիթով ՀՀ քրեական օրենսգրքի մի շարք հոդվածներով, ներառյալ՝ հոդված 389-ը (միջազգային ահաբեկչություն), հարուցված քրեական գործի նախաքննության ընթացքին՝ միջազգային փորձագետների մասնակցության հարցը, ինչպես նաև հանձնակատարի գրասենյակի հնարավոր ներգրավվածությունը նման միջադեպերի քննությանը:

ՀՀ գլխավոր դատախազը բարձր է գնահատել ԵՄ մարդու իրավունքների հանձնակատարի հետ համագործակցությունը՝ որպես ՀՀ գլխավոր դատախազ և ՄԻԵԴ-ում ՀՀ կառավարության ներկայացուցիչ: Երկուստեք կարևորվել է փոխգործակցությունը ոչ միայն Հայաստանի Հանրապետությունում, այլև միջազգային տարբեր առյուծներում ՀՀ քաղաքացիների իրավունքների արդյունավետ պաշտպանության առումով:

ՀՀ գլխավոր դատախազը բարձր է գնահատել ԵՄ մարդու իրավունքների հանձնակատարի հետ համագործակցությունը՝ որպես ՀՀ գլխավոր դատախազ և ՄԻԵԴ-ում ՀՀ կառավարության ներկայացուցիչ: Երկուստեք կարևորվել է փոխգործակցությունը ոչ միայն Հայաստանի Հանրապետությունում, այլև միջազգային տարբեր առյուծներում ՀՀ քաղաքացիների իրավունքների արդյունավետ պաշտպանության առումով:

ՀՀ ՂԵՄԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ ՏԵՂԱԿԱԼ Է. ԲԱԲԱՅԱՆՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՄԱԿ-Ի ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՐՅԵՐՈՎ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀԱՆՁՆԱԿԱՏԱՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅԻՉ ՔՐԻՍՏՈՖ ԲԻԵՐՎԻՐԹԻՆ

ՀՀ գլխավոր դատախազությունում տեղի է ունեցել ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի ներկայացուցիչ Քրիստոֆ Բիերվիրթի և ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Էմիլ Բաբայանի հանդիպումը: Հանդիպմանը ներկա են եղել ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ ազգային անվտանգության մարմիններում քննվող, թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված և կիրճահանցագործությունների գործերով վարչության պետ Ա. Գոյունյանը և ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական կապերի բաժնի պետ Ն. Հարությունյանը:

Քրիստոֆ Բիերվիրթը շնորհակալություն է հայտնել Սիրիայի քաղաքացի Լոկման Ալիի Հասիին՝ սահմանի ապօրինի հատման համար առաջադրված մեղադրանքից հրաժարվելու մասին Գլխավոր դատախազության որոշման համար, կարևորելով այս հարցի շուրջ ՄԱԿ-ի ՓԳՀ-ի հետ ակտիվ և արդյունավետ համագործակցելու Գլխավոր դատախազության պատրաստակամությունը: ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Է. Բաբայանը նշել է, որ Հայաստանն առավել քան լավ է պատկերացնում փախստականի կարգավիճակի նրբությունները: «Ցավոք սման երևույթները շարունակվում են նաև այսօր: 21-րդ դարում միջազգային հանրությունը դեռևս ակնառու է լինում տեղահանումների ու ազգային արժեքների նկատմամբ վանդալիզմի դրսևորումների, որի վառ օրինակն էր Սիրիայում հայկական Դեր-Ջորի Սրբոց Նահատակաց եկեղեցու ավերումը», - նշել է Է. Բաբայանը, հա-

վելելով, որ ՀՀ դատախազությունը պատրաստ է իր լիազորությունների շրջանակներում օրինական և անաչառ լուծում տալ փախստականների հետ առնչվող խնդիրներին:



ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի ներկայացուցիչը նշել է, որ փախստականների խնդիրներն արագ կարգավորելու ՀՀ պետական մարմինների աշխատանքին իրենք արդեն իսկ ծանոթ են՝ Ադրբեջանից Հայաստան եկած և այստեղ հատատված ընտանիքի օրինակով, ինչը չի կարելի ասել հարևան պետության մասին, քանի որ հայ-ադրբեջանական սահմանը հատած հայաստանցի ընտանիքն արդեն չորս տարի է Ադրբեջանում կալանքի տակ է պահվում:

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը ընդգծել է, որ դատախազությունն այսուհետև ևս պատրաստ է համագործակցել ՄԱԿ-ի ՓԳՀ գրասենյակի հետ փախստականների իրավունքները պաշտպանելու գործում:

ԱՐԹՈՒՐ ՂԱՄԲԱՐՅԱՆ

իրավաբանական գիտությունների դոկտոր,
ՀՀ քննչական կոմիտեի նախագահի տեղակալ

ՓԱՏՏԱԲԱՆԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՄԲ ՅՈՒՅՄՈՒՆՔՆԵՐԻ ԴԱՏԱԿԱՆ ԵՎ ՆՈՏԱՐԱԿԱՆ ԴԵՊՈՆԱՅՈՒՄԸ՝ ՓԱՏՏԱԲԱՆԻ ԱՆԿԱՏՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՅ

Ապացուցման ոլորտում պաշտպանության կողմի դերակատարության բարձրացումը և մինչդատական վարույթում մրցակցության տարրերի ընդլայնումը շարունակում են հանդիսանալ քրեական դատավարության արդիական հիմնախնդիրներից: Գործնականում հաճախ է հանդիպում այն իրավիճակը, երբ պաշտպանին հայտնի է, որ անձը տիրապետում է գործի համար նշանակություն ունեցող տեղեկությունների: Այս դեպքում պաշտպանը կարող է տվյալ անձին հարցման ենթարկել, սակայն հարցման արձանագրությունն ինքնին ապացույց չէ, ուստի տվյալ անձին հայտնի տեղեկությունները քրեադատավարական ապացուցման ոլորտում օգտագործելու նպատակով պաշտպանը պետք է միջնորդի քննիչին տվյալ անձին հարցաքննել որպես վկա: Ընդ որում, պաշտպանը կարող է մասնակցել իր միջնորդությամբ կատարվող հարցաքննությանը միայն քննիչի թույլտվությամբ: Ստացվում է՝ տվյալ անձի հարցաքննությունը և դրան պաշտպանի մասնակցությունը լիովին կախված է քննիչի հայեցողությունից: Տեսության մեջ նշվում է, որ քիչ չեն այն դեպքերը, երբ պաշտպանը միջնորդում է անձին հարցաքննել որպես վկա, սակայն նա, հարցաքննվելով պաշտպանի բացակայությամբ, վերածվում է «առոչինչ» վկայի, քանի որ հարցաքննության ժամանակ վկայի հայտնած տեղեկությունները պատշաճ կերպով չեն արտացոլվում հարցաքննության արձանագրության մեջ¹: Կարծում ենք, որ նման պրակտիկայի պատճառն այն է, որ քննիչն իրավաբանորեն և հոգեբանորեն (մտածողությամբ) դեռևս շարունակում է հանդիսանալ մեղադրանքի կողմ, նրա կողմից մեղադրյալին արդարացնող ապացույցներ հավաքելու պահանջը զուտ տե-

սական դատողություն է, որը թեև ունի օրենսդրական ամրագրում (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդված), սակայն, իրավական ռեալիզմի տեսանկյունից, այն չի արտացոլվում քննչական մարմինների աշխատանքում: Քննիչների հոգեբանության և իրավամտածողության մեջ ամրապնդված է այն գաղափարը, որ նրանք կոչված են ձեռք բերելու միայն դատարանում մեղադրանք պաշտպանելու համար դատախազին անհրաժեշտ ապացույցներ: Հանրության և փաստաբանական համայնքի համար քննիչի գործառույթն ընկալվում է բնորոշվում է առավելապես մեղադրական ուղղվածությամբ: Բացառիկ են այն դեպքերը, երբ քննիչի կողմից համակողմանի քննության արդյունքում ձեռք են բերվում արդարացնող ապացույցներ, իսկ առանձին գործերով քրեական հետապնդումը դադարեցվում է միայն այն ժամանակ, երբ սպառվել են ամեն զնով մեղադրական ապացույցներ «ձեռք բերելու» եղանակները և լրացել են կալանքի առավելագույն ժամկետները: Նման դեպքերում քննիչը և դատախազը, թեև նախապես գիտակցում և կանխատեսում են քրեական հետապնդումը դադարեցնելու անխուսափելիությունը, միևնույն է շարունակում են քրեական վարույթը մինչև կալանքի ժամկետի լրանալը: Նման իրականության պայմաններում ծագում է այն իրավաչափ հարցադրումը, թե պաշտպանն ի՞նչ եղանակով պետք է քրեական դատավարություն ներմուծի իր կողմից ձեռք բերված փաստական տվյալները:

Ցուցմունքի դատական դեպոնացումը. դատավարագիտության մեջ վերջին ժամանակներում որպես պաշտպանի կողմից ձեռք բերված տվյալների դատավարականաց-

¹ Տե՛ս Маджитов А., “Депонирование доказательств защиты на стадии расследования”, <http://skachate.ru/pravo/107376 /index.html> (12.08.2014).

ման ինքնուրույն եղանակ նշվում է պաշտպանի նախաձեռնությամբ ցուցմունքների դեպոնացումը: Այսպես, Ս. Պաշինն առաջարկում է օրենսդրությամբ նախատեսել դատավորի կամ քննիչ դատավորի մոտ ապացույցների դեպոնացման ընթացակարգ²: Լ. Ա. Վոսկոբիտովան, որպես պաշտպանի կողմից հարցման արդյունքում ձեռք բերած տվյալների օրինականացման եղանակ, նշում է դատարանում ցուցմունքի դեպոնացումը: Ըստ հեղինակի՝ նախաքննության ընթացքում ցուցմունքների դատական դեպոնացումը նպատակահարմար է այն իրավիճակներում, երբ պաշտպանը, նկատի ունենալով վկայի նկատմամբ քննիչի կողմից ոչ իրավաչափ գործողություններ կատարելու կամ այլ անձի կողմից սպառնալիքներ գործադրելու իրական հնարավորությունը կամ վկայի տարիքը, վստահ չէ, որ կարող է իր վկային հրավիրել դատարան և հարցաքննել նրան: Ցուցմունքի դատական դեպոնացումը հնարավորություն է տալիս պաշտպանին ձեռք բերել դատավարական ապացույց, որի օրինականացման համար չի պահանջվում լրացուցիչ քննչական գործողությունների կատարում³:

ԵԱԳԿ–ի կողմից 2010 թվականին Դուշանբեյում կազմակերպված համաժողովի մասնակիցների կողմից նշվում է, որ փաստաբաններին պետք է տրամադրել քննիչից անկախ եղանակով ապացույց հավաքելու դատավարական հնարավորություն: Նախաքննության ընթացքում կողմերի հավասարության սկզբունքը կպահպանվի, եթե փաստաբանը հնարավորություն ունենա ապացույց հավաքել, այդ թվում՝ վկայի և փորձագետի ցուցմունքները դատարանում դեպոնացնելու եղանակով: Ցուցմունքների դատական դեպոնացումը փաստաբաններին հնարավորություն է տալիս քննչական մարմնից անկախ իրականացնել ապացույց հավաքելու իրավունք, որն առավելապես միտված է ընդունելու պաշտպանի դատավարական հակառակորդի կեցվածք⁴:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 42-րդ գլխում ամրագրված է ցուցմունքների դատական դեպոնացման ինստիտուտը: Նախագծով ցուցմունքի դատական դեպոնացումը կատարվում է քննիչի կամ վարույթի մասնավոր մասնակցի միջնորդությամբ՝ դատաքննությանը ներկայանալու հնարավորություն չունենալու կամ դատաքննության ընթացքում իրավաչափորեն ցուցմունք չտալու հիմնավոր ենթադրության պարագայում այդ անձից ցուցմունքի ստացման պատշաճությունն ապահովելու նպատակով⁵: Ինչպես նկատում ենք, Նախագրծով քրեական վարույթի մասնավոր մասնակցին, այդ թվում՝ պաշտպանին հնարավորություն է տրված ինքնուրույն նախաձեռնել ցուցմունքի դատական դեպոնացման գործընթաց:

Փաստաբանի նախաձեռնությամբ ցուցմունքների դեպոնացման ինստիտուտի ներդրումը կնպաստի մինչդատական վարույթում մրցակցության տարրերի զարգացմանը, կամրապնդի ապացույց ձեռք բերելու ոլորտում

² Տե՛ս Пашин С., "Болевые точки уголовного процесса (общий анализ)", <http://www.hrights.ru/text/b22/Chapter3%202.htm> (13.08.2014).

³ Տե՛ս Воскобитова Л. А., "Состязательность: две концепции участия адвоката в доказывании/Теория уголовного процесса: состязательность: монография" / под ред. Н.А. Колоколова. Ч. 1. – М.: Юристинформ, 2013. с. 291.

⁴ Տե՛ս Экспертный Форум по уголовному правосудию для Центральной Азии. Итоговый отчет. 17-18 июня 2010 г. Душанбе, Таджикистан. с. 4, 14.

⁵ Դատավարական օրենսդրության մեջ «դեպոնացում» եզրույթն առաջին անգամ օգտագործվել է ՀՀ վարչական դատավարության մոր օրենսգրքում, որի 74-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ այն դեպքում, երբ հայցադիմումին կից փաստաթղթերը ծավալուն են կամ դրանք դժվար է պատճենահանել, հայցվորը պատասխանողին և երրորդ անձանց հայցադիմումի հետ ուղարկում է ծանուցում, որ նշված փաստաթղթերը դրանց ծանոթանալու նպատակով դեպոնացվելու են վարչական դատարանում: Նույն օրենսգրքի 78-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծելիս վարչական դատարանն անդրադառնում է նաև փաստաթղթերին ծանոթանալու նպատակով դրանք վարչական դատարանում դեպոնացնելու վերաբերյալ կողմի միջնորդությանը և այն անհիմն համարելու դեպքում կարող է կայացնել սույն օրենսգրքի 79-րդ հոդվածով նախատեսված որոշումը: Եթե դասական իմաստով ապացույցի դեպոնացումը նպատակ է հետապնդում ապացույցն ապահովել, քանի որ այն դատարան ներկայացնելն անհնարին է կամ բարդ, ապա վարչական դատավարությունում ապացույցի դեպոնացումն ունի այլ նշանակություն: Այս ոլորտում ապացույցի դեպոնացումը չի կապվում այն հետազայում դատարան ներկայացնելու անհնարինության կամ բարդության հետ: Վարչական դատարանում դեպոնացվում են միայն փաստաթղթերը, քանի որ դրանք ծավալուն են կամ բարդ է պատճենահանել և ներկայացնել պատասխանողին կամ երրորդ անձին: Վարչական դատավարությունում ապացույցը դեպոնացնելու արդյունքում հայցվորն ազատվում է փաստաթղթերը պատճենահանելու և մյուս կողմին ներկայացնելու պարտականությունից, փաստաթղթերը պահվում են դատարանում, իսկ պատասխանողը կամ երրորդ անձն հնարավորություն են ստանում դրանց ծանոթանալ դատարանում:

պաշտպանի ինքնուրույնությունը և կմեղմի քննիչից և դատախազից պաշտպանի կախվածությունը: Ցուցմունքի դեպոնացումը համդիսանում է քննիչի ու դատախազի հայեցողությունից անկախ և պաշտպանության կողմի նախաձեռնությամբ ձեռք բերված տվյալների դատավարականացման ինքնուրույն եղանակ: Դատարանը չի համդիսանում մեղադրանքի կողմ և ցուցմունքների դատական դեպոնացման դեպքում կարող է ապահովել քրեական հետապնդման մարմնի և պաշտպանի համար հավասար հնարավորություն:

Ի տարբերություն քննիչի աշխատասենյակում՝ վերահսկողությունից դուրս իրականացվող հարցաքննությանը, դատական նիստերի դահլիճում պաշտպանի միջնորդությամբ իրականացվող հարցաքննության և ցուցմունքի դեպոնացման դեպքում դատարանը կապահովի վկայի կողմից ամբողջական տվյալների ներկայացումը և այդ տեղեկությունների ամբողջական արձանագրումը, ինչպես նաև կերաշխավորվի ցուցմունքը կամավոր ներկայացնելու հանգամանքը:

Ցուցմունքի դատական դեպոնացման դեպքում հարցաքննությունը թեև իրականացնում է քննիչը, սակայն արդար դատաքննության իրավունքից բխում է, որ այս ընթացակարգում պետք է կիրառվի արդար դատաքննության այն չափորոշիչը, որի համաձայն առաջինը հարցեր է տալիս այն կողմը, ով նախաձեռնել է տվյալ հարցաքննությունը: Պաշտպանի նախաձեռնությամբ ցուցմունքների դատական դեպոնացման դեպքում էապես սահմանափակվում է պաշտպանի տված հարցերը հանելու և այն անպատասխան թողնելու քննիչի հայեցողությունը: Եթե ցուցմունքի դեպոնացման դեպքում պաշտպանի հարցադրման վերաբերելիության կամ թույլատրելիության հետ կապված քննիչի և պաշտպանի միջև ծագում է վեճ, ապա պաշտպանի հարցադրման իրավաչափությունը որոշում է դատարանը:

Միևնույն ժամանակ, առանձին հեղինակներ գտնում են, որ ցուցմունքների դատա-

կան դեպոնացումը չի վերացնում ապացույց հավաքելու ոլորտում քննիչի և պաշտպանի հնարավորությունների անհավասարությունը, քանի որ, նախ՝ Ղազախստանի քրեական դատավարության օրենսգրքի նախագծով (նաև ԶԶ քրեական դատավարության օրենսգրքի նախագծով) նման հնարավորություն տրված է երկու կողմին, երկրորդ՝ դեպոնացումը վերաբերում է սահմանափակ շրջանակի վկաների և տուժողների⁶: Քրեադատավարական իրավունքի զարգացման ներկայիս փուլում դատական դեպոնացումն ունի սահմանափակ կիրառություն: Այն կարող է կիրառվել միայն այն ժամանակ, երբ հիմքեր կան ենթադրելու, որ վկան կամ տուժողը հետագայում չեն կարող ներկայանալ դատարան կամ կարող են օգտվել ցուցմունք չտալու իրավունքից: Ցուցմունքների դատական դեպոնացման պրակտիկայի ամփոփման հիման վրա հետագայում հնարավոր կլինի անդրադառնալ պաշտպանների նախաձեռնությամբ ապացույցների դատական դեպոնացման այլ դրսևորումներին: Օրինակ՝ տեսության մեջ նշվում է, որ հնարավոր կլինի պաշտպանի նախաձեռնությամբ քննիչ - դատավորին ներգրավել դեպքի վայրի, առարկաների և փաստաթղթերի զննությանը: Փաստաբանների լիազորությունները դատական իշխանության հեղինակությամբ և ուժով ապահովելու համար, կարող է օրենքով ամրագրվել նաև ձեռնարկություններից, կազմակերպություններից տեղեկություններ պահանջելու համար փաստաբանի կողմից դատական կարգադրագիր ստանալու ընթացակարգ⁷:

Ցուցմունքի նոտարական դեպոնացումը. ապացույցների դեպոնացումը լայն տարածում ունի նաև նոտարական գործունեության ոլորտում: «Նոտարիատի մասին» ԶԶ օրենքի 17-րդ գլուխը կարգավորում է ապացույցների ապահովման գործընթացը, սակայն նշված օրենքում «ապացույցի դեպոնացում» հասկացությունը չի օգտագործվում⁸: Նշված օրենքի 79-րդ հոդվածի համաձայն՝ շահագրգիռ անձանց դիմումով նոտարը կատարում է

⁶ St u Kasyko B., "Реализация принципа состязательности в уголовном процессуальном законодательстве Украины и проекте УПК Казахстана. Материалы Центра исследования правовой политики." "Реформирование уголовного процесса республики Казахстан." - Алматы, 2014, с. 75.

⁷ St u Kanafin D.K., "Совершенствование правового статуса адвоката в свете разработки нового Уголовно-процессуального кодекса Республики Казахстан. Материалы Центра исследования правовой политики", "Реформирование уголовного процесса республики Казахстан". - Алматы, 2014, с. 28.

⁸ «Պետական նոտարիատի մասին» ԽՍՀՄ 1974 թվականի օգոստոսի 2-ի օրենքը նույնպես նախատեսում էր «ապացույցների ապահովումը» վերառությամբ գլուխ, որը կիրառվում էր դատական և վարչական մարմիններում գործերի առկայության դեպքում պետական նոտարներին ապահովում էին ապացույցները, եթե հիմքեր կան ենթադրելու, որ հետագայում ապացույցի ներկայացումը հնարավոր չի լինի կամ բարդ կլինի այն ներկայացնել: St u Leshenko A.I., Лещенко А.И., "Актуальные вопросы обеспечения доказательств нотариусом". "Закон", 2008, N 9.

ապացույցների ապահովում, որոնք կարող են անհրաժեշտ լինել դատարանում կամ իրավապահ մարմիններում գործ հարուցելու (ընդգրծումն իմն է) համար, եթե հիմքեր կան ենթադրելու, որ ապացույցներ ներկայացնելը հետազայում կարող է դժվարանալ կամ անհնարին դառնալ: Նոտարն ապացույցներ չի ապահովում այնպիսի գործերով, որոնք գտնվում են դատարանի վարույթում: Նույն օրենքի 80-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ապացույցների ապահովման նպատակով նոտարը հարցաքննում է վկաների, կատարում է գրավոր կամ իրեղեն ապացույցների զննում, նշանակում է փորձաքննություն, ինչպես նաև կատարում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված ապացույցների ապահովմանն ուղղված այլ գործողություններ: Ինչպես երևում է նշված նորմերից, նոտարը հարցաքննում է վկաների, եթե հիմքեր կան ենթադրելու, որ դատարան ներկայանալը հետազայում կարող է դժվարանալ կամ անհնարին դառնալ: Թեև օրենքում չի օգտագործվում «ցուցմունքի դեպոնացում» հասկացությունը, սակայն նշված իրավական կարգավորմամբ նոտարի մոտ ըստ էության դեպոնացվում է այն վկայի ցուցմունքը, ով չի կարող դատարան ներկայանալ: Նշված կարգավորումն ոչ այլ ինչ է, քան ցուցմունքի նոտարական դեպոնացում:

Արդյո՞ք «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով կարելի է ապահովել քրեադատավարական ապացույցները, արդյո՞ք կարելի է նոտարի մոտ դեպոնացնել այն անձի ցուցմունքը, ով հետազայում պետք է քրեական վարույթում հրավիրվեր որպես վկա: Նշված հարցադրումը «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքում կարգավորվում է հակասական կերպով: Այսպես, օրենքի 79-րդ հոդվածում նշված է, որ նոտարը կատարում է ապացույցների ապահովում, որոնք կարող են անհրաժեշտ լինել դատարանում կամ իրավապահ մարմիններում գործ հարուցելու համար, իսկ օրենքի 80-րդ հոդվածի 2-րդ մասում նշվում է, որ ապացույցների ապահովման դատավարական գործողություններ կատարելիս նոտարը ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան նորմերով և օժտված է օրենսգրքով նախատեսված համապատասխան լիազորություններով: Մի կողմից օրենքում նախատեսված է, որ նոտարի կողմից ապահովված ապացույցները, այդ թվում՝ դեպոնացված ցուցմունքներ-

ըր, կարող են անհրաժեշտ լինել իրավապահ մարմիններում գործ հարուցելու, այդ թվում՝ քրեական վարույթ նախաձեռնելու համար, մյուս կողմից, ապացույցների ապահովման գործընթացի իրավական հիմքերը սահմանելիս, հղում է կատարում միայն քաղաքացիական դատավարության օրենսգրքի վրա:

Բոլոր դեպքերում նոտարը կարող է ապացույցներն ապահովել, եթե դա անհրաժեշտ լինի իրավապահ մարմիններում գործ հարուցելու համար: Իրավապահ մարմիններում հարուցվում են ինչպես քրեական, այնպես էլ վարչական վարույթներ, ուստի՝ նոտարն ապացույցները կարող է ապահովել իրավապահ մարմիններում քրեական կամ վարչական վարույթ հարուցելու նպատակով:

Ո՞վ կարող է դիմել նոտարին քրեադատավարական նշանակություն ունեցող փաստական տվյալները դեպոնացնելու համար: Կանխավ նշենք, որ քրեադատավարական տեսանկյունից պետաիշխանական լիազորություններով օժտված պաշտոնատար անձինք՝ դատարանը և քրեական վարույթի հանրային սուբյեկտները (քննիչ, դատախազ, հետաքննության մարմնի աշխատակից), չեն կարող դիմել նոտարին՝ ապացույցը դեպոնացնելու նպատակով: Նախ՝ նոտարի մոտ ապացույցները կարող են դեպոնացվել մինչև դատավարական հարաբերությունների ծագումը, իսկ նշված պաշտոնատար անձինք քրեադատավարական հարաբերություններից դուրս ապացուցման հետ կապված որևէ գործողություն կատարելու իրավունք չունեն: Բացի այդ, քրեական դատավարությունում քննիչը և դատարանն իրավասու են ինքնուրույն քննչական և դատական գործողությունների միջոցով հավաքել ապացույցներ, և ոչ թե այն նոտարի մոտ դեպոնացնել: Ուստի՝ մինչև քրեադատավարական հարաբերությունների ծագումը, ապացույցները դեպոնացնելու նպատակով նոտարին կարող են դիմել քրեական դատավարության հնարավոր մասնավոր մասնակիցները՝ փաստաբանը (պաշտպանը), հանցագործության զոհը (տուժողը), ամերևույթ հանցագործության մեջ կասկածվող անձը (մեղադրյալը): Տեսության մեջ նշվում է, որ փաստաբանները հաճախ հնարավոր վկաների հարցումն իրականացնում են նոտարի մոտ ապացույցների ապահովման միջոցով⁹: Թեև «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքը հնարավորություն տալիս է իրավապահ մարմիններում գործ հարուցելու համար նոտարի մոտ դեպոնացնել վկայի ցուցմունքը, սակայն գործնա-

⁹ Տե՛ս «Теория уголовного процесса: составительность: монография» /под ред. докт. юрид. наук Н.А. Колоколова. Ч. I. – М.: Юрлитинформ, 2013. с. 289.

կանում մեզ չի հանդիպել փաստաբանի նախածեռնությամբ նոտարի մոտ դեպոնացված ցուցմունքը քրեական դատավարությունում օգտագործելու դեպք:

Ինչ վերաբերում է նոտարի կողմից ապահովված ապացույցների, այդ թվում՝ վկայի դեպոնացված ցուցմունքի ապացուցողական նշանակությամբ, ապա «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի տառացի մեկնաբանման պարագայում ստացվում է, որ նոտարի կողմից դեպոնացված ապացույցները, այդ թվում՝ դեպոնացված ցուցմունքները կարող են օգտագործվել բացառապես գործ հարուցելու համար: Կարծում ենք նոտարի կողմից դեպոնացված ապացույցների ապահովման ինստիտուտն իմաստազրկվում է, եթե նոտարի կողմից ապահովված ապացույցները կարող են օգտագործվել միայն գործ հարուցելու համար: Ուստի՝ նոտարի կողմից դեպոնացված ապացույցներն արդարադատության ոլորտում պետք է ունենան առավել լայն կիրառում. այն կարող է օգտագործվել որպես մեղադրական կամ արդարացնող ապացույց: Ասվածը հիմնավորվում է նաև այն հանգամանքով, որ «Նոտարի մասին» ՀՀ օրենքը նախատեսում է դեպոնացված ցուցմունքների արժանահավատության ապահովման առանձին երաշխիքներ, որոնք կիրառվում են նաև քրեական դատավարությունում:

1. Սուտ ցուցմունք տալու համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին նախազգուշացում: Այսպես՝ «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 80-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ նոտարը վկային և փորձագետին նախազգուշացնում է ակնհայտ սուտ ցուցմունք կամ եզրակացություն տալու և դրանք տալուց հրաժարվելու պատասխանատվության մասին: Քրեական դատավարությունում քննիչը և դատարանը նույնպես վկային նախազգուշացնում են սուտ ցուցմունք տալու համար նախատեսված պատասխանատվության մասին:

2. Հակընդդեմ հարցման (խաչաձև հարցաքննության) իրավունքի ապահովում: Նոտարի կողմից դեպոնացված ցուցմունքները քրեական դատավարությունում օգտագործելու համար վճռորոշ նշանակություն ունի ցուցմունքի նոտարական դեպոնացմանը շահագրգիռ կողմերի մասնակցության և հակընդդեմ հարցման իրավունքի իրացման հնարավորությունը: «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 80-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ նոտարն ապացույցների ապահովման ժամանակի և տեղի մասին ծանուցում է կողմերին ու շահագրգիռ անձանց, սակայն նրանց չներ-

կայանալն արգելք չէ ապացույցների ապահովման գործողություններ կատարելու համար: Ապացույցների ապահովումն առանց կողմերի ու շահագրգիռ անձանց հրավիրման կարող է կատարվել միայն անհետաձգելի կամ այնպիսի դեպքում, երբ չի կարելի որոշել, թե հետագայում ով պետք է մասնակցի գործին: Նշված դրույթով ապահովվում է շահագրգիռ անձանց կողմից նոտարի կողմից հարցաքննվող անձին խաչաձև հարցաքննելու իրավունքը: Հակընդդեմ հարցման իրավունքի ապահովումն հատկապես կարևորվում է այն դեպքերում, երբ նոտարի կողմից դեպոնացված ցուցմունքն ունի մեղադրական բնույթ: Եթե հնարավոր մեղադրյալը մինչև քրեական վարույթ նախածեռնելը հնարավորություն չունենա հարցաքննել իր դեմ վկայություն տված անձին, ապա քրեական դատավարությունում այդ ցուցմունքների օգտագործումը դառնում է խիստ վիճելի:

Գործնական նշանակություն ունի այն հարցը, թե նոտարի կողմից դեպոնացված ցուցմունքը քրեական դատավարությունում որ տեսակի ապացույցի ռեժիմով պետք է գնահատվի՝ որպես ցուցմունք, թե՛ այլ փաստաթուղթ (ըստ Նախագծի՝ արտավարությամբ փաստաթուղթ): Քրեական դատավարությունում ցուցմունքը բնորոշվում է որպես մինչդատական վարույթում կամ դատարանում դատավարական կարգավիճակ ունեցող անձի կողմից հարցաքննության (առերեսման կամ տեղում ցուցմունքների ստուգման) ընթացքում գրավոր կամ բանավոր ձևով հաղորդված և պատշաճ ձևով արձանագրված տվյալներ: Այստեղից հետևում է, որ նոտարի կողմից դեպոնացված ցուցմունքը չի կարող գնահատվել որպես քրեադատավարական ցուցմունք, քանի որ՝ ա) քրեադատավարական ցուցմունքը տրվում է մինչդատական կամ դատական վարույթի ընթացքում, իսկ դատավարական հարաբերություններից դուրս քրեադատավարական ցուցմունք չի կարող ձևավորվել, մինչդեռ նոտարն անձի ցուցմունքը դեպոնացնում է մինչև քրեական վարույթի նախածեռնելը, բ) ցուցմունք է տալիս դատավարական կարգավիճակ ունեցող անձը՝ վկա, տուժող, մեղադրյալ, փորձագետ, իսկ նոտարի մոտ ցուցմունք տված անձը չունի դատավարական կարգավիճակ, օրինակ՝ հանցագործության զոհը, գ) ցուցմունքը ձեռք է բերվում քննչական գործողության արդյունքում, իսկ նոտարը քննչական գործողություններ կատարելու իրավասություն չունի: Ուստի, կարծում ենք նոտարի կողմից դեպոնացված ցուցմունքը քրեական դատավարությունում

պետք է գնահատվի որպես այլ փաստաթուղթ, քանի որ այն ձևավորվել է քրեական վարույթից դուրս և բավարարում է արտավարութային փաստաթղթին ներկայացվող պահանջներին: Նոտարի կողմից դեպոնացված ցուցմունքը դատավարականացվում է վարույթն իրականացնող մարմնի կողմից զննվելու և որպես այլ փաստաթուղթ (արտավարութային փաստաթուղթ) ճանաչելու և վարույթի նյութերին կցելու եղանակով:

Այսպիսով, ապացույցների դեպոնացումն

այն դատավարական միջոցն է, որը կարող է նպաստել ապացուցման ոլորտում փաստաբանների ինքնուրույնությանը: Դատավարագիտության և օրենսդրության հետագա խնդիրն է գտնել այն արդյունավետ ուղիները, որոնք հնարավորություն կտան ընդլայնել մինչդատական վարույթում դեպոնացման ինստիտուտի կիրառման ոլորտը, որը կընդգրկի ինչպես ցուցմունքների, այնպես էլ այլ ապացույցների դեպոնացումը:

ԳՈՒ ՄԻՐԶՈՅԱԼ

Երևանի պետական համալսարանի քրեական իրավունքի ամբիոնի
ասպիրանտ, ՀՀ ազգային անվտանգության ծառայության
քննչական վարչության քննիչ, կապիտան

**ՄԱՔՍԱՆԵՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆ ԸՍՏ ՀՀ
ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍՊՐՈՒԹՅԱՆ**

«Մաքսանենգություն» (իտալերեն՝ «contraband», այսինքն՝ «contra» – ընդդեմ և «band» – կառավարական հրամանագիր) եզրույթը հայտնի է մարդկությանն անհիշելի ժամանակներից: Ներկայումս աշխարհի գրեթե բոլոր երկրներում այն հասկացվում է որպես որոշակի սահմանով (պետական կամ մաքսային) ապրանքների, արժեքների կամ այլ առարկաների ապօրինի տեղափոխում: Ընդ որում, 18–19-րդ դարերում տվյալ հասկացությունն արդեն ոչ միայն արտացոլվել է մաքսային տարբեր փաստաթղթերում, այլև առավել կոնկրետացվել և հստակեցվել են դրա ձևակերպումները: Սակայն պատմությունը վկայում է, որ ժամանակի ընթացքում մաքսավորների համար ավելի ու ավելի դժվար է դառնում հանրորեն վտանգավոր այդ երևույթի դեմ պայքարելը: Ավելին, ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մաքսանենգությամբ հիմնականում զբաղվում են ոչ միայն համարձակ և տաղանդավոր, այլև օրենքներին ու իրավակարգն ապահովողների հոգեբանությանը քաջատեղյակ մարդիկ¹:

Մաքսանենգության բովանդակության վերլուծությանն անցնելուց առաջ անհրաժեշտ է նշել, որ այն (կամ դրա առանձին դրսևորումները), որպես հանցագործություն, նախատեսված է աշխարհի գրեթե բոլոր երկրների քրեական օրենքներով: Բանն այն է, որ տվյալ արարքը ոտնձգում է ոչ միայն կոնկրետ պետության կամ միջազգային հանրության տնտեսական շահերի, այլև հասարակական անվտանգության և բնակչության առողջության դեմ (երբ մաքսանենգության առարկա են հանդիսանում թմրամիջոցները, զենքը, ռադիոակտիվ նյութերը և նման այլ ապրանքները):

Հայաստանի Հանրապետությունում մաքսանենգության համար քրեական պատասխանատվություն է սահմանված ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 215-ով, որը նախատեսված է օրենսգրքի գլուխ 22-ում («Տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունները»): Տվյալ հանցագործության հիմնական անմիջական օբյեկտը մաքսային սահմանով ապրանքաշրջանառության իրականացումը, ինչպես նաև պետական բյուջե մաքսային տուրքերի և այլ գանձումների մուտքը կարգավորող հասարակական հարաբերություններն են: Որպես լրացուցիչ օբյեկտ կարող են հանդիսանալ, օրինակ՝ հասարակական անվտանգությունը, բնակչության առողջությունը, մարդու կյանքը, առողջությունը, սեփականությունը, պետական ծառայության շահերը և այլն²:

Քննարկվող հանցագործության առարկաները տարբերակված են և սահմանված ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 215-ի տարբեր մասերով: Մասնավորապես, նշված հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության առարկա են համարվում ապրանքները, մշակութային և այլ արժեքները: Նույն հոդվածի 2-րդ մասը պատասխանատվություն է սահմանում թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների, խիստ ներգործող, թունավոր, թունավորող, ռադիոակտիվ նյութերի, ռազմական նշանակության արտադրանքի, նման արտադրանք չհամարվող պայթուցիկ նյութերի և սարքերի, զենքի, բացի ողորկափող որսորդական իրազենից և դրա փամփուշտներից, միջուկային, քիմիական, կենսաբանական կամ զանգվածային ոչնչացման այլ տեսակի զենքի, երկակի նշանակության ապրանքների ռազմավարական տեսակետից կարևոր հումքային ապրանքների կամ մշակութային արժեքների մաքսանենգության համար, որոնց տեղափոխու-

¹ Տե՛ս Некрасова Т.А., “Понятие контрабанды. Содержание, состав преступления, его анализ, а также способы совершения” // Известия Южного федерального университета. Технические науки, 2003. Т. 34, № 5, с. 272.
² Տե՛ս “Уголовное право Российской Федерации. Особенная часть: Учебник”/Под ред. Б.В.Здравомыслова. М., 1999, с. 218, Ветров Н. И. “Уголовное право. Особенная часть: Учебник.” М., 2000, с. 205.

մը կարգավորվում է հատուկ կանոններով:

Վերոհիշյալ հոդվածի 1-ին մասով նախատեսված առարկաների կապակցությամբ պետք է նշել, որ դրանց էությունը պարզաբանվում է ՀՀ մաքսային օրենսգրքով: Վերջինիս հոդված 2-ի («Օրենսգրքում օգտագործվող հիմնական հասկացությունները») «ա» կետի համաձայն՝ ապրանքներ են համարվում ՀՀ մաքսային սահմանով տեղափոխվող բոլոր տեսակի առարկաներն ու իրերը, այլ գույքը, այդ թվում՝ արժույթը, արժույթային արժեքները, էլեկտրական, ջերմային և այլ տեսակի էներգիան, փոխադրամիջոցները, բացառությամբ ՀՀ մաքսային սահմանով ուղևորների և ապրանքների միջազգային տեղափոխման նպատակով օգտագործվող փոխադրամիջոցների, այդ թվում՝ բեռնարկղների (կոնտեյներների) և այլ օժանդակ փոխադրամիջոցների:

Մշակութային արժեքների էությունը բացահայտվում է «Մշակութային արժեքների արտահանման և ներմուծման մասին» Հայաստանի Հանրապետության 2004 թվականի դեկտեմբերի 6-ի օրենքով: Մասնավորապես, նշված օրենքի հոդված 3-ի («Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները») համաձայն՝ մշակութային արժեքներ են համարվում մարդկային հասարակության կենսագործունեության արգասիք համարվող առարկաները և ստեղծագործությունները, որոնք, անկախ ստեղծման ժամանակից, ունեն հնագիտական, ազգագրական, պատմական, կրոնական, գեղարվեստական, գիտական կարևոր նշանակություն: Օրենքը սահմանում է նաև «մշակութային նշանակության առարկաներ» հասկացությունը՝ այդպիսիք համարելով մարդկային հասարակության կենսագործունեության արգասիք համարվող առարկաները, ներառյալ՝ համարանիշային (սերիական) արտադրության (պարբերաբար կամ խմբաքանակներով արտադրվող) կամ զանգվածային արտադրության առարկաները, ինչպես նաև ստեղծագործությունները, որոնք, սակայն, անկախ ստեղծման ժամանակից, մշակութային արժեք չեն ներկայացնում:

«Մշակութային արժեքների արտահանման և ներմուծման մասին» ՀՀ օրենքի հոդված 4-ով սահմանված են մշակութային արժեքների հետևյալ տեսակները՝

1) պատմական, ներառյալ՝ ժողովրդի կյանքի հիշարժան դեպքերի, հասարակության և պետության զարգացման, գիտության և ճարտարագիտության պատմության, ինչպես նաև նշանավոր մարդկանց (պետական, քաղաքական, հասարակական, մշակութային գոր-

ծիչների, ազգային հերոսների) կյանքին ու գործունեությանն առնչվող առարկաներ, ընտանեկան մասունքներ:

2) հնագիտական հետազոտություններից և պեղումներից ստացված գտածոներ, ինչպես նաև հողային, շինարարական, հողաբարելավման և այլ աշխատանքների ժամանակ հայտնաբերված պատմահնագիտական առարկաներ:

3) գեղարվեստական արժեքներ, ներառյալ՝

ա) ամբողջովին կամ մասամբ ձեռքով արված պատկերներ և նկարներ՝ կատարված ցանկացած միջոցով ու նյութերով,

բ) ցանկացած նյութից պատրաստված քանդակներ,

գ) ցանկացած նյութից արված գեղարվեստական հորինվածքներ և համակցված կառուցվածքներ (մոնտաժներ),

դ) պաշտամունքային նշանակություն ունեցող գեղարվեստորեն ձևավորված առարկաներ, ներառյալ՝ սրբապատկերներ (իկոնաներ),

ե) փորագրություններ, փորագրանկարի արտատպություններ, վիմատպություններ և դրանց այլ դրոշմվածքաձևեր,

զ) կիրառական արվեստի գործեր, ներառյալ՝ ապակույց, կավից, փայտից, երկաթից, ոսկրից, գործվածքեղենից և այլ նյութերից պատրաստված գեղարվեստական իրեր,

է) ավանդական ժողովրդական արհեստների ստեղծագործություններ:

4) պատմական և գեղարվեստական, ներառյալ՝ զրական հուշարձանների բաղկացուցիչ մասեր և բեկորներ:

5) ձեռագիր և տպագիր զրական, պատմագիտական, պաշտամունքային արժեք ներկայացնող հուշարձանների բաղկացուցիչ մասեր և բեկորներ:

6) առանձին կամ հավաքածու հնագույն գրքեր, փաստաթղթեր:

7) հազվագյուտ ձեռագրեր և փաստաթղթային հուշարձաններ, արխիվներ, ներառյալ՝ ծայնագրման, տեսագրման, լուսանկարչական և կինոարխիվներ:

8) երաժշտական գործիքներ:

9) առանձին կամ հավաքածու փոստային նամականիշեր, այլ նամականիշային նյութեր:

10) հնագույն առարկաներ՝ գործիքներ, կավագործական իրեր, մակագրություններ, դրամներ, շքանշաններ, մեդալներ, կնիքներ, զենք, ինչպես նաև հավաքածուի համար նախատեսված այլ առարկաներ:

11) բուսական, կենդանական և երկրա-

բանական հավաքածուներ և նմուշներ, համաբաժանության, անատոմիայի և հնէաբանության համար հետաքրքրություն ներկայացնող առարկաներ.

12) կահույք, գորելեններ, գորգեր, կարպետներ, տարազներ.

13) ազգագրական, մարդաբանական նյութեր և բանահյուսական նյութերի անտիպ ժողովածուներ, հնատիպ հրատարակություններ.

14) ճարտարապետական և կոթողային արվեստի հուշարձանների բաղկացուցիչ մասեր և բեկորներ.

15) այլ առարկաներ, ներառյալ՝ պատմական, գեղարվեստական, գիտական կամ մշակութային այլ նշանակություն ունեցող պատճեններ, որոնք, որպես պատմության և մշակույթի հուշարձանների վերցված են պետական պահպանության:

Նույն օրենքի հոդված 5-ի համաձայն՝ ՀՀ տարածքից արգելվում է արտահանել մշակութային ժառանգության առանձնակի արժեքավոր մշակութային արժեքները, անկախ դրանց ստեղծման ժամանակից կամ պատկանելությունից: Մշակութային այն արժեքները, որոնք գրանցված են կամ ենթակա են գրանցման մշակութային արժեքների պահպանական ցուցակում, ենթակա են արտահանման միայն այն դեպքում, երբ Հայաստանի Հանրապետությունը մեկամյա ժամկետում չի օգտվում դրանց գնման նախապատվության իրավունքից: ՀՀ պետական պահոցներում՝ թանգարաններում, արխիվներում, գրադարաններում, մշտապես պահպանվող մշակութային արժեքների արտահանումն արգելվում է, բացառությամբ ժամանակավոր արտահանման դեպքերի:

ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 215-ի 1-ին մասով նախատեսված «այլ արժեքների» իմաստով պետք է հասկանալ այն իրերը, առարկաները, որոնք ապրանքներ և մշակութային արժեքներ չեն համարվում, սակայն ենթակա են մաքսային հսկողության (այդ թվում՝ մշակութային նշանակության առարկաները և այլն):

ՀՀ քրեական օրենսգրքի քննարկվող հոդվածի 1-ին մասով նախատեսված մաքսանենգության օբյեկտիվ կողմը դրսևորվում է ՀՀ մաքսային սահմանով ապրանքները, մշակութային կամ այլ արժեքները տեղափոխելով, որն իրականացվում է հետևյալ արարքներից որևէ մեկի կատարմամբ՝ 1) առանց մաքսային հսկողության, 2) մաքսային հսկողությունից թաքցնելով, 3) մաքսային և այլ փաստաթղթե-

րը խաբեությամբ օգտագործելով կամ դրանց մասին ճշգրիտ տեղեկությունները սահմանված ձևով չհայտարարագրելով կամ ոչ իր անվամբ հայտարարագրելով: Ընդ որում, նույն հոդվածի 1-ին մասի համաձայն, մաքսանենգության նշված տեսակները հանցագործություն են համարվում եթե դրանք կատարվել են խոշոր չափերով:

Այսպիսով, անհրաժեշտություն է առաջանում պարզաբանելու «ՀՀ մաքսային սահման», «ապրանքների, մշակութային կամ այլ արժեքների տեղափոխում», «առանց մաքսային հսկողության», «մաքսային հսկողությունից թաքցնել», «մաքսային և այլ փաստաթղթերը խաբեությամբ օգտագործել կամ դրանց մասին ճշգրիտ տեղեկությունները սահմանված ձևով չհայտարարագրել կամ ոչ իր անվամբ հայտարարագրել», ինչպես նաև «մաքսանենգության խոշոր չափ» հասկացությունները:

ՀՀ մաքսային օրենսգրքի հոդված 5-ի («Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքը և մաքսային սահմանը») համաձայն՝ ՀՀ մաքսային տարածքն ընդգրկում է Հայաստանի Հանրապետության ցամաքային, ջրային և օդային տարածքը: ՀՀ տարածքում կարող են լինել ազատ մաքսային պահեստներ և ազատ տնտեսական գոտիներ, որոնց տարածքները համարվում են Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքից դուրս գտնվող տարածքներ: ՀՀ մաքսային տարածքի, ազատ մաքսային պահեստների և ազատ տնտեսական գոտիների սահմանագծերը համարվում են Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանը:

Փաստորեն, ՀՀ մաքսային սահման են համարվում ՀՀ մաքսային տարածքի, ազատ մաքսային պահեստների և ազատ տնտեսական գոտիների սահմանագծերը: Հետևաբար, ՀՀ «մաքսային սահման» և «պետական սահման» հասկացությունները չեն նույնանում: Մաքսային սահմանն առկա է, օրինակ՝ «Զվարթնոց» օդանավակայանում, որը ոչ մի կերպ չի առնչվում ՀՀ պետական սահմանի հետ³:

Մաքսային օրենսգրքի հոդված 2-ի «գ» կետի համաձայն՝ մաքսային սահմանով տեղափոխում է համարվում ապրանքների և տրանսպորտային միջոցների ներսրբերում ՀՀ մաքսային տարածք կամ դուրսհանումն այդ տարածքից՝ ներառյալ միջազգային փոստային առաքումները, խողովակաշարային և էլեկտրահաղորդման գծերով փոխադրումները:

³ Տե՛ս «ՀՀ քրեական իրավունք: Հատուկ մաս» Եր.: ԵՊՀ հրատ., 2011, էջ 483:

Նույն հոդվածի «ժգ») կետի դրույթներին համապատասխան՝ մաքսային հսկողություն է համարվում ՀՀ օրենքներով և այլ իրավական ակտերով, ինչպես նաև միջազգային պայմանագրերով ամրագրված դրույթների պահպանման նպատակով մաքսային մարմինների կողմից իրականացվող միջոցառումների համակարգը:

ՀՀ մաքսային օրենսգրքի հոդված 200-ի դրույթներին համապատասխան՝ ՀՀ մաքսային սահմանով ապրանքների կամ արժեքների տեղափոխումը համարվում է մաքսային հսկողությունը շրջանցելով կատարված, եթե դրանց տեղափոխումն իրականացվում է մաքսային մարմնի գտնվելու վայրից դուրս (այսինքն՝ առանց մաքսային կետեր մտցնելու, շրջանցիկ, գաղտնի ճանապարհներով, որոնք չեն վերահսկվում մաքսային մարմինների կողմից):

Նույն օրենսգրքի հոդված 201-ի դրույթներին համապատասխան՝ ՀՀ մաքսային սահմանով ապրանքների կամ արժեքների տեղափոխումը համարվում է մաքսային հսկողությունից թաքցնելով կատարված, եթե դրանց տեղափոխումն իրականացվում է գաղտնարանների օգտագործմամբ, ապրանքների հայտնաբերումը դժվարացնող այլ եղանակներով կամ ապրանքներին այլ տեսք տալու միջոցով:

ՀՀ մաքսային օրենսգրքի հոդված 202-ի համաձայն՝ ապրանքների կամ արժեքների՝ մաքսային և այլ փաստաթղթերը խաբեությամբ օգտագործելով տեղափոխումը դրսևորվում է մաքսային հսկողություն անցնելիս ապրանքների կամ արժեքների տեղափոխման համար հիմք հանդիսացող այնպիսի փաստաթղթեր ներկայացնելով, որոնք կեղծված են, ստացված են անօրինական ճանապարհով, պարունակում են ոչ հավաստի տեղեկություններ, տրված են այլ ապրանքների կամ արժեքների համար: Այս առումով պետք է համաձայնել «ՀՀ քրեական իրավունք: Հատուկ մաս» բուհական դասագրքի հեղինակների հետ, ովքեր կարծում են, որ թե՛ մաքսային, թե՛ քրեական օրենսգրքերում առավել նպատակահարմար կլիներ օգտագործել ոչ թե «մաքսային և այլ փաստաթղթեր», այլ «մաքսային կամ այլ փաստաթղթեր» արտահայտությունը: Բանն այն է, որ առաջին ձևակերպումը մաքսանենգության ժամանակ ենթադրում է թե՛ մաքսային, թե՛ այլ փաստաթղթերի օգտագործում,

իսկ մյուս ձևակերպման պարագայում քրեական պատասխանատվությունը հնարավոր կլինի ինչպես մաքսային, այնպես էլ մաքսային չհամարվող այլ փաստաթղթերի խաբեությամբ օգտագործման դեպքերում⁴:

ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 215-ի 1-ին մասում նկարագրված մաքսանենգության հանցակազմի առկայության համար, ինչպես արդեն նշվել է, պարտադիր է, որ այն կատարվի խոշոր չափերով: Խոշոր չափերի հասկացությունը տրված է քննարկվող հոդվածի 5-րդ մասում, որի համաձայն՝ քննարկվող հանցանքը համարվում է խոշոր չափերով կատարված, եթե տեղափոխված ապրանքների կամ առարկաների արժեքը գերազանցում է հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը, բացառությամբ ակցիզային դրոշմանիշներով դրոշմավորման ենթակա չդրոշմավորված կամ չվերադրոշմավորված ապրանքներ տեղափոխելու դեպքի, երբ խոշոր չափ է համարվում հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկը գերազանցող գումարը (արժեքը): Հետևաբար, եթե ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 215-ի 1-ին մասում նշված ապրանքների կամ արժեքների ընդհանուր արժեքը պակաս է հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկից (կամ երկուհարյուրապատիկից), ապա պատասխանատվությունն առաջանում է ՀՀ մաքսային օրենսդրությամբ նախատեսված կարգով: Մասնավորապես, նման իրավախախտումների ոչ հանցավոր տեսակների համար պատասխանատվություն է նախատեսում ՀՀ մաքսային օրենսգրքի գլուխ 37-ը («Մաքսային կանոնների խախտումները և պատասխանատվությունը դրանց համար»), որը ներառում է հոդվածներ 189-ից 204-ը:

Մասնագիտական գրականության մեջ որոշակի տարակարծություններ կան մաքսանենգության ավարտման պահի կապակցությամբ: Այս առումով գրեթե բոլոր քրեագետները համակարծիք են, որ մաքսանենգությունը ձևական հանցակազմով նախատեսված հանցագործություն է, որն ավարտված է համարվում ապրանքները, մշակութային կամ այլ արժեքները երկրի մաքսային սահմանով տեղափոխելու պահից⁵: Միևնույն ժամանակ, սա-

⁴ Տե՛ս «ՀՀ քրեական իրավունք: Հատուկ մաս» եր.: ԵՊՀ հրատ., 2011, էջ 483:

⁵ Տե՛ս նաև: Соболев В., Душкин С., "Контрабанда: вопросы квалификации, специальной конфискации и хранения предметов преступления" // Законность, 1999, № 7, с. 33, "Уголовное право России. Особенная часть: Учебник" / Под ред. А.И. Рагога, М., 1996, с. 193-194, Лопашенко Н.А., "Преступления в сфере экономической деятельности: понятие, система, проблемы квалификации". Саратов, 1997, с. 218 և այլն:

կայն, մասնագետները տարբեր կերպ են մեկնաբանում «մաքսային սահմանով տեղափոխում» հասկացությունը, որի հստակ պարզաբանումը սկզբունքային նշանակություն ունի մաքսանենգության ավարտված և չավարտված փուլերի սահմանազատման տեսանկյունից⁶:

Մասնավորապես, որոշ հեղինակներ, պարզաբանելով «տեղափոխում» եզրույթը, հետևաբար՝ նաև մաքսանենգության ավարտման պահը, հիմք են ընդունում մաքսային օրենսդրության համապատասխան դրույթը (ՀՀ մաքսային օրենսգրքի հոդված 2-ի «գ» կետը), որի համաձայն՝ մաքսային սահմանով տեղափոխում են համարվում ապրանքների և տրանսպորտային միջոցների ներսերումը տվյալ պետության մաքսային տարածք կամ դուրսահանումն այդ տարածքից՝ ներառյալ միջազգային փոստային առաքումները, խողովակաշարով և էլեկտրահաղորդման գծերով փոխադրումները:⁷

Սյուսները համարում են, որ մաքսային օրենսդրությունը տվյալ պարագայում կիրառելի չէ: Մաքսանենգությունն ավարտված համարելու առումով, նրանց կարծիքով, բոլոր դեպքերում անհրաժեշտ է, որ ապրանքները, նյութական կամ այլ արժեքները փաստացի հատեն մաքսային սահմանը⁸: Այս առումով հատկանշական է, որ ՀՀ մաքսային օրենսգրքի հոդված 2-ի «գ» կետի համաձայն՝ ներմուծման կամ արտահանման (տեղափոխման) պահ է համարվում մաքսային սահմանն ապրանքների և տրանսպորտային միջոցների հատելու պահը:

Այլ կերպ ասած, ՀՀ մաքսային օրենսդրությամբ ապրանքները, նյութական կամ այլ արժեքները մաքսային սահմանով տեղափոխելու պահը հստակ սահմանված է: Հետևաբար, ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 215-ի տառացի մեկնաբանությունից կարելի է եզրակացնել, որ մաքսանենգությունն ավարտ-

վում է, երբ ապրանքները կամ արժեքները ֆիզիկապես տեղափոխվում են ՀՀ մաքսային սահմանով: Ելնելով դրանից՝ մաքսանենգությունը պետք է համարել ձևական հանցակազմով նախատեսված հանցագործություն⁹:

Անհրաժեշտ է նշել նաև, որ քննարկվող հանցագործության սուբյեկտիվ կողմը բնութագրվում է միայն ուղղակի դիտավորությամբ, իսկ դրա սուբյեկտ կարող է հանդիսանալ 16 տարին լրացած մեղսունակ ֆիզիկական անձը:

ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 215-ի երկրորդ մասով, ինչպես արդեն նշվել է, պատասխանատվություն է նախատեսված հատուկ ապրանքների կամ արժեքների մաքսանենգության համար, որոնց տեղափոխումը կարգավորվում է հատուկ կանոններով: Ներկայացված ապրանքների և արժեքների բնորոշումները, իրենց հերթին, սահմանված են համապատասխան օրենսդրական և ենթօրենսդրական ակտերով:

ՀՀ քրեական օրենսգրքի քննարկվող հոդվածի 3-րդ մասով նախատեսված են մաքսանենգության մի շարք ծանրացնող հանգամանքներ: Դրանք են՝ նույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքների կատարումը՝

1) պաշտոնատար անձի կողմից պաշտոնական դիրքն օգտագործելով,

2) մաքսային հսկողության որոշակի ձևերից ազատված անձի կողմից կամ մաքսային հսկողության սահմանված ձևերից ազատված առանձին ապրանքների կամ տրանսպորտային միջոցների՝ մաքսային սահմանի վրայով տեղափոխման համար լիազորված անձի կողմից,

3) մաքսային հսկողություն իրականացնող անձի նկատմամբ բռնություն գործադրելով:

Ինչ վերաբերում է մաքսանենգությունը պաշտոնատար անձի կողմից պաշտոնական

⁶ Տե՛ս նաև՝ Коземаслов Д. В., "Контрабанда: Диссертация на соиск. учен. степ. канд. юрид. наук". Екатеринбург, 2002, с. 69.

⁷ Տե՛ս, օրինակ՝ "Уголовное право. Особенная часть: Учебник для вузов" / Под. ред. И.Я. Козаченко, З.А. Незнамовой. М., 1997, с. 316-317, Родина Л.Ю., "Ответственность за контрабанду: социально-экономические, криминологические и уголовно-правовые аспекты: Автореф. дис. на соиск. учен. степ. канд. юрид. наук". М., 1998, с. 80, Кочубей М. А., "Уголовная ответственность за преступления в сфере таможенной деятельности: Автореф. дис. на соиск. учен. степ. канд. юрид. наук", Ростов н/д, 1998, с. 168, Шмаров И., Мельникова Ю., Устинов Т., "Ответственность за контрабанду и нарушение таможенного законодательства" // Российская юстиция, 1995, № 1, с. 36 և այլն:

⁸ Տե՛ս, օրինակ՝ Сучков Ю. И., "Ответственность за контрабанду по уголовному кодексу Российской Федерации 1996 г" // Юридическая практика: Информационный бюллетень Центра права специального юридического факультета СПб. ГУ, 1996, № 4 (7), с. 72, Волженкин Б. В., "Экономические преступления". СПб., 1999, с. 183, "Уголовное право Российской Федерации. Особенная часть: Учебник" / Под ред. Г. Н. Борзенкова, В. С. Комиссарова, М., 1997, с. 280 և այլն:

⁹ Տե՛ս «ՀՀ քրեական իրավունք: Հատուկ մաս» Եր.: ԵՊՀ հրատ., 2011, էջ 484:

դիրքն օգտագործելով կատարելուն, ապա պետք է նշել, որ քրեագետները միակարծիք չեն նաև այս հարցի կապակցությամբ: Մասնավորապես, Վ.Վ. Լուկյանովը պնդում է, որ մաքսանենգության տվյալ տեսակի սուբյեկտ են համարվում այն պաշտոնատար անձինք, ում պաշտոնական դիրքը կամ հնարավորություն է տալիս նրանց մաքսային սահմանով տեղափոխելու ապրանքները, նյութական կամ այլ արժեքներն առանց մաքսային հսկողության (օրինակ՝ դիվանագետները, կառավարական պատվիրակությունների անդամները և այլն), կամ էապես հեշտացնում է այդ առարկաների ապօրինի տեղափոխումը (օրինակ՝ նավապետները, օդանավի հրամանատարները, երկաթուղային շարժակազմերի պետները և այլն), ինչպես նաև այն պաշտոնատար անձինք, ովքեր հսկողություն են իրականացնում մարդկանց, բեռների կամ փոխադրամիջոցների տեղափոխման նկատմամբ (օրինակ՝ մաքսակետերի պետները, նրանց տեղակալները, սահմանապահ հսկիչ կետերի պատասխանատուները և այլն)¹⁰:

Վ.Մ. Կոլդաևը, հակառակը, կարծում է, որ տվյալ դեպքում չի կարելի տարածական մեկնաբանության ենթարկել հատուկ սուբյեկտի հասկացությունը: Հետևաբար, ըստ նրա, մաքսանենգության դեպքում պաշտոնական դիրքն օգտագործող պաշտոնատար անձ պետք է համարել միայն մաքսային մարմինների, սահմանապահ զորքերի և դիվանագիտական ծառայությունների պաշտոնատար անձանց, ովքեր առանց հսկողության մաքսային սահմանով որոշակի առարկաներ տեղափոխելու իրավունք ունեն¹¹:

Բ.Վ. Վոլժենկինի կարծիքով մաքսանենգության տվյալ ծանրացնող հանգամանքի իմաստով պետք է հասկանալ բոլոր այն պաշտոնատար անձանց, ում պաշտոնական դիրքը, ծառայողական լիազորությունները կարող են օգտագործվել մաքսային սահմանով որոշակի առարկաներ տեղափոխելու համար: Հետևաբար, նրանց թվին կարող են դասվել ինչպես մաքսային հսկողություն իրականացնող, այնպես էլ այլ պաշտոնատար անձինք, ովքեր հնարավորություն ունեն օգտագործելու իրենց պաշտոնական դիրքը մաքսանենգություն կատարելու համար: Միևնույն ժամանակ, առևտրային կամ այլ կազմակերպութ-

յուններում կառավարչական գործառույթներ իրականացնողները, ըստ հեղինակի, քրեական օրենսգրքի իմաստով պաշտոնատար անձ չեն համարվում, ուստի՝ չեն կարող հանդիսանալ մաքսանենգության քննարկվող տեսակի սուբյեկտ¹²:

Մեր կարծիքով, մաքսանենգության տվյալ տեսակի սուբյեկտ կարող են հանդիսանալ բոլոր այն պաշտոնատար անձինք, ովքեր, ի տարբերություն այլ քաղաքացիների, օժտված են մաքսային սահմանով ապրանքներ, նյութական կամ այլ արժեքներ կամ այլ առարկաներ տեղափոխելու հետ կապված լիազորություններով կամ արտոնություններով: Բանն այն է, որ պաշտոնական դիրքն օգտագործելու և մաքսային սահմանով համապատասխան առարկաներն անարգել, բայց ապօրինի տեղափոխելու միջև պետք է պատճառական կապ լինի: Ուստի՝ կառավարչական գործառույթներ իրականացնող այն անձինք, ովքեր օժտված չեն վերոհիշյալ լիազորություններով կամ արտոնություններով, մաքսանենգության տվյալ տեսակի սուբյեկտ համարվել չեն կարող:

Մաքսանենգությունը համարվում է մաքսային հսկողության որոշակի ձևերից ազատված անձի կողմից կամ մաքսային հսկողության սահմանված ձևերից ազատված առանձին ապրանքների կամ տրանսպորտային միջոցների՝ մաքսային սահմանի վրայով տեղափոխման համար լիազորված անձի կողմից կատարված, երբ հանցանքը կատարվել է ՀՀ մաքսային օրենսգրքով կամ այլ օրենսդրական ակտերով նման արտոնություններ ունեցող անձանց կողմից: Մաքսային հսկողության որոշակի ձևերից ազատված անձանց թվին են դասվում, օրինակ՝ օտարերկրյա պետության դիվանագիտական ներկայացուցչության ղեկավարը, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչները, օտարերկրյա պատվիրակությունների անդամները և այլն: Մասնավորապես, ՀՀ մաքսային օրենսգրքի հոդված 171-ի 2-րդ մասի համաձայն՝ օտարերկրյա պետության դիվանագիտական ներկայացուցչության ղեկավարի, ներկայացուցչության դիվանագիտական անձնակազմի անդամների, նրանց հետ համատեղ ապրող նրանց ընտանիքների անդամների ուղեբեռն ազատվում է զննումից, եթե հիմքեր չկան ենթադրելու, որ դա պարունակում է անձնական օգտագործ-

¹⁰ Стів Лукьянов В. В., "Уголовно-правовая характеристика контрабанды и ее предупреждение: Автореф. дис. на соиск. учен. степ. канд. юрид. наук". Л., 1982, с. 16-17.

¹¹ Стів Колдаев В. М., "Ответственность за контрабанду" // Советская юстиция, 1973, № 9, с. 10.

¹² Стів Волженкин Б. В., "Экономическая преступления". СПб., 1999, с. 183, "Уголовное право Российской Федерации. Особенная часть: Учебник" / Под ред. Г. Н. Борзенкова, В. С. Комиссарова, М., 1997, с. 190.

ման համար չնախատեսված ապրանքներ, կամ այնպիսի ապրանքներ, որոնց ներմուծումը և արտահանումն արգելված է օրենսդրությամբ կամ կարգավորվում է կարանտինային և այլ հատուկ կանոններով:

Մաքսանենգությունը համարվում է մաքսային հսկողություն իրականացնող անձի նկատմամբ բռնություն գործադրելով կատարված, երբ վերջինիս նկատմամբ կիրառվել է ֆիզիկական կամ հոգեբանական բռնություն: Ընդ որում, ֆիզիկական բռնություն ասելով, պետք է հասկանալ մաքսային հսկողություն իրականացնող անձին հարվածելը, ծեծելը, առողջությանը թեթև, միջին ծանրության կամ ծանր վնաս հասցնելը և այլն: Եթե նշված անձը դիտավորությամբ զրկվում է կյանքից, ապա արարքը պետք է որակվի ՉՀ քրեական օրենսգրքի հոդված 104-ի 2-րդ մասի 2-րդ (սպանության ծանրացնող այլ հանգամանքների բացակայության պարագայում) կետով:

ՉՀ քրեական օրենսգրքի հոդված 215-ի 4-րդ մասում նախատեսված է մաքսանենգության առավել վտանգավոր տարատեսակը՝ հիշյալ հոդվածի 1-ին կամ 2-րդ կամ 3-րդ մասով նախատեսված արարքի կատարումը կազմակերպված խմբի կողմից: Նշված ծանրացնող հանգամանքի էությունը բացահայտվում է ՉՀ քրեական օրենսգրքի հոդված 41-ի 3-րդ մասում, որի համաձայն՝ հանցանքը համարվում է կազմակերպված խմբի կողմից կատարված, եթե դա կատարվել է այնպիսի անձանց կայուն խմբի կողմից, ովքեր նախապես միավորվել են մեկ կամ մի քանի հանցանքներ կատարելու համար:

Կազմակերպված խումբը, ինչպես հայտնի է, նախնական համաձայնությամբ հանցակցության առավել վտանգավոր տեսակն է, որի անդամները մասնագիտացված են և միմյանց հետ գտնվում են կայուն հարաբերության մեջ: Սրա պարտադիր հատկանիշը կայունությունն է, որի տակ պետք է հասկանալ՝

- 1) խմբի անդամների միջև կայուն կապը և հանցագործության նախապատրաստության կամ կատարման առանձնահատուկ մեթոդների կիրառումը,
- 2) խմբի անդամների անխախտ համաձայնությունը,
- 3) կազմակերպվածության բարձր աստիճանը (հանցագործությունների կատարման մանրակրկիտ պլանավորումը, խմբի անդամների միջև դերերի հստակ բաժանումը և այլն),
- 4) հանցավոր գործունեությամբ տևական

ժամանակով զբաղվելու նպատակը (որպես կանոն, կազմակերպված խումբը ստեղծվում է մի շարք հանցանքներ կատարելու նպատակով, սակայն չի բացառվում, որ այն ստեղծվի մեկ այնպիսի հանցագործության համար, որը երկարատև և մանրակրկիտ նախապատրաստություն է պահանջում)¹³:

Չարկ է նշել նաև, որ մաքսանենգությունը համարվում է կազմակերպված խմբի կողմից կատարված ինչպես համակատարման, այնպես էլ այն դեպքերում, երբ դրա օբյեկտիվ կողմն իրականացնում է խմբի թեկուզ մեկ անդամը: Այլ կերպ ասած, այստեղ համակատարումը պարտադիր չէ:

ՉՀ քրեական օրենսգրքի հոդված 215-ի 6-րդ մասում նախատեսված է, որ նշված հոդվածում գույք են համարվում մաքսանենգության առարկաները: Այս նորամուծությունը չի կարելի հաջողված համարել: Բանն այն է, որ տվյալ ձևակերպումն էականորեն սահմանափակում է գույքի բռնագրավման (լրացուցիչ պատժատեսակի) կիրառման հնարավորությունը մաքսանենգության գործերով: Ստացվում է, որ մաքսանենգության առարկաներից ստացված եկամուտները և այլ օգուտները բռնագրավման ենթակա չեն, քանզի բռնագրավվել կարող են միայն մաքսանենգության առարկաները¹⁴:

Այսպիսով, ՉՀ քրեական օրենսգրքի հոդված 215-ի դրույթներին համապատասխան, մաքսանենգությունը տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործություն է, որի հիմնական անմիջական օբյեկտը մաքսային սահմանով ապրանքաշրջանառության իրականացումը, ինչպես նաև պետական բյուջե մաքսային տուրքերի և այլ գանձումների մուտքը կարգավորող, իսկ լրացուցիչը՝ հասարակական անվտանգությունը, բնակչության առողջությունը, մարդու կյանքը, առողջությունը, սեփականությունը, պետական ծառայության շահերը ապահովող հասարակական հարաբերություններն են: Տվյալ հանցագործության առարկաները տարբերակված են և սահմանված ՉՀ քրեական օրենսգրքի վերոհիշյալ հոդվածի տարբեր մասերով:

Մաքսանենգության օբյեկտիվ կողմը բնութագրվում է ՉՀ մաքսային սահմանով ապրանքները, մշակութային կամ այլ արժեքները՝ խոշոր չափերով, ինչպես նաև թմրամիջոցները, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերը և դրանց պրեկուրսորները, խիստ ներգործող, թունավոր, թունավորող, ռադիոակտիվ

¹³ Տե՛ս նաև՝ «ՉՀ քրեական իրավունք: Ընդհանուր մաս»: Եր.: ԵՊՅ հրատ., 2012, էջեր 277-283:

¹⁴ Տե՛ս «ՉՀ քրեական իրավունք: Չատուկ մաս» Եր.: ԵՊՅ հրատ., 2011, էջ 486:

նյութերը, ռազմական նշանակության արտադրանքը, նման արտադրանք չհամարվող պայթուցիկ նյութերը և սարքերը, զենքը, բացի ուղորկափող որսորդական հրազենից և դրա փամփուշտներից, միջուկային, քիմիական, կենսաբանական կամ զանգվածային ոչնչացման այլ տեսակի զենքը, երկակի նշանակության ապրանքները, ռազմավարական տեսակետից կարևոր հուճքային ապրանքները կամ նշակության չարժեքները (անկախ չափից) տեղափոխելով, որն իրականացվում է 1) առանց մաքսային հսկողության, 2) մաքսային հսկողությունից թաքցնելով կամ 3) մաքսային և այլ փաստաթղթերը խաբեությամբ օգտագործելով կամ դրանց մասին ճշգրիտ տեղեկությունները սահմանված ձևով չհայտարարագրելով կամ ոչ իր անվամբ հայտարարագրելով:

Քրեագետները տարբեր կերպ են մեկնաբանում «մաքսային սահմանով տեղափոխում» հասկացությունը, որի հստակ պարզաբանումը սկզբունքային նշանակություն ունի մաքսանենգության ավարտված և չավարտված փուլերի սահմանազատման տեսանկյունից: ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 215-ի տառացի մեկնաբանությունից հետևում է, որ մաք-

սանենգությունն ավարտվում է, երբ ապրանքները կամ արժեքները ֆիզիկապես տեղափոխվում են ՀՀ մաքսային սահմանով:

Մաքսանենգության սուբյեկտիվ կողմը բնութագրվում է միայն ուղղակի դիտավորությամբ, իսկ դրա սուբյեկտ կարող է հանդիսանալ 16 տարին լրացած մեղսունակ ֆիզիկական անձը:

Քրեագետները միակարծիք չեն նաև մաքսանենգությունը պաշտոնատար անձի կողմից պաշտոնական դիրքն օգտագործելով կատարելու հարցի կապակցությամբ: ՀՀ քրեական օրենսգրքի իմաստով, մաքսանենգության տվյալ տեսակի սուբյեկտ կարող են հանդիսանալ բոլոր այն պաշտոնատար անձինք, ովքեր, ի տարբերություն այլ քաղաքացիների, օժտված են մաքսային սահմանով ապրանքներ, նյութական կամ այլ արժեքներ կամ այլ առարկաներ տեղափոխելու հետ կապված լիազորություններով կամ արտոնություններով: Ուստի՝ կառավարչական գործառույթներ իրականացնող այն անձինք, ովքեր օժտված չեն նման լիազորություններով կամ արտոնություններով, մաքսանենգության տվյալ տեսակի սուբյեկտ համարվել չեն կարող:

ԱՐՄԵՆ ՂՈՒԿԱՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ին կից Քրեաբանության կիրառական հիմնախնդիրների գիտահետազոտական կենտրոնի գիտական խորհրդատու, ՀՀ ոստիկանության Ինֆորմացիոն կենտրոնի պետ, իրավաբանական գիտությունների թեկնածու

ԵՐԵՄԻԱ ԱՍՏՏՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ին կից Քրեաբանության կիրառական հիմնախնդիրների գիտահետազոտական կենտրոնի պետ

ՍԵՌԱԿԱՆ ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԵՌԱԿԱՆ ԱՉԱՏՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՅԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ, ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ, ՇԱՐԺԸՆԹԱՅԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ (ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԻՄԱՆ ՎՐԱ)

Հանցավորության տարածվածության, նրա հանրային վտանգավորության աստիճանի գնահատման համար անհրաժեշտ է իրականացնել հանցավորության վերաբերյալ պաշտոնական վիճակագրության տվյալների վերլուծություն: Այն թույլ է տալիս գնահատել հանցավորության և դրա առանձին տեսակների վիճակը, մակարդակը, կառուցվածքը, զարգացման միտումները տեղի և ժամանակի կոնկրետ պայմաններում, հանցավորության դեմ պայքարի և դրա կանխարգելման գործում իրականացվող միջոցառումների արդյունավետությունը, հարաբերականորեն ճշմարտացի պատկերացում կազմելու հանցավորության ապագա վիճակի մասին և դրա հիման վրա հանցավորության կանխման արդյունավետ միջոցներ մշակել:

Հանցավորության ընդհանուր կառուցվածքում սեռական բնույթի հանցագործություններն այդքան էլ մեծ թիվ չեն կազմում, սակայն անզամ այդ հանգամանքը չի կարող անհանգստություն չառաջացնել, քանի որ այդ հանցագործություններն ունեն մեծ հանրային վտանգավորություն, հանգեցնում են անդառնալի հետևանքների, պատճառում են հոգեբանական, բարոյական և ֆիզիկական վնասներ: Իր վտանգավորությամբ հատկապես առանձնանում է բռնաբարությունը, սակայն պետք է նշել, որ առանց բռնության կատարվող սեռական հանցագործությունները պա-

կաս վտանգավոր չեն, հատկապես երբ դրանք ուղղված են անչափահասների դեմ:

Սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործությունները նախատեսված են ՀՀ քրեական օրենսգրքի գլուխ 18-ով և ներառում են 138-142 հոդվածները:

Գրականության մեջ սեռական հանցագործություններն ընդունված է դասակարգել ըստ արարքի կատարման եղանակների բնութագրական առանձնահատկությունների՝ բռնությամբ կատարվող և առանց բռնության կատարվող սեռական հանցագործությունների¹: Բռնությամբ կատարվող սեռական հանցագործություններ են համարվում բռնաբարությունը (ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 138), սեքսուալ բնույթի բռնի գործողությունները (ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 139), սեքսուալ բնույթի գործողություններին հարկադրելը (ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 140):


Առանց բռնության կատարվող սեռական հանցագործությունների մեջ են մտնում սեռական հարաբերությունը 16 տարին չլրացած անձի հետ կամ սեքսուալ բնույթի գործողություններ կատարելը 16 տարին չլրացած անձի նկատմամբ (ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 141) և անառակաբար գործողությունները (ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 142):

ՀՀ պաշտոնական վիճակագրության համաձայն ՀՀ-ում նկատվում է անձի սեռական

¹ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության Քրեական իրավունք: Հատուկ մաս» /Երևանի պետ. համալս. - Եր.: ԵՊՀ իրատ., 2009, էջ 239:

անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործությունների աճ: 2004 թվականի համեմատ 2013 թվականին սեռական բնույթի հանցագործությունները բացարձակ թվերով աճել են 2.3 անգամ: Ստորև ներկայացված գրաֆիկական պատկերը պարզորոշ կերպով ցույց է տալիս սեռական բնույթի հանցագործությունների աճի միտումը:

գործություններով քրեական գործ հարուցվում է հիմնականում տուժողի դիմումի հիման վրա: Իսկ սեռական հանցագործություններից տուժածները հազվադեպ են դիմում իրավապահ մարմիններին: Հիմնականում տուժողներն ամաչում են կատարված արարքից, չեն ցանկանում, որ հասարակությունն իմանա այդ մասին, քանի որ հաճախ այդպիսի



Ինչպես տեսնում ենք պատկերում, նշված հանցատեսակների չնչին նվազում նկատվել է միայն 2007 թվականին, սակայն պետք է արձանագրել, որ սեռական բնույթի հանցագործություններն ունեն կայուն աճի միտում:


Պետք է նշել, որ սեռական բնույթի հանցագործությունների տեսակարար կշիռն այդքան էլ մեծ չէ հանցավորության ընդհանուր զանգվածում: Սակայն սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործությունները հատուկ տեղ են զբաղեցնում մարդու դեմ ուղղված հանցագործությունների շարքում և ունեն բավականին մեծ հանրային վտանգավորություն, որոնց շարքում իրենց վտանգավորությամբ հատկապես առանձնանում են բռնաբարությունը և սեքսուալ բնույթի բռնի գործողությունները: Այս հանցատեսակներն ունեն իրենց կրիմինալոգիական առանձնահատկությունները²: Սեռական բնույթի հանցագործություններն օժտված են բավականին բարձր լատենտայնությամբ: Հանցագործությունների վերաբերյալ պաշտոնական վիճակագրության մեջ արտացոլվում է նրանց շատ քիչ մասը միայն: Այստեղ էական նշանակություն ունի այդ հանցագործություններով քրեական գործի հարուցման առանձնահատկությունները: Բանն այն է, որ, որպես կանոն, այս հանցա-

ոտնձգություններից տուժածներն արժանանում են հասարակության անդամների բացասական վերաբերմունքին, այս կամ այն կերպ պիտակավորվում են: Հաճախ էլ տուժողները հանցագործի ֆիզիկական, հոգեբանական և այլ ճնշումների ու սպառնալիքների ազդեցության տակ վախենում են դիմել իրավապահ մարմիններին: Լատենտայնության ձևավորման գործում էական դեր է խաղում նաև տուժողների անվստահությունն իրավապահ մարմինների նկատմամբ, գործի արդարացի լուծման հավատի բացակայությունը: Վերջին տարիներին կատարված որոշ կրիմինալոգիական հետազոտություններ ցույց են տալիս, որ հանցագործություններից տուժողների գրեթե կեսը տարբեր պատճառներով չեն դիմում իրավապահ մարմիններին³: Հաշվի առնելով այս ամենը՝ կարելի է փաստել, որ սեռական բնույթի հանցագործությունների ծավալներն իրականում ավելի շատ են, քան արտացոլված է պաշտոնական վիճակագրությունում:

Սեռական հանցագործությունների կառուցվածքի ուսումնասիրությունը վկայում է, որ, պաշտոնական վիճակագրության համաձայն, վերջին տարիներին գերակշռում են առանց բռնության կատարվող սեռական հանցագործությունները: Եթե 2005 թվականին բռնությամբ կատարվող սեռական հանցագոր-

² Տե՛ս «Криминология: Учебник для вузов» / Под общ. ред. д. ю. н., проф. А. И. Долговой. – 2-е изд. - М.- 2003 с. 505.

³ Տե՛ս «Հանցավորության վիկտիմոլոգիական գործոնները ՀՀ-ում» / Ա. Գաբուլյան և ուրիշ-եր.: Վան Արյան, 2013, էջ 58:




ծությունները կազմել են ընդհանուր սեռական հանցագործությունների 62.7%-ը, ապա 2013 թվականին դրանց տեսակարար կշիռը սեռական հանցագործությունների զանգվածում կազմել է 32.7%: Գրեթե երկու անգամ աճել է առանց բռնության կատարվող սեռական հանցագործությունների տեսակարար կշիռը: Այսպես, եթե 2005 թվականին առանց բռնության կատարվող սեռական հանցագործությունները կազմել են սեռական հանցագործությունների ընդհանուր զանգվածի 37.3%-ը, ապա 2013 թվականին դրանց մասնաբաժինն աճել է՝ հասնելով 67.3%-ի (**Գրաֆիկ 2**):

Այստեղ նկատելի է հետաքրքիր մի օրինաչափություն. սեռական հանցագործությունների ընդհանուր զանգվածում բռնությամբ կատարվող արարքների նվազմանը զուգահեռ համաձայնորեն աճում է առանց բռնության կատարվող արարքների մասնաբաժինը: Սակայն պետք է նշել, որ իրականում բռնությամբ կատարվող սեռական հանցագործությունները չեն նվազել, այլ սակարոկ է պայմանավորված լինել վերջին տարիներին առանց բռնության կատարվող սեռական հանցագործությունների կտրուկ աճով: Մյուս կողմից նման վիճակը կարելի է բացատրել բռնաբարությունների և բռնությամբ կատարվող այլ սեռական հանցագործությունների լատենտայնության մակարդակի աճով:

Սեռական բնույթի հանցագործությունների զանգվածում իր տեսակարար կշռով գերակշռում են ԴԴ քրեական օրենսգրքի 141 հոդվածով նախատեսված արարքները, այն է՝ սեռական հարաբերությունը 16 տարին չլրացած անձի հետ կամ 16 տարին չլրացած ան-

ձի նկատմամբ սեքսուալ բնույթի գործողություններ կատարելը: Մասնավորապես դրանք աճել են 14.1%-ով: Եթե 2004 թվականին 16 տարին չլրացած անձի հետ սեքսուալ բնույթի գործողություններ կատարելը սեռական հանցագործությունների ընդհանուր զանգվածում կազմել է 41.7%, ապա 2013 թվականին՝ 55.8%: Ինչպես արդեն նշեցինք, սեռական հանցագործությունների կառուցվածքում նկատվում է բռնությամբ կատարվող սեռական ոտնձգությունների տեսակարար կշռի նվազում:

Սեռական հանցագործությունների կառուցվածքում բռնաբարությունների (ԴԴ քրեական օրենսգրքի 138 հոդված) ամենաբարձր ցուցանիշը եղել է 2005 թվականին՝ 45.1%, որը 2013 թվականին նվազել է մինչև 16.8%, իսկ սեքսուալ բնույթի բռնի գործողությունները (ԴԴ քրեական օրենսգրքի 139 հոդված) 2004 թվականի 22.9%-ի համեմատ 2013 թվականին կազմել են 13.3%: Իսկ ինչ վերաբերում է սեքսուալ բնույթի գործո-



ղություններին հարկադրելուն (ԴԴ քրեական օրենսգրքի 140 հոդված) և անառակաբար գործողություններին (ԴԴ քրեական օրենսգրքի 142 հոդված), ապա դրանց տեսակարար կշիռը սեռական հանցագործությունների ընդհանուր զանգվածում բավական քիչ տոկոս է կազմում (**Գրաֆիկ 3**):

Սեռական հանցագործությունների կառուցվածքում նկատելի է ևս մեկ ուշագրավ միտում. բռնաբարությունների աճին զուգահեռ նկատվում է սեքսուալ բնույթի բռնի գործողությունների նվազում և հակառակը, այն տարիներին, երբ նկատվում է սեքսուալ բնույթի բռնի գործո-

ղությունների տեսակարար կշռի աճ, նվազում է բռնաբարությունների մասնաբաժինը:


Թեև սեռական հանցագործությունների կառուցվածքում նկատվում է բռնությամբ կատարվող արարքների որոշակի նվազում, սակայն իրական նվազում տեղի չի ունենում: Պաշտոնական վիճակագրության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ սեռական հանցագործությունները, ինչպես բռնությամբ կատարվող, այնպես էլ առանց բռնության կատարվող, բացարձակ թվերով նկատելիորեն աճում են: Այսպես, բռնաբարության ցուցանիշները թեև վերջին տարիներին թվացյալ կայուն վիճակում են, որոշակի տարիներին աննշան նվազման կամ աճի ֆոնի վրա, սակայն նախորդ տարիների ցուցանիշների համեմա-

կարծիքով այս հանցագործությունների աճին մեծապես նպաստել է նաև վաղ ամուսնությունների դեպքերը, ինչը պարզ է դառնում նաև սեռական հանցագործությունների գործերով կայացված դատական ակտերի ուսումնասիրությունից: Բանն այն է, որ շատ են այնպիսի դեպքերը, երբ առանց ՔԿԱԳ մարմիններում գրանցվելու տեղի է ունենում ամուսնություն 16 տարին չլրացած անձի հետ, որի արդյունքում 33 քրեական օրենսգրքի 141 հոդվածի հատկանիշներով հարուցվում է քրեական գործ:

33 քրեական օրենսգրքի 142 հոդվածով նախատեսված անառակաբար գործողությունները ևս դրսևորում են աճի միտում: Եթե 2004 թվականին գրանցվել է 4 դեպք, ապա 2013 թվականին դրանց թիվը դարձել է 13

(Գրաֆիկ 5):


Պաշտոնական վիճակագրության համաձայն մեր հանրապետությունում խմբի կազմով կատարված հանցագործությունների տեսակարար կշիռը սեռական հանցագործությունների ընդհանուր զանգվածում համեմատաբար քիչ է: Որոշակի տարիներին նույնիսկ ընդհանրապես բացակայում են խմբի կազմով կատարված արարքները: Պետք է նշել, որ



2004-2013 թվականներին խմբի կազմով կատարվել են միայն բռնությամբ կատարվող սեռական հանցագործություններ՝ բռնաբարությամբ:

2004-2013 թվականներին խմբի կազմով կատարվել են միայն բռնությամբ կատարվող սեռական հանցագործություններ՝ բռնաբարությամբ:

տությունը վկայում է, որ դրանց դինամիկան դրսևորում է ալիքաձև զարգացման միտում: Աճել են նաև սեքսուալ բնույթի բռնի գործողություններ կատարելու դեպքերը՝ եթե 2005 թվականին գրանցվել է 6 այդպիսի դեպք, ապա 2013 թվականին դրանց թիվը հասել է 15-ի: Ընդ որում, խոսքը գրանցված հանցագործությունների մասին է, մինչդեռ այս հանցագործություններն, ինչպես արդեն նշել ենք, օժտված են լատենտայնության բավականին բարձր մակարդակով: Այս հանցագործությունների դինամիկ փոփոխությունների պատկերը ներկայացված է **Գրաֆիկ 4-ում**:



Աճի միտում են դրսևորում նաև առանց բռնության կատարվող սեռական հանցագործությունները: Զգալիորեն աճել են հատկապես 16 տարին չլրացած անձի հետ սեռական հարաբերություն ունենալու կամ սեքսուալ բնույթի գործողություններ կատարելու դեպքերը: Օրինակ՝ 2004 թվականին գրանցվել է 20 այսպիսի հանցավոր արարք, իսկ 2013 թվականին դրանց թիվը կազմել է 63: Մեր

յուն և սեքսուալ բնույթի բռնի գործողություններ, որոնց տեսակարար կշիռը նշված տարիներին տատանվել 6-25%-ի միջակայքում՝ ամենաբարձր ցուցանիշը կազմելով 2008 թվականի բռնաբարությունները՝ 29%, սեքսուալ բնույթի բռնի գործողությունները՝ 50%:

Հաճախակի են դարձել նախկինում դատապարտված անձանց կողմից սեռական հանցագործություններ կատարելու դեպքերը: Ընդ որում նախկինում դատապարտվածների կողմից առավել հաճախ կատարվում են բռնությամբ կատարվող սեռական հանցագործությամբ:

յուններ: Այսպես, 2004 թվականին բռնությամբ կատարվող սեռական հանցագործություններ կատարած անձանց զանգվածում նախկինում դատապարտվածները կազմել են 18.8%, առանց բռնության կատարվող սեռական հանցագործություններ կատարած անձանց զանգվածում՝ 16.7%, իսկ 2013 թվականին համապատասխանաբար 16.7% և 3.8%: Պետք է նշել, որ վերջին տարիներին նկատվում է նախկինում դատապարտվածների տեսակարար կշռի նվազում, ընդ որում բռնությամբ կատարվող սեռական հանցագործությունների պարագայում այդ նվազումը շատ քիչ տոկոս է կազմում: Օրինակ՝ 2004 թվականին (18.8%) համեմատ բռնությամբ կատարվող հանցագործություններում նախկինում դատապարտվածների տեսակարար կշիռը 2013 թվականին (16.7%) նվազել է ընդամենը 2.1%-ով: Իսկ որոշակի տարիներին նախկինում դատապարտվածների տեսակարար կշիռը նույնիսկ եղել է բավականին բարձր, օրինակ՝ 2007 թվականին բռնաբարություններ և սեքսուալ բնույթի բռնի գործողություններ կատարողների զանգվածում նրանց տեսակարար կշիռը կազմել է 40%:


Սեռական հանցագործությունների ընդհանուր զանգվածում նախկինում դատապարտվածների տեսակարար կշռի հարաբերակցությունը ներկայացված է **Գրաֆիկ 6-ում**:

ներում պատկերը կարող է փոխվել:

Հանցավոր վարքագծի վրա ազդող եական գործոններից է ալկոհոլի և թմրամյութերի չարաշահումը: Կրիմինալոգիական հետազոտությունները վկայում են, որ շատ երկրներում, օրինակ՝ Ռուսաստանում, սպանությունների, առողջությանը ծանր վնաս պատճառելու, բռնաբարությունների և բռնությամբ կատարվող այլ ծանր հանցագործությունների 60-70%-ը կատարվում են հարբածության վիճակում: Այսպիսի հանցագործություններ կատարողների շրջանում մեծանում է նաև թմրամուլների թիվը⁴:

Այս առումով մեր հանրապետությունում վիճակը կարծես թե հուսադրող է, քանի որ հանցանքը կատարելու պահին ալկոհոլային հարբածության վիճակում կամ թմրամյութերի ազդեցության տակ գտնվողների տեսակարար կշիռը մեծ չէ (2004-2013 թվականներին ալկոհոլի կամ թմրամյութերի ազդեցության տակ գտնվողների առավելագույն ցուցանիշը բռնաբարությունների դեպքում գրանցվել է 2005 թվականին՝ 12%, սեքսուալ բնույթի բռնի գործողությունների դեպքում 2009 թվականին՝ ընդամենը 6%):

Որոշակի հետաքրքրություն են ներկայացնում սեռական հանցագործություններ կատարած անձանց սոցիալ-ժողովրդագրական առանձնահատկությունները: Այսպես, անդրա-



Ինչպես երևում է **Գրաֆիկ 6-ից**, նախկինում դատապարտվածների տեսակարար կշիռը նվազել է՝ 2004 թվականին 26.5%-ից 2013 թվականին հասնելով 7.9%-ի: Սակայն, այստեղ խոսքը վերաբերում է բոլոր սեռական հանցագործություններին միասին վերցրած, սակայն առանձին վերցրած հանցատեսակ-

ըղանալով սեռական բնույթի հանցագործություններ կատարած անձանց տարիքային կազմի ուսումնասիրությանը, ըստ պաշտոնական վիճակագրության, ակնհայտ է դառնում, որ իրենց հանցավոր ակտիվությամբ առավելապես առանձնանում են 18-24 տարիքային խմբի ներկայացուցիչները: Եթե 2004 թվականին սե-

⁴ Տե՛ս «Криминология: Учеб. пособие»/Г. И. Богуш и др., под общ. ред. д. ю. н., проф. Н. Ф. Кузнецовой –М.: Проспект, 2009. с. 111.

ռական հանցագործությունների համար պատասխանատվության ենթարկվածների միայն 33.8% էին 18-24 տարիքային խմբի ներկայացուցիչ, ապա 2013 թվականին այդ ցուցանիշը հասել է 52.6%-ի: Բավականին բարձր է նաև 25-29 և 30-49 տարիքային խմբերի ներկայացուցիչների տեսակարար կշիռը սեռական հանցագործություններ կատարած անձանց զանգվածում: 2004 թվականին համապատասխանաբար 26.5% և 27.9%, իսկ 2013 թվականին՝ 22.4% և 13.2%:

Սեռական բնույթի հանցագործություններ կատարած անձանց տարիքային առանձնահատկություններն ուսումնասիրելիս բացահայտվեցին որոշ օրինաչափություններ: Այսպես, օրինակ՝ պաշտոնական վիճակագրության համաձայն, ամառական բնակավայրերում գործողություններ (ՀՀ քրեական օրենսգրքի 142 հոդված) առավել հաճախ կատարվում են միջին և բարձր տարիքի անձանց (30-49 և 50-ից բարձր) կողմից, իսկ 16 տարին չլրացած անձի հետ սեռական հարաբերությունը կամ սեքսուալ բնույթի գործողությունների կատարումը (քրեական օրենսգրքի 141 հոդված)՝ 18-24 տարիքային խմբին պատկանող անձանց կողմից:

Ընդհանրապես բռնությունն առավել բնորոշ է կրթական և զարգացման ցածր մակարդակ ունեցող, անկիրթ մարդկանց: Նրանց մոտ սեփական վարքագծի քննադատությունը թույլ է արտահայտված, ունեն սահմանափակ մտահորիզոն, պրիմիտիվ հետաքրքրություններ ու պահանջմունքներ: Նրանք իրենց ձգտումներում և ցանկություններում ավելի անզուսպ են և ավելի հակված են կոպիտ ֆիզիկական ուժ գործադրելու⁵: Հետևաբար սեռական բռնությունը ևս հաճախ պայմանավորված է ինտելեկտուալ զարգացման և կրթության ցածր մակարդակով: Այս առումով կարևոր կրիմինալոգիական նշանակություն ունի պարզել սեռական հանցագործություններ կատարած անձանց կրթության մակարդակը: Վիճակագրական տվյալների ուսումնասիրումը վկայում է, որ ՀՀ-ում սեռական բնույթի հանցագործություններ կատարած անձանց գերակշռող մասն ունի ցածր կրթական մակարդակ: Այսպես, 2004 թվականին նրանց 67.6%-ն ունեցել է միջնակարգ մասնագիտական, 25.0%-ը՝ տարրական, 2.9%-ը բարձրագույն կրթություն, իսկ 4.4%-ը ընդհանրապես կրթություն չի ունեցել, իսկ 2013 թվականին միջնակարգ մասնագիտական կրթություն ունեցողները կազմել են 69.9%, տարրական կրթություն ու-

նեցողները՝ 13.3%, բարձրագույն կրթություն ունեցողները՝ 8.4%, իսկ կրթություն չունեցողները՝ 8.4%: Ստացվում է, որ սեռական հանցագործություններ կատարած անձանց գերակշռող մասն օժտված է ցածր կրթական մակարդակով: Միևնույն ժամանակ պետք է նկատի ունենալ, որ բարձր կրթությունը դեռևս չի պայմանավորում անձի մոտ բարոյականության անհրաժեշտ մակարդակ, հատկապես՝ այլ անձանց հետ հարաբերություններում:

Էական առանձնահատկություններ ունի նաև սեռական բնույթի հանցագործություններ կատարած անձանց դասակարգումը ըստ սոցիալական վիճակի և զբաղվածության: Այս առումով պետք է նշել, որ քննարկվող կատեգորիայի անձանց 96-98%-ը գործազուրկ են, իսկ շատ չնչին մասը թոշակառու, վարձու աշխատող կամ գյուղատնտես: Որոշ տարիներին սեռական հանցագործություններ կատարողների զանգվածում գործազուրկները կազմել են 100%:

Ամփոփելով պաշտոնական վիճակագրության տվյալների ուսումնասիրությունը՝ պետք է նշել, որ անձի սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործություններն արձանագրում են աճի միտում: Սեռական հանցագործությունների կառուցվածքում նկատվում են որոշակի օրինաչափություններ: Նախ՝ նկատվում է որոշակի ծայրահեղություն. մի կողմից կարծես թե նվազում է սեռական հանցագործությունների հասարակական վտանգավորությունը, քանի որ դրանցում գնալով ավելանում է առանց բռնության կատարվող սեռական հանցագործությունները, մասնավորապես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 141 հոդվածով նախատեսված արարքները, մյուս կողմից, բացարձակ թվերով աճում են բռնաբարությունները և սեքսուալ բնույթի բռնի գործողությունների կատարումը: Այսինքն՝ կարելի է նշել, որ իրական նվազում չի արձանագրվում: Սեռական հանցագործություններ կատարողների զանգվածում նկատվում է երիտասարդների կրիմինալ ակտիվացում, ինչը բացասական սոցիալական երևույթ է և վկայում է հասարակության մեջ բարոյահոգեբանական մթնոլորտի խաթարման մասին: Բարձրանում է նաև սեռական հանցագործությունների լատենտայնության մակարդակը: Պետք է նշել, որ վերջին տարիներին աճում են անչափահասների նկատմամբ կատարվող սեռական ոտնձգությունները, ինչը խիստ անհամապատասխան է և առաջնահերթ կանխման կարիք ունի:

⁵ Տե՛ս «Криминология: Учеб. пособие» Г. И. Богуш и др., под общ. ред. д. ю. н., проф. Н. Ф. Кузнецовой –М.: Проспект, 2009. с. 111.

ՄԶԵՐ ՍԱՄԱՋԱՆՅԱԼ

իրավաբանական գիտությունների թեկնածու,
ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահի խորհրդակալ

**ՄԻԱՎՈՐՎԵԼՈՒ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ
ՍԱՀՄԱՆԱՓՈՎԱԿՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ**

(Սկիզբը՝ նախորդ համարում):

ՀՀ-ում և ՌԴ-ում միավորվելու սահմանադրական իրավունքի սահմանափակումները հնարավոր են ՀՀ և ՌԴ սահմանադրություններով նախատեսված իրավաչափ նպատակների առկայության դեպքում: Միավորվելու իրավունքի սահմանափակման իրավաչափ նպատակները զանազան մեկնաբանությունների մշտական օբյեկտ են և չունեն միանշանակ մեկնաբանություն: Այդ կապակցությամբ ստորև կդիտարկենք միավորվելու սահմանադրական իրավունքի սահմանափակման իրավաչափ նպատակները, հիմնվելով ՀՀ և ՌԴ սահմանադրությունների և մարդու իրավունքներին վերաբերող միջազգային պայմանագրերի տեքստերի, ՀՀ և ՌԴ, ինչպես նաև այլ երկրների սահմանադրական դատարանների, միջազգային դատարանների որոշումների վրա:

Միավորվելու իրավունքի սահմանափակման իրավաչափ նպատակ է պետական անվտանգությունը: Պետության պաշտպանվածությունն ազատության պահպանման կարևորագույն երաշխիքն է: Պետական անվտանգությունը բավականին ընդհանուր հասկացություն է, որի իրավաբանական բովանդակության բացահայտումը դյուրին գործ չէ:

ՀՀ Նախագահի հրամանագրով հաստատված ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունում Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության հիմնարար արժեքներն են համարվում անկախությունը, պետության և ժողովրդի պաշտպանվածությունը, խաղաղությունը և միջազգային համագործակցությունը, հայապահպանությունը և բարեկեցությունը: ՌԴ Նախագահի հրամանագրով հաստատված ՌԴ ազգային անվտանգության հայեցակարգում ՌԴ ազգային անվտանգությունը սահմանվում է, որպես անձի, հասարակության և պետության անվտանգությունն արտաքին և ներքին վտանգներից, ինչպես նաև ՌԴ բազմազգ ժողովրդի՝ որպես ինքնիշխանության կրողի և

իշխանության միակ աղբյուրի, անվտանգությունը:

Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի սահմանափակումներից շեղվելու մասին Սիրակուզյան սկզբունքների մեկնաբանությունը սահմանափակում է արտահայտվելու և միավորվելու ազատության սահմանափակումն ազգային անվտանգության նկատառումներով՝ հատուկ նշելով, որ նախ՝ ազգային անվտանգության շահերը վկայակոչելով որոշակի իրավունքների, սահմանափակմանն ուղղված միջոցառումների կիրառման հիմնավորումը հնարավոր է միայն այն դեպքում, երբ այդ միջոցները ձեռնարկվում են պետության գոյությունը, տարածքային ամբողջականությունը կամ քաղաքական անկախությունը պաշտպանելու, ուժի կամ ուժի սպառնալիքի գործադրումը բացառելու նպատակով: Երկրորդ՝ ազգային անվտանգության շահերի վկայակոչումը չպետք է պատճառ հանդիսանա կիրառելու սահմանափակումներ, որոնք նպատակ ունեն կանխելու օրենքին կամ հասարակական կարգի խախտմանն ուղղված տեղական կամ հարաբերականորեն առանձնացված բնույթի սպառնալիքները: Երրորդ՝ ազգային անվտանգությունը չպետք է որպես առիթ օգտագործվի պարտադրելու անհատակ և վիճարկելի սահմանափակումներ և կարող է վկայակոչվել միայն այն դեպքում, երբ չարաշահումների դեմ առկա են համարժեք երաշխիքներ և իրավական պաշտպանության միջոցներ: Չորրորդ՝ մարդու իրավունքների պարբերաբար խախտումները վտանգի տակ են դնում բուն պետության անվտանգությունը, միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը: Պետությունը, որը պատասխանատվություն է կրում նման խախտումների համար, չպետք է վկայակոչի ազգային անվտանգության շահերը՝ որպես ձեռնարկվող միջոցների հիմնավորում, որոնք նպատակ ունեն ճնշելու այդ խախտումների դեմ ուղղված դիմադրությունը կամ սեփական բնակչության դեմ գործադրելու ռեպրե-

սիվ միջոցներ¹: Այսպիսով՝ ցանկացած դեպքում անհրաժեշտ է ուղղակի կապ հաստատել անձի վարքագծի և պետության անվտանգության սպառնալիքի միջև²:

Ներպետական օրենսդրությունում և իրավակիրառ պրակտիկայում, ինչպես նաև իրավաբանական գրականությունում ազգային անվտանգությանը՝ որպես իրավաչափ նպատակի, հաճախ տրվում է շատ լայն մեկնաբանություն, ինչն անընդունելի է: Ազգային անվտանգության, արտահայտվելու ազատության և տեղեկատվության մատչելիության մասին, Յոհաննեսբուրգյան սկզբունքների 7-րդ, 8-րդ, 9-րդ սկզբունքների համաձայն արտահայտվելու հետևյալ օրինակները չպետք է համարվեն սպառնալիք ազգային անվտանգությանը, բացահայտ քարոզչություն՝ ուղղված կառավարության քաղաքականության կամ բուն կառավարության փոփոխությանը, պայմանով, որ նման քարոզչությունը չի պարունակում կոչեր՝ ուղղված օրենքի ուղղակի և էական խախտմանը կամ չի ստեղծում լուրջ և անմիջական սպառնալիք օրենքի ուղղակի և էական խախտման համար:

Ըստ Եվրոպական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշման՝ ժողովրդավարության համար էական նշանակություն ունի տարբեր քաղաքական ծրագրերի առաջարկման և քննարկման հնարավորությունը, ներառյալ այն ծրագրերը, որոնք վիճարկում են գործող իշխանական համակարգի գոյությունը³, կրոնական համոզմունքների, խղճի կամ դավանանքի հիմքով գորահավաքի կամ զինվորական ծառայության, կոնկրետ հակամարտության, միջազգային վեճերի կարգավորման գործադրման դեմ բողոքելը կամ քարոզելը:

Սակայն այս ամենը չի նշանակում, որ եթե տվյալ պետության տարածքում գործող որևէ միավորում վտանգում է պետական հաստատությունները, ապա իշխանությունները զուրկ են այդ հաստատությունները պաշտպանելու իրավունքից⁴: Ըստ Եվրոպական դատարանի՝ միավորումները կարող են առաջարկել փոփոխություն մտցնել պետության իրավական համակարգում երկու նախապայ-

մանների առկայության դեպքում: Առաջին՝ այդ նպատակով ձեռնարկվող միջոցները պետք է օրինական և ժողովրդավարական լինեն: Երկրորդ՝ առաջարկվող փոփոխությունները չպետք է հակասեն ժողովրդավարության հիմնարար սկզբունքներին⁵:

Միավորվելու իրավունքի սահմանափակման իրավաչափ նպատակ է հասարակական կարգի պահպանությունը: Հասարակական կարգը նույնպես ընդհանուր հասկացություն է, որին բնորոշ է որոշակի անորոշություն, սակայն այդ անորոշությունը չպետք է շահարկվի միավորվելու իրավունքի սահմանափակման արդարացնելու նպատակով: Գոյություն ունեն հասարակական կարգի հասկացության տարբեր սահմանումներ: 1985 թվականին Brokdorf-ի գործով Գերմանիայի Դաշնային սահմանադրական դատարանն անդրադարձել է «հասարակական կարգ» հասկացությանը⁶: Այս որոշման մեջ հասարակական կարգը սահմանվել է որպես չզրկված օրենքների ամբողջություն, որոնց ենթարկվելը համարվում է անօտարելի նախապայման սահմանված տարածքում մարդկանց օրինակելի համակեցության համար՝ ըստ ժամանակին գերիշխող սոցիալական և էթիկական տեսակետների: Այսպիսով՝ «հասարակական կարգ» եզրույթի ընդհանուր բովանդակությունը թույլ է տալիս դրա ոչ միանշանակ, տարածական մեկնաբանություններ, որի իմաստը փոփոխվում է ժամանակի և տարածքի մեջ:

Այսուհանդերձ, այս ամենը չի նշանակում, որ եթե տվյալ պետության տարածքում գործող որևէ միավորում վտանգում է պետական հաստատությունները, ապա իշխանությունները զուրկ են այդ հաստատությունները պաշտպանելու իրավունքից⁷: Չնայած «հասարակական կարգ» եզրույթին բնորոշ որոշակի անորոշությանը՝ հասարակական կարգին սպառնացող երևակայական ռիսկերը չպետք է միավորվելու իրավունքի սահմանափակման օրինական հիմք հանդիսանան: Հասարակական կարգը պաշտպանելու նպատակով միավորվելու իրավունքի սահմանափակման համար անհարժեշտ են ծանրակշիռ ապացույցներ⁸:

¹ Տե՛ս Сиракузские принципы толкования ограничений и отступлений от положений пакта о гражданских и политических правах.

² Տե՛ս ECtHR Fogt v. Germany, Judgment of 26 september 1995.

³ Տե՛ս ECtHR Freedom and Democracy party v. Turkey, Judgment of 8 December 1999.

⁴ Տե՛ս ECtHR Klass v. Germany, Judgment of 6 September 1978.

⁵ Տե՛ս ECtHR Yazar and Others v. Turkey, Judgment of 8 December 1999.

⁶ Տե՛ս Federal Constitutional Court (First Senate) 14 May 1985, 1 BvR 233, 341/81.

⁷ Տե՛ս ECtHR Klass v. Germany, Judgment of 6 September 1978.

⁸ Տե՛ս ECtHR United Communist party of Turkey v. Turkey, Judgment of 30 January 1998.

Ըստ ՀՀ Սահմանադրության և մարդու իրավունքների վերաբերող միջազգային պայմանագրերի՝ միավորվելու իրավունքի սահմանափակման իրավաչափ նպատակ է անկարգությունների և հանցագործությունների կանխումը: Միավորվելու իրավունքի սահմանափակումը ողջամտորեն կարող է անհրաժեշտ լինել անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու համար: Սակայն անկարգությունների և հանցագործությունների կանխումը չպետք է շահարկվի միավորվելու իրավունքի սահմանափակումներն արդարացնելու նպատակով: Անկարգությունների կամ հանցագործությունների երևակայական ռիսկերը չպետք է հանդիսանան միավորվելու իրավունքի սահմանափակման օրինական հիմք:

Միավորվելու իրավունքի սահմանափակման իրավաչափ նպատակ է բարոյականության պաշտպանությունը: Բարոյականության պաշտպանությունը՝ որպես իրավունքների և ազատությունների, այդ թվում՝ նաև միավորվելու իրավունքի, սահմանափակման իրավաչափ նպատակ, բավականին ընդհանուր հասկացություն է: Ինչը, շատերի կարծիքով անընդունելի ծավալների հայեցողություն է տրամադրում և՛ օրենսդրին, և՛ իրավակիրառողին: Այս պատճառով, մի շարք հեղինակներ կասկած են հայտնում բարոյականության պաշտպանությունը՝ որպես իրավունքների և ազատությունների սահմանափակման իրավաչափ նպատակի իրավաչափության վերաբերյալ:

Իսկապես բարոյականության վերաբերյալ չկա միատեսակ մոտեցում: Բարոյականությունը, լինելով օբյեկտիվորեն գոյություն ունեցող հասարակական երևույթ, միաժամանակ նրա բովանդակության բացահայտումը մեծապես կապված է անձանց այս երևույթի մասին սուբյեկտիվ պատկերացումներից: Բարոյականության նորմը չի կարող ամբողջությամբ բացահայտվել իրավունքում:

Կարծում ենք, որ չնայած վերոնշյալ մտավախություններին, միավորվելու իրավունքի սահմանափակումը ողջամտորեն կարող է անհրաժեշտ լինել բարոյականության պաշտպանության համար: Բարոյականության պաշտպանությունը պետք է շարունակի մնալ միավորվելու իրավունքի սահմանափակման իրավաչափ նպատակ: Իսկ հնարավոր չարաշահումներից խուսափելու համար, բարոյականության պաշտպանությանն ուղղված միավորվելու իրավունքի սահմանափակումը չպետք է վնասի այդ ազատության բուն էութ-

յանը: Որոշակի քաղաքական գաղափարախոսության կամ կրոնական ուղղության սկզբունքներին հավատարիմ լինելը չի կարող ծառայել միավորվելու իրավունքի իրականացման վրա կանխարգելիչ կամ այլ պատժամիջոցներ կիրառելու արդարացում: Ավելին՝ պետք է հաշվի առնել, որ ՀՀ և ՌԴ սահմանադրությունները, ինչպես նաև մարդու իրավունքների ոլորտի հիմնական միջազգային պայմանագրերը ոչ միայն կենդանի գործիքներ են, որոնք կոչված են արտացոլելու փոփոխվող բարոյական արժեքները, այլ նաև այն, որ քաղաքական իշխանության սուբյեկտների բարոյական հայացքները, այն իմաստով, ինչպես հասկացվում են միավորվելու իրավունքի սահմանափակման հիմքերի հաստեքստում, համարժեք չեն հասարակության բարոյականությանը: Ինչպես նշել ենք արդեն, ցանկացած սահմանափակում ներպետական օրենսդրության մեջ պետք է ունենա իր հիմքերը, և այն պետք է բավականաչափ պարզ և հստակ լինի որպեսզի հնարավորություն ընձեռի անհատներին կանխատեսելու իրենց գործողությունների հետևանքները: Բավարար չէ, որ վարքագիծը բարոյականության տեսանկյունից լինի պարզապես վիրավորական, անհրաժեշտ է, որ այն ճանաչվի հանցավոր և որպես այդպիսի սահմանվի օրենքով⁹, քանի որ ինչպես բազմիցս նշել է եվրոպական դատարանը, ժողովրդավարական հասարակությունում երաշխավորվում է ոչ միայն այն տեղեկությունները և գաղափարները, որոնք ընդունվում են բարյացակամությամբ կամ անտարբերությամբ, այլև այն տեղեկությունները և գաղափարները, որոնք ցնցում կամ անհանգստություն են պատճառում պետությանը կամ հասարակության տարբեր խմբերին, այդպիսին են բազմակարծությունը, հանդուրժողականությունը և լայնախոհությունը, առանց որոնց չկա ժողովրդավարական հասարակություն¹⁰: Անհրաժեշտ է, որ հասարակական բարօրության պաշտպանությանն ուղղված միջոցառումները նաև համապատասխանեն օբյեկտիվ չափանիշներին՝ պատասխանելով այն հարցին, թե արդյոք դրանք արձագանքում են հասարակության իրատապ կարիքներին և համապատասխանում են համաչափության սկզբունքին¹¹: Պետք է դրվի պետության չեզոքության պահանջ, դա հնարավորություն կտա խուսափելու բարոյական չափանիշների վրա հիմնված դատողություններից:

⁹ Տե՛ս ECtHR Hashman and Harrup v. United Kingdom, Judgment of 25 november 1999.

¹⁰ Տե՛ս ECtHR Jersild v. Denmark, Judgment of 23 September 1994.

¹¹ Տե՛ս ECtHR Noris v. Ireland, Judgment of 26 october 1988.

Միավորվելու իրավունքի սահմանափակման իրավաչափ նպատակ հանդիսացող այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը, ցանկացած իրավական պետության սահմանադրական հետևյալ սկզբունքի մասնավոր դրսևորումն է, այն է՝ մարդու իրավունքները և ազատությունները չպետք է խախտեն այլ անձանց իրավունքները և ազատությունները:

Այս սկզբունքի բառացի մեկնաբանման դեպքում կարող ենք կանգնել փակուղու առջև, քանի որ օրինակ X-ի «A» իրավունքի սահմանափակումն անհրաժեշտ է Y-ի «B» իրավունքի պաշտպանության համար, սակայն անհրաժեշտ է նաև սահմանափակել Y-ի «B» իրավունքը X-ի «A» իրավունքի պաշտպանության համար: Պետք է հաշվի առնել, որ անթույլատրելի է Y-ի իրավունքների և ազատությունների իրականացման ապահովումն X-ի իրավունքների և ազատությունների հաշվին, քանի որ հակառակը կհակասեր իրավահավասարության համաիրավական սկզբունքին:

Սույն իրավաչափ նպատակը կիրառելիս անհրաժեշտ է հավասարակշռություն պահպանել սահմանափակվող իրավունքի և պաշտպանվող իրավունքի միջև: Այս տեսանկյունից կարծում ենք, որ առավել ընդունելի է ՀՀ սահմանադրի ընդունած տարբերակը, որի համաձայն միավորվելու սահմանադրական իրավունքը, կարող է սահմանափակվել սահմանադրական իրավունքների և ազատությունների պաշտպանության համար: Ի տարբերություն ՀՀ Սահմանադրության, ՌԴ Սահմանադրությամբ նախատեսված է, որ սահմանադրական իրավունքները և ազատությունները, այդ թվում՝ նաև միավորվելու սահմանադրական իրավունքը, կարող են սահմանափակվել այլ անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության նպատակով:

Կարծում ենք այն մասով, որ միավորվելու սահմանադրական իրավունքի սահմանափակումը թույլատրելի է համարվում ոչ միայն սահմանադրական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով, այլև ցանկացած, օրինակ՝ ենթաօրենսդրական ակտով նախատեսված իրավունքների պաշտպանության համար չի համապատասխանում սահմանափակվող իրավունքի և պաշտպանվող իրավունքի միջև հավասարակշռություն պահպանման սկզբունքին: Առավել ևս այս սկզբունքին չի համապատասխանում հիմնարար սահմանադրական իրավունքների և ա-

զատությունների, այդ թվում միավորվելու իրավունքի սահմանափակման հնարավորությունն օրինական շահերը պաշտպանելու նպատակով: Այստեղ նույնպես խոսք չի կարող գնալ սահմանափակվող իրավունքի և պաշտպանվող շահի միջև հավասարակշռություն պահպանման մասին, քանի որ շահը չի կարող համարվել օրինական եթե հակառակն է մեջ է մտնում որևէ սահմանադրական իրավունքի կամ ազատության հետ և սահմանադրական իրավունքների և ազատությունների իրականացումը չի կարող սահմանափակել այլ անձանց օրինական շահերով¹²: Մարդու հիմնարար իրավունքներին վերաբերող միջազգային փաստաթղթերում խոսք չի գնում այլ անձանց օրինական շահերի պաշտպանության նպատակով հիմնարար իրավունքների և ազատությունների սահմանափակման մասին: Կարծում ենք, որ միավորվելու իրավունքի սահմանափակումն իրավաչափ է միայն այն դեպքում, երբ այդ սահմանափակումը կիրառվում է այլ սահմանադրական իրավունքներ կամ ազատություններ պաշտպանելու համար և առաջարկում ենք ՌԴ սահմանադրությունում կատարել համապատասխան փոփոխություններ վերացնելով վերոնշյալ բացթողումները:

ՌԴ Սահմանադրության 55-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ միավորվելու իրավունքի սահմանափակման իրավաչափ նպատակ է հանդիսանում սահմանադրական կարգի հիմունքների պաշտպանությունը: «Սահմանադրական կարգի հիմունքներ» եզրույթը ՌԴ սահմանադրի օգտագործում է բավականին լայն հասարակական հարաբերություններ նշելու համար, որոնք ՌԴ Սահմանադրության 1-ին գլխի կարգավորման առարկա են: ՌԴ Սահմանադրության առաջին գլուխը, ինչպես աշխարհի բոլոր երկրների սահմանադրությունները, սահմանում է առավել ընդհանուր, ելակետային դրույթները և կոչվում է «Սահմանադրական կարգի հիմունքներ»¹³: Այդ գլխում նախատեսված նորմ-սկզբունքները կարգավորում են պետության մեջ առկա գրեթե բոլոր հասարակական հարաբերությունները: ՌԴ Սահմանադրության «սահմանադրական կարգի հիմունքներ» գլխում ամրագրված նորմ-սկզբունքները կազմում են որոշակի համակարգ, որոնք կարող են բաժանվել չորս հիմնական խմբերի՝ 1. սահմանադրական կարգի մարդասիրական հիմունքներ, 2. պետության հիմնական բնութագրիչներ, 3. սահմանադրա-

¹² Տե՛ս "Конституция Российской Федерации проблемный комментарий": Отв. Ред. Четвернин В.А., 1997.

¹³ Տե՛ս Чиркин В.Е., "Конституционное право России": М. Юристъ. 2004, с. 79.

կան կարգի տնտեսական և քաղաքական հիմունքներ, 4. պետական իշխանության կազմակերպման հիմունքներ¹⁴:

Սահմանադրական կարգը պետության կազմակերպման որոշակի ձև է, որն ամրագրված է տվյալ պետության սահմանադրությամբ¹⁵: 33 սահմանադրական դատարանն իր 2008 թվականի հոկտեմբերի 14-ի ՍԴՈ-766 որոշման մեջ, բացահայտելով սահմանադրական կարգի սահմանադրաիրավական բովանդակությունը, նշել է, որ երկրի սահմանադրական կարգն իրենից ներկայացնում է հասարակության հիմնարար հարաբերությունների կանոնակարգման, պետական իշխանության կազմակերպման, անհատ-պետություն փոխհարաբերությունների սահմանադրորեն ամրագրված համակարգ: Վերջինիս հիմքում դրվող արժեքների և սկզբունքների ամբողջականությունն առանձնացվում է որպես երկրի սահմանադրական կարգի հիմունքներ: Հասարակության հիմնարար հարաբերությունների կանոնակարգման, պետական իշխանության կազմակերպման և անհատ-պետություն փոխհարաբերությունների կարգը չի կարող սահմանվել կամ փոփոխության ենթարկվել այլ կերպ ու այլ ձևերով և մեթոդներով, քան նախատեսված է Սահմանադրությամբ: Սահմանադրական կարգի հիմունքները կազմող հասարակական հարաբերություններն ունեն ելակետային նշանակություն և նրանց պաշտպանվածությունը ողջամտորեն կարող է հանդիսանալ իրավաչափ նպատակ՝ միավորվելու իրավունքը սահմանափակելու համար: Սակայն այստեղ անհրաժեշտ ենք համարում նշել, որ միավորվելու իրավունքի սահմանափակումն իրավաչափ կարող է համարվել միայն ժողովրդավարական սահմանադրական կարգի հիմունքները պաշտպանելու դեպքում: Ինչպես բազմիցս նշել է Եվրոպական դատարանը, ժողովրդավարությունը եվրոպական երկրների հասարակարգի հիմնարար արժեքներից է¹⁶: Եվրոպական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշման համաձայն՝ միավորման կանոնադրության անհամապատասխանելիությունը կոնկրետ պետության սկզբունքներին, դեռևս չի նշանակում, որ այն չի համապատասխանում ժողովրդավարության սկզբունքներին¹⁷:

Այսպիսով, միավորվելու իրավունքը չպետք է օգտագործվի բռնի կերպով ժողովրդավարական սահմանադրական կարգը փոխելու համար:

Սահմանափակումը պետք է անհրաժեշտ լինի ժողովրդավարական հասարակությունում: Ինչպես արդեն նշել ենք, սահմանափակման համար անհրաժեշտ երեք պայմաններն էլ ունեն վճռորոշ նշանակություն: Սակայն որպես կանոն, միավորվելու իրավունքին միջամտության ժամանակ միավորվելու իրավունքին միջամտություն իրականացրած համապատասխան սուբյեկտները կարողանում են հեշտությամբ հիմնավորել, որ միջամտությունը նախատեսված է եղել օրենքով և հետապնդել է իրավաչափ նպատակ: Հիմնական խնդիրներն առաջանում են երրորդ պայմանի հետ, երբ շատ հաճախ չեն կարողանում հիմնավորել, արդյոք հիմնարար իրավունքի սահմանափակումն անհրաժեշտ է եղել ժողովրդավարական հասարակությունում: Եվ հետևաբար, գործնականում վճռորոշ նշանակություն է ձեռք բերում երրորդ պայմանը, այն է՝ արդյո՞ք միջամտությունն անհրաժեշտ է եղել ժողովրդավարական հասարակությունում:

Այսպիսով՝ ցանկացած միջամտություն, որը նախատեսված է օրենքով և հետապնդում է իրավաչափ նպատակ, միևնույն է պետք է համապատասխանի «անհրաժեշտության» չափանշին: Եվրոպական դատարանը նշել է, որ «անհրաժեշտ» բառն իմաստային առումով «ամփոփարհներէի» բառի հոմանիշը չէ, այն նաև չունի այնպիսի ճկունություն, որով օժտված են «թուլատրելի», «սովորաբար», «նպատակահարմար», «ողջամիտ» կամ «ցանկալի» բառերը¹⁸: Այսինքն՝ պետական իշխանության կողմից միավորվելու իրավունքի ցանկացած սահմանափակում պետք է պայմանավորված լինի սոցիալական սուր և անհետաձգելի պահանջմունքով, պետք է լինի արդարացված և համաչափ՝ հետապնդվող նպատակին:

Յուրաքանչյուր կոնկրետ դեպքում՝ կախված գործի հանգամանքներից, պետք է որոշվի արդյոք իրավաչափ նպատակով պաշտպանվող շահը գերակա է եղել անձի միավորվելու իրավունքի նկատմամբ: Առաջին հեր-

¹⁴ St'u Baglay M. B., "Конституционное право Российской Федерации. Учебник для вузов 4-е издание". М.: Норма. 2004, с. 104.

¹⁵ St'u Козлова Е. И., Кутафин О. Е., "Конституционное право России. Учебник. 4-е издание", М. Проспект. 2007, с. 94.

¹⁶ St'u ECtHR Castells v. Spain, Judgment of 23 April 1994.

¹⁷ St'u ECtHR United Communist party of Turkey v. Turkey, Judgment of 30 January 1998.

¹⁸ St'u ECtHR Handyside v. the United Kingdom, Judgment of 7 December 1976.

թին պետք է զնահատվի այնպիսի «անհետաձգելի հասարակական պահանջի» առկայության փաստը, որն ունակ է արդարացնել այդ միջամտության հավասարակշռված և բարեխիղճ լինելը:

Կարևորելով միավորվելու իրավունքի երաշխավորումը ժողովրդավարական հասարակության համար՝ այն չի կարող անհամաչափորեն սահմանափակվել՝ վտանգելով սեփական կարծիքն ունենալու, տեղեկություններ և զաղափարներ ստանալու և տարածելու ազատությունը, հասարակական կյանքում ներդրում ունենալու, սեփական իրավունքները պաշտպանելու և հնարավոր խախտումների մասին բարձրաձայնելու հնարավորությունը:

Սակայն «անհրաժեշտության» չափորոշիչը չի կարող կիրառվել բացարձակ իմաստով, պետք է հաշվի առնել նաև մի շարք այլ գործոններ: Դրանք են՝ վիճարկվող սահմանափակման բնույթը, միջամտության աստիճանը, գործին վերաբերող միավորման բնույթը, քաղաքական և սոցիալական գործոնները, գործի մեջ ներգրավված մարդիկ, միջավայրը և հանրությունը: Սակայն իրավաչափ նպատակից կախված միջամտության անհրաժեշտության չափանիշները նույնը չեն: Տարբեր իրավաչափ նպատակների առանձնահատկություններով պայմանավորված՝ պետության կողմից միջամտության անհրաժեշտությունը զնահատվում է տարբեր կերպ: Իսկ գործնական խնդիրն առավելապես ոչ թե օրենքով իրավաչափ սահմանափակումների

կամ պատասխանատվության միջոցների նախատեսման մեջ է, այլ վերաբերում է դրանց համաչափության ապահովմանն ու դատական պրակտիկայում դրա երաշխավորմանը:

Այսպիսով՝ կարելի է եզրակացնել.

1. միավորվելու իրավունքը չի կարող գոյություն ունենալ մեկուսացման պայմաններում, այն պետք է հավասարակշռվի հասարակության և պետության կենսական շահերի, ինչպես նաև մարդու այլ հիմնարար իրավունքների և ազատությունների հետ:

2. Միավորվելու իրավունքը, կարող է սահմանափակվել և այդ սահմանափակումը համատեղելի կլինի ԳԳ և ՌԴ սահմանադրություններին եթե՝ ա) սահմանափակումը նախատեսված է օրենքով, բ) սահմանափակումը հետապնդում է ԳԳ Սահմանադրության 43-րդ և ՌԴ Սահմանադրության 55-րդ հոդվածներով, ինչպես նաև մարդու իրավունքներին վերաբերող միջազգային պայմանագրերում նախատեսված որևէ իրավաչափ նպատակ, գ) սահմանափակումն անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում:

3. Միավորվելու իրավունքի սահմանափակման իրավաչափ նպատակները ԳԳ-ում և ՌԴ-ում, ինչպես նաև մարդու իրավունքներին վերաբերող միջազգային փաստաթղթերում հիմնականում նույնական են: ՌԴ Սահմանադրությունը, ի տարբերություն ԳԳ Սահմանադրության, միավորվելու իրավունքի սահմանափակման իրավաչափ նպատակ է նախատեսում սահմանադրական կարգի հիմունքները:

ՍՏԵԼԼԱ ՂՈՒՇՉՅԱՆ

Նոր Նորք նոտարական տարածքի նոտարի օգնական, իրավաբան

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՋԱՉԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՉԵՐԸ

Միջազգային իրավական պատասխանատվությունը՝ որպես այդպիսին, առավելապես հատուկ է պետություններին՝ կատարված միջազգային իրավախախտումները շտկելու և իրավախախտում թույլ տված սուբյեկտին պատասխանատվության ենթարկելու համար: Սակայն, ներկայումս լայնորեն քննարկվում է նաև միջազգային կազմակերպությունների, այդ թվում Եվրոպական Միության (այսուհետ՝ «ԵՄ») միջազգային պատասխանատվության հիմնահարցը: Մասնավորապես, սույն հարցը խնդրո առարկա է դարձել 2003 թվականին, երբ ՄԱԿ-ի Միջազգային հանձնաժողովի 55-րդ նստաշրջանի շրջանակներում նշվեց, որ տասնամյակներ շարունակ քննարկվում են պետությունների միջազգային իրավական պատասխանատվության հիմնախնդիրները՝ բաց թողնելով միջազգային կազմակերպություններին պատասխանատվության ենթարկելու հիմնահարցերը՝ միաժամանակ որոշելով ամրագրել միջազգային կազմակերպություններին պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ համապատասխան դրույթներ¹: Ըստ հիմնական դրույթների՝ ցանկացած իրավախախտման համար միջազգային կազմակերպությունները ենթակա են միջազգային իրավական պատասխանատվության²:

ԵՄ-ն նույնպես, հանդիսանալով «յուրահատուկ տեսակի» միջազգային կազմակերպություն, ենթարկվում է միջազգային իրավական պատասխանատվության: Ի տարբերություն այլ միջազգային կազմակերպությունների, ԵՄ-ն ունի իր օրենսդրությունը, ազատ է միջազգային համաձայնագրեր կնքելու հարցում, ուստի՝ գտնում ենք, որ ԵՄ-ն՝ որպես «յուրահատուկ տեսակի» միջազգային կազմակերպություն, պատասխանատու է իր կողմից դրսևորած ցանկացած հակաիրավական արարքի համար: Վերոգրյալը կարևոր է նաև այնքանով, որ ԵՄ-ն հետևողականություն է ցուցաբերում և ապահովում է միջազգային ի-

րավունքի նորմերի պահպանումն ու զարգացումը: Եվ այն հանգամանքը, որ ԵՄ-ն պետականությանն այդքան մոտ է գտնվում, արդեն իսկ հիմք է հանդիսանում ԵՄ-ին համապատասխան ռեժիմով պատասխանատվության ենթարկելու համար, ինչն էլ հակառակ բազմաթիվ մտածողների դիրքորոշման, նշանակում է, որ ԵՄ-ն ևս ազատված չէ պատասխանատվությունից³: ԵՄ հիմնադիր պայմանագրերում ԵՄ պատասխանատվության հետ կապված որևէ կոնկրետ դրույթ առկա չէ. մի շարք հոդվածներում պարզապես նշվում է, որ ցանկացած հակաիրավական արարքի համար Եվրոպական Ընկերակցություններից (այսուհետ՝ «ԵԸ») յուրաքանչյուրը կրում է պատասխանատվություն ԵԸ Դատարանի առջև: Այս դրույթները, առանց փոփոխությունների, պահպանվել են նաև Լիսաբոնի պայմանագրում:

ԵՄ պատասխանատվությունը բխում է հառը համաձայնագրերից (Mixed agreements), որի կողմերն են հադիսանում ԵՄ-ն և անդամ պետությունները կամ դրանց մեծամասնությունը: Ուստի՝ շատ հաճախ սրանից էլ բխում է այն հարցը, թե երրորդ պետությունների հետ կնքված պայմանագրերով ստանձնած պարտականությունների չկատարման կամ պարտականությունների խախտման դեպքում ԵՄ-ն է ենթակա պատասխանատվության, թե՛ անդամ պետությունները: Այսինքն, անհրաժեշտություն է առաջանում որոշել արդյո՞ք ԵՄ կողմից թույլ տրված իրավախախտումների կամ ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում անդամ պետությունները ենթակա են պատասխանատվության, թե հակառակը՝ անդամ պետությունների կողմից ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում անդամ պետությունների փոխարեն ԵՄ-ն է ենթակա միջազգային իրավական պատասխանատվության: Որպես օրինակ՝ հարկ ենք համարում նշել սույն հարցին վերաբերող առաջին դատական

¹ St'u Christian Tomuschat, "The international responsibility of the European Union", p.177.
² St'u Doc.A/58/10, 45. For the commentary on the article, see ibid., 45-9.
³ St'u Christian Tomushchat, "The international responsibility of the European Union", p. 183.

նախադեպը, որն առավել հայտնի է «Bosphorus» անվամբ⁴, (ԵՄ որոշակի ակտերի կյանքի կոչման վերաբերյալ), և վերջին նախադեպը, որն էլ հայտնի է «EC-Asbestos» անվամբ⁵ (խոսքն այստեղ վերաբերում էր Առևտրի Համաշխարհային Կազմակերպության (այսուհետ՝ «ԱՀԿ») կողմից ԵՄ և Ֆրանսիայի օրենսդրության որոշակի դրույթների հետ չհամաձայնվելուն և դրանք բողոքարկելուն, մասնավորապես՝ առաջ էր քաշվում այն վարկածը, որ անդամ պետություններն անօրինական ձեռնարկատիրությամբ են զբաղվել): Նշված նախադեպերով դատարանը ևս մեկ անգամ հաստատեց, որ ԵՄ պատասխանատվությունը բխում է հենց խառը համաձայնագրերից և իրավասությունների բաժանումն անդամ պետությունների և ԵՄ-ի միջև հանդիսանում է զուտ ներքին իրավասություն: ԵՄ-ն և անդամ պետությունները պատասխանատվություն են կրում նաև այն դեպքերում, երբ երրորդ պետությանը մերժում են հստակ տեղեկատվություն տրամադրել ԵՄ և նրա անդամ պետությունների պատասխանատվության մանրամասների մասին⁶:

Գոյություն ունի պատասխանատվության երկու տեսակ՝ միացված պատասխանատվություն (joint responsibility) և առանձնացված պատասխանատվություն (several responsibility): Այն դեպքերում, երբ տարանջատված չեն ԵՄ և անդամ պետությունների իրավասությունները, պատասխանատվությունը սահմանվում է հավասարապես թե՛ անդամ պետությունների, թե՛ ԵՄ նկատմամբ: Այստեղ կարևորվում է ԵՄ և անդամ պետությունների իրավասությունների տարանջատումը միմյանցից: Իսկ այն դեպքերում, երբ թույլ տված իրավախախտման համար ԵՄ-ն՝ առանձին, իսկ անդամ պետություններն էլ իրենց հերթին առանձին են կրում պատասխանատվություն, ապա գործում է առանձնացված պատասխանատվության դոկտրինը (several responsibility): Այսինքն՝ առանձին պատասխանատվության դոկտրինը ենթադրում է անդամ պետությունների և ԵՄ իրավասությունների տարանջատումը միմյանցից: Միացված և առանձին պատասխանատվության տեսանկյունից ելնելով՝ սահմանվում է կոնկրետ իրավախախտման դեպքում ԵՄ և անդամ պետությունների պատասխանատվության շրջանակը՝ հիմնվելով Կարթագենի ար-

ձանագրության վրա: Կարևոր է նաև այն հարցի հստակեցումը, թե պայմանագրի հատկապես որ մասն է գտնվում համատեղ իրավասությունների ներքո, ինչպես նաև՝ թե որ մասով են սահմանվում միայն ԵՄ պարտականությունները: Այսինքն, ԵՄ-ն և անդամ պետությունները երրորդ պետությունների հետ կնքված պայմանագրերով ստանձնած պարտավորությունների չկատարման դեպքում կրում են ինչպես համատեղ պատասխանատվություն, այնպես էլ առանձնացված պատասխանատվություն՝ յուրաքանչյուրն իր կողմից թույլ տված իրավախախտմանը համապատասխան⁷: Որոշ հեղինակների կարծիքով ԵՄ-ն պատասխանատու է ամբողջապես խառը համաձայնագրերով սահմանված պարտավորությունների չկատարման համար, այդ թվում՝ նաև կիսված իրավասությունների շրջանակներում: Օրինակ՝ ԱՀԿ-ի դեպքում նշվել է, որ անդամ պետությունների կողմից GATT-ի (այսուհետ՝ «Առևտրի և սակագների գլխավոր համաձայնագիր») և TRIPS-ի (այսուհետ՝ «Մտավոր սեփականության իրավունքների՝ առևտրի առնչվող հայեցակետերի մասին համաձայնագիր») դրույթների խախտման դեպքում ԵՄ-ն ևս պատասխանատվություն է կրում՝ նույնիսկ համապատասխան ղեկարացիայի բացակայության դեպքում: Մասնավորապես, անդամ պետությունների մասնակցությամբ եվրոպական ինստիտուտների կողմից կնքված համաձայնագրերից բխող պարտականությունների կատարումն ապահովվում է հենց ԵՄ կողմից, հակառակ դեպքում ԵՄ-ն է ենթարկվում պատասխանատվության⁸: Նշված դրույթի հետ այդքան էլ համաձայն չենք, քանի որ ԵՄ-ն ենթակա է պատասխանատվության իր իրավասությունների շրջանակներում թույլ տված ցանկացած իրավախախտման համար: Չենք կարող անտեսել նաև մեկ այլ կարևոր դատական նախադեպ, որում ուղղակիորեն նշվեց, որ երբ ԵՄ-ն և անդամ պետությունները հանդիսանում են երրորդ պետության հետ կնքված պայմանագրի իրավահավասար կողմեր, իրավասությունների տարանջատումը միմյանցից հանդիսանում է նրանց ներքին գործը: Կնքված պայմանագրով ստանձնած պարտականությունների չկատարման դեպքում, ԵՄ-ն և անդամ պետությունները պետք է կրեն հավասար պատասխանատվություն⁹:

⁴ St'u Case 45036/98. Bosphorus airways v. Ireland.

⁵ St'u EC-Asbestos.

⁶ St'u J. Heliskoski, "Mixed Agreements", p. 161.

⁷ St'u Case C-316/91, European Parliament v Council.

⁸ St'u Case 12/86, Demirel, para 11, ինչպես նաև՝ Opinion 1/94.

⁹ St'u Case C-53/96, Hermes International v. FHT Marketing.

Կարևոր է նաև այն հանգամանքը, որ ՄԱԿ-ի միջազգային հանձնաժողովը ցանկանում է ԵՄ-ին տեսնել որպես առաջին պատասխանատու՝ խուսափելու համար անդամ պետության և երրորդ պետության միջև ցանկացած բախումից, ինչն էլ իր հերթին է ազդում հարցի լուծմանը: Այսինքն, նույնիսկ այն դեպքում, երբ անդամ պետություններն իրականացնում են ԵՄ երկրորդային իրավունքի ակտերը՝ չհանդիսանալով հակաիրավական արարքի «հեղինակ», ենթակա են պատասխանատվության: Համագործակցությունն ունի կարևորագույն դերակատարություն, ինչն էլ կորոզինացնում է ԵՄ և անդամ պետությունների գործունեությունը¹⁰:

Կարևոր է նաև, որ ԵՄ կողմից կնքված համաձայնագրերից բխող պարտավորությունների կատարման պարտականությունը դրված է անդամ պետությունների իրավասու մարմինների վրա, այլ ոչ թե ԵՄ-ի ինստիտուցիոնալ մարմինների¹¹:

Պեռևս 1999 թվականին ընդունված ԵՄ հիմնադիր պայմանագրում փոփոխություններ կատարելու վերաբերյալ Ամստերդամի պայմանագիրը նախատեսում էր ԵՄ կողմից անմիջականորեն միջազգային պայմանագրերի կնքումը¹², ինչպես նաև պայմանագրով սահմանված պարտականությունների չկատարման համար վրա հասնող պատասխանատվությունը¹³: Բացի այդ, անդամ պետությունները միմյանց հետ համագործակցում են համապատասխան գործակալությունների միջոցով, նրանք պաշտպանված են և ցանկացած իրավախախտման համար իրավասու են պահանջել վնասի փոխհատուցում:

ԵԸ դատարանը բազմիցս նշել է, որ կարևոր է նաև հաշվի առնել երրորդ պետության տեսակետը, քանի որ ԵՄ պատասխանատվության հիմնահարցը որոշվում է միայն վնաս պատճառված երրորդ պետության բողոքի հիման վրա¹⁴:

Եվրոպական հանձնաժողովը իր զեկույցներում նշել է, որ իրականում ԵՄ պատասխանատվությունն առաջանում է միայն երրորդ պետությունների հետ կնքված խառը համաձայնագրերից բխող պարտականությունների չկատարման դեպքում¹⁵: ԵՄ գործունեության

մասին պայմանագրի հիման վրա ԵՄ պայմանագրային պատասխանատվությունը կարգավորվում է խնդրո առարկա պայմանագրի նկատմամբ կիրառելի օրենսդրությամբ: Երրորդ պետությունների խնդիրն է հանդիսանում ոչ թե պարզելու այն, թե ով է de jure իրավասություններ ունեցել, այլ՝ պահանջ ներկայացնելու այն մարմնի նկատմամբ, ով իրենց հետ հաղես է եկել de facto, ինչի արդյունքում էլ պատասխանատվության սահմանման հետ կապված որևէ խնդիր չի առաջանում:

Ըստ Եվրոպական հանձնաժողովի՝ ԵՄ արդարադատության դատարանի որոշումները սահմանազատում են ԵՄ և անդամ պետությունների իրավասությունները և կրում են պարտադիր բնույթ: Հետևաբար, ձևավորված պրակտիկան հանդիսանում է «կազմակերպության գործունեության» հիմնական տարրը: Այսինքն՝ ԵՄ հիմնական պարտավորություններն իրականացվում են ոչ միայն անդամ պետությունների իրավասու մարմինների կողմից, այլև համապատասխան կազմակերպությունների կողմից՝ կյանքի կոչելով ԵՄ ծրագրերը: Օրինակ՝ անդամ պետությունների մասնավոր կազմակերպությունների կողմից ընդունված միջոցառումները գյուղատնտեսական ոլորտում, զնահատվել են որպես ԵՄ կողմից ընդունված չափանիշներ, որոնք սահմանում են ֆիզիկական կամ իրավաբանական անձանց վարքագծի կանոնները¹⁶: Այստեղ շեշտադրվում է ԵՄ պատասխանատվության ենթարկվելու հանգամանքը՝ սահմանված իրավասությունները չարաշահելու հիմքով:

Պետք է նշել, որ իրավական դիրքորոշումը միջազգային պայմանագրերի նկատմամբ փոքր ինչ այլ է: Մասնավորապես, երբ երրորդ պետությունների հետ համագործակցության պայմանագրեր են կնքվում, ԵՄ-ն չի կարող պահանջել, որ նրանցում նույնպես ներառվեն ճիշտ այնպիսի դրույթներ, որոնք առկա են Լիսաբոնի պայմանագրում: Դատական նախադեպերից մեկով սահմանվեց նաև պատասխանատվությունն ենթադրյալ իրավախախտումների համար հասկացությունը¹⁷: Երրորդ պետությունը կարող է կարծել, որ այսպես կոչված «դերակատարներից» յուրաքանչյուրը, որը հաղես է եկել համապատասխան համա-

¹⁰ Տե՛ս Christian Tomuschat, "The international responsibility of the European Union", p. 185.

¹¹ Տե՛ս Enzo Connizzaro, "The European Union as an actor in Internatioanl relations", p. 193.

¹² Տե՛ս Ամստերդամի պայմանագիր (կոնսոլիդացված տարբերակ), հոդված 24:

¹³ Տե՛ս Enzo Connizzaro, "The European Union as an actor in Internatioanl relations", p. 182.

¹⁴ Տե՛ս Bemadotte vs Commission.

¹⁵ Տե՛ս Doc.A/CN.4/545, 13–14 and 19–20.

¹⁶ Տե՛ս "The European Commission's observations", doc. A/CN.4/545, para. 20.

¹⁷ Տե՛ս Case 316/91 (Parliament vs. Council).

ծայնագրի ստորագրմամբ, պատասխանատու է դրա համար: Այսինքն, նա պետք է իրազեկված լինի, որ նույնիսկ ենթադրյալ իրավախախտման համար պատասխանատու է: Այս դեպքում երրորդ պետությունն իրավասու է դիմել անդամ պետություններից որևէ մեկին կամ ԵՄ-ին՝ առկա ենթադրյալ իրավախախտումը շտկելու կամ վերացնելու համար:

Հարկ ենք համարում նշել, որ ԵՄ պատասխանատվություն է կրում ոչ միայն երրորդ պետությունների, այլ կարող է պատասխանատվություն կրել նաև ԵՄ անդամ պետությունների առջև: Այն դեպքում, երբ ԵՄ-ն խախտում է իր իրավասությունների սահմանը՝ վնաս պատճառելով անդամ պետություններից որևէ մեկին, ապա տվյալ պետությունն իրավասու է պահանջել վնասի փոխհատուցում: Ներկայումս, ԵՄ դատական պաշտպանվածությունը գտնվում է այնպիսի վերելքում, որ անդամ պետություններն անսահմանափակ իրավունքներ ունեն. ցանկացած անօրինական որոշում կամ ակտ կարող է վիճարկվել դատական կարգով: Դատարանը վերահսկողություն է իրականացնում Խորհրդարանի և Խորհրդի կողմից ընդունված ակտերի օրինականության նկատմամբ: Դա կատարվում է էական պահանջների խախտման առկայության դեպքում ներկայացված հայցերով անդամ պետությունների իրավունքները պաշտպանելու նպատակով: Պետությունը կարող է հասնել նրան, որ փոխհատուցվի՝ չեղյալ հայտարարելով հակաիրավական որոշումները:

Եվ ի վերջո հարկ ենք համարում նշել, որ պատասխանատվության հետ կապված ցանկացած հարց, որը ծագում է ԵՄ ներքին իրավասությունների ոլորտում, լուծելի է ԵՄ արդարադատության դատարանի կողմից: Անդամ պետություններն իրավասու են ԵՄ կողմից ընդունված ցանկացած իրավական ակտ վիճարկել այն դեպքում, եթե գտնեն, որ դա հակաիրավական է՝ համապատասխանաբար բողոքարկելով այն: Մասնավորապես, ԵՄ արդարադատության դատարանը վերահսկողություն է իրականացնում Խորհրդարանի և Խորհրդի կողմից համատեղ ընդունված ակտերի, ինչպես նաև երրորդ պետության համար իրավական հետևանքներ առաջացնող ակտերի օրինականության նկատմամբ: Նա իրավասու է ընթացակարգային էական պահանջների խախտման դեպքում ներկայացված հայցով կայացնել որոշում: Դատարանն իրավասու է

նաև վերահսկիչ պալատի և Եվրոպական կենտրոնական բանկի (այսուհետ՝ «ԵԿԲ») կողմից միևնույն հիմքերով ներկայացված հայցերով իրենց իրավունքները պաշտպանելու նպատակով կայացնել համապատասխան որոշում, քննել ցանկացած պայմանագրից ծագող վեճ՝ անկախ այն հանգամանքից, թե տվյալ պայմանագրի նկատմամբ կիրառվում են մասնավոր, թե հանրային իրավունքի դրույթները: Փաստորեն, հայցի բավարարման դեպքում դատարանը վիճարկվող ակտն ուժը կորցրած է ճանաչում: Այն դեպքում, երբ ԵՄ որևէ ինստիտուտ, ի խախտումն առկա պարտավորությունների, ձեռնպահ է մնում որոշում կայացնելուց, անդամ պետությունները և ԵՄ մյուս ինստիտուտները կարող են մնան խախտման փաստը հաստատելու նպատակով հայց ներկայացնել դատարան: Հայցն ընդունվում է, եթե խախտումն արձանագրած ինստիտուտին կոչ է արվել ձեռնպահ մնալ որոշակի գործողությունների կատարումից, և իրենց դիմելուց երկու ամսվա ընթացքում համապատասխան ինստիտուտը չի ներկայացրել իր դիրքորոշումը: Սրանից հետո հայցը կարող է ներկայացվել հաջորդ երկու ամիսների ընթացքում¹⁸: Սա նշանակում է, որ երրորդ պետության հայցը պետք է դիտվի այնպես, ինչպես դա մախկինում ուղղված էր երեք ընկերակցություններին, իսկ ներկայումս՝ ԵՄ-ին: Նույնիսկ այն դեպքում, եթե անդամ պետությունները չեն հանդիսանում հակաիրավական արարքի «հեղինակ»՝ իրականացնելով ԵՄ երկրորդային իրավունքի ակտերը, ապա միևնույն է հավասարապես կրում են պատասխանատվություն: ԵՄ-ն պատասխանատվություն է կրում նաև այսպես կոչված «իրավական ակտերի յուրացման» դեպքում: Ինչ վերաբերում է ԵՄ պատասխանատվությանը, ապա շատերի կարծիքով այն ենթադրում է նաև ԵՄ իրավասությունների որոշակի սահմանափակում: Սակայն, երբ անդամ պետությունների պատասխանատվության հիմնահարցերը դիտվում են որպես ԵՄ ներքին հարց, շեշտադրվում է ԵՄ շահերի գերակայությունը: Բոլոր այն ոլորտներում, որոնցում կիրառելի է ԵՄ օրենսդրությունը, անդամ պետությունները պարտավորվածություն են ստանձնում օրենսդրության դրույթների կիրառման և պահպանման համար¹⁹: Սա միաժամանակ ներառված էր նաև ԵՄ հիմնադիր պայմանագրերում, որտեղ նշված էր, որ սույն պայմանագրի մեկնաբանման և կիրառման վե-

¹⁸ St'u Council Regulation (EEC) No 404/93 of 13 February 1993 on the common organization of the market in bananas.

¹⁹ St'u Marise Cremona, "External relations of the EU and the member states: Competence, Mixed agreements, international responsibility and teha effects of International law", p. 21.

րաբերյալ ոչ մի վեճ չի կարգավորվել այլ կերպ, քան նրանցով, որոնք սահմանված են սույն պայմանագրով²⁰: Ի վերջո պետք է նշել, որ չնայած առկա իրավական ակտերին և դատական նախադեպերին, այնուամենայնիվ, միայն ԵՄ-ն երբևէ չի ենթարկվել միջազգային իրավական պատասխանատվության:

Երրորդ պետությունների նկատմամբ պատասխանատվության հիմնահարցերը քննարկելիս պետք է պահպանել հավասարակշռությունն անդամ պետությունների և ԵՄ-ի միջև: Նախկինում գոյություն ունեցող ex ante Declaration of competence-ը վկայում է հենց այն մասին, որ այն դեպքում, երբ գոյություն ունի որոշակի հավասարակշռության աստիճան, ապահովվում է որոշակիություն: Բայց ինչպես փորձն է ցույց տվել, սմանատիպ հայտարարությունները ոչ միշտ են արդարացված:

Ուշագրավ է նաև այն փաստը, որ ներկայումս Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոմվենցիային ԵՄ-ն ևս կարող է անդամակցել, ինչը նշանակում է, որ մարդու իրավունքների եվրոպական դատարանում սահմանված դրույթները պարտադիր են նաև ԵՄ-ի համար: Եթե երրորդ պետությունն ապացուցի, որ ԵՄ պարտավորությունների չկատարման հետևանքով վնաս է պատճառվել հասարակությանը, քանի որ անդամ պետություններն իրենց ներպետական օրենսդրության կիրառմամբ խախտում են առկա համաձայնագրով նախատեսված պարտավորությունները, ապա ԵՄ-ն կարող է մերժել պատասխանատվության հետ կապված ցանկացած հարց: Բացառություն են կազմում այն դեպքերը, երբ անդամ պետությունը երրորդ պետության նկատմամբ ստանձնած պարտականությունները ոչ պատշաճ է կատարում: Այս դեպքում երրորդ պետությունն

իրավասու է ԵՄ դեմ հայց ներկայացնել, ինչի արդյունքում ԵՄ-ն ևս կկանգնի պատասխանատվության առջև²¹:

Այսպիսով, բազմակողմանի ուսումնասիրության արդյունքում հանգեցինք այն եզրակացության, որ ԵՄ և անդամ պետությունների պատասխանատվությունը բխում է խառը համաձայնագրերից: Մասնավորապես, պատասխանատվության հիմնահարցն առաջանում է երրորդ պետությունների հետ կնքված խառը համաձայնագրերից, երբ համաձայնագրի մի կողմ հանդիսանում է ԵՄ-ն, իսկ մյուս կողմ՝ անդամ պետությունները: Այսինքն՝ ԵՄ պատասխանատվության հիմնահարցերը հիմնականում կարգավորվում են համաձայնագրերի, ինչպես նաև առկա նախադեպերի հիման վրա: Պատասխանատվության կոնկրետացումը կախված է մնան համաձայնագրերի բնույթից: Ընդ որում, նրանց պատասխանատվության հիմնահարցերը լուծվում են՝ կապված իրավասությունների տարանջատման սկզբունքի հետ: Պատասխանատվությունը վրա է հասնում ցանկացած հակաիրավական արարքի դրսևորման դեպքում, որը կարող է արտահայտվել ինչպես գործողությամբ, այնպես էլ անգործությամբ:

Հիմնականում առկա է պատասխանատվության երկու տեսակ՝ միասնական պատասխանատվություն և առանձին պատասխանատվություն:

Հարկ ենք համարում նշել նաև այն կարևոր հանգամանքը, որ այսուհետ ԵՄ-ն նույնպես կարող է անդամակցել Մարդու իրավունքների և ազատությունների եվրոպական կոմվենցիային, ինչը կնշանակի, որ ԵՄ-ն կոմվենցիայի ցանկացած դրույթի խախտման դեպքում նույնպես ենթակա կլինի միջազգային իրավական պատասխանատվության:

²⁰ Տե՛ս ԵՄ հիմնադիր պայմագրեր (կոնսոլիդացված տարբերակ):

²¹ Տե՛ս Enzo Connizzaro, "The European Union as an actor in Internatioanal relations", p. 182.

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԻ ԱՐՏԱՃՈՒՈՒՄԸ ՎԵՐԱՆԱՅՎԱԾ ԵՎՐՈՂԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԽԱՐՏԻԱՅՈՒՄ

ՀՀ աշխատանքային օրենսգրքի (այսուհետ՝ «Օրենսգրք») 3-րդ հոդվածն ամրագրում է աշխատանքային հարաբերությունների կայունության սկզբունքը: Աշխատանքային հարաբերությունների կայունության սկզբունքն աշխատողների աշխատանքային իրավունքների պաշտպանության կարևոր երաշխիքն է: Աշխատանքային հարաբերությունների կայունության սկզբունքը դրսևորվում է, նախ և առաջ, ժամկետային աշխատանքային պայմանագրերի կնքումը սահմանափակելու, ապա նաև՝ կնքված աշխատանքային պայմանագիրը փոփոխելու բարդացված արարողակարգ կիրառելու մեջ: Աշխատանքային հարաբերությունների կայունության սկզբունքի ապահովումը երաշխավորում է յուրաքանչյուր աշխատողի՝ պայմանագրով նախատեսված ժամկետային կամ անորոշ ժամկետով որոշակի աշխատանք կատարելու, խախտված աշխատանքային իրավունքների վերականգնման իրավունքները. ընդ որում, աշխատանքային պայմանագրով չնախատեսված աշխատանքի կատարում, աշխատանքի պայմանների ժամանակավոր փոփոխում թույլատրվում է բացառապես օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:

Ի տարբերություն որոշակի աշխատանք կատարելու կապակցությամբ կնքվող քաղաքացիաիրավական պայմանագրերի (օրինակ՝ կապալի, հանձնարարության, կոմիսիայի պայմանագրերից բխող իրավահարաբերությունները), որոնք, որպես կանոն, կնքվում են այս կամ այն կոնկրետ աշխատանքը կատարելու ժամկետով և դադարում են աշխատանքի արդյունքն այն պատվիրող անձին հանձնելով՝ աշխատանքային հարաբերություններն ունեն տևական բնույթ: Բացառությամբ որոշ, օրենքով նախատեսված խիստ սահմանափակ դեպքերի՝ աշխատանքային հարաբերությունները ծագում են առավել տևական ժամանակով և դրանց կողմերի միջև ստեղծում կայուն և

մշտական կապ: Այս հանգամանքն արտացոլված է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածում, որը թույլատրում է ժամկետային աշխատանքային պայմանագրերի կնքում միայն օրենքով նախատեսված դեպքերում: Որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագիր է կնքվում, եթե աշխատանքային հարաբերությունները չեն կարող որոշվել անորոշ ժամկետով՝ հաշվի առնելով կատարվելիք աշխատանքի բնույթը կամ կատարման պայմանները: Որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագրեր կնքվում են նաև՝

1. ընտրովի պաշտոններում աշխատողների հետ՝ ընտրված ժամանակահատվածով,
2. համատեղությամբ աշխատանք կատարողների հետ,
3. սեզոնային աշխատանքներ կատարողների հետ,
4. ժամանակավոր (մինչև երկու ամիս ժամկետով) աշխատանքներ կատարողների հետ,
5. ժամանակավորապես բացակայող աշխատողին փոխարինող աշխատողի հետ,
6. օտարերկրացիների հետ՝ աշխատանքի թույլտվության կամ կացության իրավունքի վավերության ժամկետով:

Փաստորեն, վերոնշյալ դրույթի մեկնաբանությունը թույլ է տալիս եզրակացնել, որ գործատուի համար մշտական բնույթ կրող աշխատանքների կատարման վերաբերյալ ժամկետային աշխատանքային պայմանագրի կնքումն արգելվում է: Նմանօրինակ մոտեցում է հանդիպում նաև եվրոպական երկրների աշխատանքային օրենսդրություններում: Օրինակ՝ Գերմանիայի աշխատանքային օրենսդրության և ձևավորված դատական պրակտիկայի համաձայն՝ ժամկետային աշխատանքային պայմանագրերի կնքումը պետք է պատճառաբանված լինի որոշակի փաստական հանգամանքներով, հակառակ դեպքում պայմանագրի կնքումը համարվում է օրենքի պա-

հանջի խախտում¹: Իսկ Ֆրանսիայի օրենսդրության համաձայն՝ ժամկետային աշխատանքային պայմանագրի կնքումը թույլատրվում է միայն խիստ որոշակի դեպքերում, մասնավորապես՝ ժամանակավորապես բացակայող աշխատողին փոխարինելու, արտադրական գործունեության ընդլայնման նպատակով ժամանակավոր բնույթ կրող, որոշակի ժամանակահատվածի համար նախատեսված և շարունակական բնույթ չկրող աշխատանքներ կատարելու դեպքերում²: ՌԴ աշխատանքային օրենսգիրքը նույնպես նախատեսում է որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագրեր կնքելու մասին դրույթ, որով օրենսդիրն այդպիսի պայմանագրերը համապատասխանաբար բաժանում է երկու խմբի: Այսպես, առաջին խմբին են դասվում այն դեպքերը, երբ տվյալ աշխատանքի բնույթով ու կատարման պայմաններով պայմանավորված աշխատանքը կարող է իրականացվել միայն որոշակի ժամանակահատվածի ընթացքում, ուստի՝ պայմանագիրը չի կարող կնքվել անորոշ ժամկետով. երկրորդ խմբի են պատկանում այն դեպքերը, որոնք իրենց բնույթով ընդհանուր կանոնից բացառություն են, այսինքն՝ կնքվում են անկախ աշխատանքի կատարման բնույթից ու պայմաններից և կողմերի համաձայնությամբ կարող են կնքվել ինչպես որոշակի, այնպես էլ՝ անորոշ ժամկետով (վերջին խումբ պայմանագրերը կնքվում են, օրինակ՝ 35 աշխատողը չզերագանցող փոքր ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող (ներառյալ՝ անհատ ձեռնարկատերեր) գործատուի մոտ աշխատողների, համատեղությանը աշխատողների, կենսաթոշակի տարիքի հասած աշխատանքի ընդունվող աշխատողների, արտակարգ պատահարների կանխման ու վերացման աշխատանքների կատարելու համար աշխատողների հետ)³:

Օրենսգրքի 95-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագրերը կարող են կնքվել որոշակի ժամանակահատվածով կամ օրացուցային ժամկետի սահմանումով կամ աշխատանքային պայմանագրով նախատեսված աշխատանքների ավարտման սահմանումով: Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ եթե որոշակի ժամկետով

կնքված աշխատանքային պայմանագրի ժամկետը լրանալուց հետո պայմանագիրը չի լուծվում օրենքով սահմանված կարգով և աշխատանքային հարաբերությունները շարունակվում են, ապա պայմանագիրը համարվում է կնքված անորոշ ժամկետով (ՀՀ աշխատանքային օրենսգիրք հոդված 111, կետ 5):

Ժամկետային աշխատանքային պայմանագրերի կնքման սահմանափակումն ունի կարևոր նշանակություն աշխատողների աշխատանքային իրավունքների պաշտպանվածության, ինչպես նաև աշխատանքային հարաբերությունների կայունության սկզբունքի ապահովման համար: Երբեմն գործատուն, օգտվելով աշխատանքային օրենսգրքում ուղղակի կամ անուղղակի արգելքի բացակայությունից, քաղաքացիների հետ կնքում է որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագիր այն աշխատանքների կատարման վերաբերյալ, որոնք գործատուի համար կրում են մշտական բնույթ, հետագայում լուծում են աշխատանքային պայմանագիրը և նույն կամ տարբեր պայմաններով պայմանագիր կնքում այլ քաղաքացիների հետ՝ իրենց գործողությունների հիմքում դնելով պայմանագրի ազատության սկզբունքը⁴: Օրենսգրքի 95-րդ հոդվածի ոչ այնքան հաջողված ձևակերպումից բխում է, որ կողմերն իրավունք չունեն կնքել որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագիր, եթե տվյալ աշխատանքը գործատուի համար կրում է մշտական բնույթ, և կանոնից բացառությունները սահմանվում են նույն հոդվածի 3-րդ կետով: Ստացվում է, որ ժամկետային պայմանագիր կնքելն օրինական չէ այն դեպքերում, երբ այն նախատեսված չէ աշխատանքային օրենսգրքով կամ այլ օրենքներով: Օրինակ՝ անձը համատեղության կարգով կարող է կատարել աշխատանք, որը գործատուի համար կրում է մշտական բնույթ, բայց նրա հետ կարող է կնքվել ժամկետի պայմանի նշմամբ պայմանագիր, քանի որ այդ մասին օրենքն ուղղակիորեն նախատեսում է (ՀՀ աշխատանքային օրենսգիրք հոդված 95, մաս 3): Ստացվում է, որ այլ նորմատիվ իրավական ակտերով կամ կոլեկտիվ կամ անհատական աշխատանքային պայմանագրերով աշխատանքային հարաբերությունների ժամկետի սահմանափակումն օրինա-

¹ Sten Александр Штелермай, "Введение в трудовое право ФРГ." Под редакцией А.А. Овчинникова. – М., 1999, ст. 35.

² Sten Киселев И. Я., "Зарубежное трудовое право. Учебник для вузов." –М.: "НОРМА-ИНФРА-М", 1998, ст. 65.

³ Մանրամասն տես ՌԴ աշխատանքային օրենսգիրք, հոդված 59:

⁴ Sten Գ. Վ. Պետրոսյան, «ՀՀ աշխատանքային իրավունք, Ընդհանուր մաս», Երևանի պետ. համալս.- Եր., ԵՊՀ հրատ., 2009թ., էջ 84:

կան չէ, և անգամ աշխատողի համաձայնությամբ ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու դեպքում ժամկետի մասին պայմանն Օրենսգրքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով, որպես աշխատողի վիճակն օրենսդրության համեմատությամբ վատթարացնող պայման, իրավաբանական ուժ չունի:

Այսպիսով՝ աշխատողի հետ որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագիր կնքվում է միայն, եթե օբյեկտիվորեն անհնար է հաստատել մշտական աշխատանքային հարաբերություններ՝ պայմանավորված աշխատանքի բնույթով ու կատարման պայմաններով, ինչպես նաև Օրենսգրքի 95-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված նախապայմանների առկայության դեպքում, ընդ որում պայմանագրում հստակորեն պետք է նշել պայմանագրի գործողության ժամկետի ավարտը: Այսինքն, ոչ ժամանակավոր (մշտական) բնույթի աշխատանքի կատարման պայմաններում ժամանակավոր աշխատանքային պայմանագրի կնքումն արգելվում է և համարվում է աշխատողի դրությունը վատթարացնող պայմանագիր:

Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի (այսուհետ՝ «խարտիա») 24-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ աշխատանքից ազատվելու դեպքում աշխատողների պաշտպանվածության իրավունքի արդյունավետ կիրառումն ապահովելու նպատակով Կողմերը պարտավորվում են ճանաչել աշխատանքից միայն այնպիսի հիմնավոր պատճառներով ազատելու՝ աշխատողի իրավունքը, որը պայմանավորված է նրա ընդունակություններով կամ վարքով կամ հիմնված է ձեռնարկության, հաստատության կամ ծառայության գործնական պահանջների վրա: Այս դրույթը նույնպես ուղղված է աշխատողի աշխատանքային հարաբերությունների կայունության երաշխավորմանը: Խարտիայի հավելվածում (Հոդված 24) հստակորեն նշվում է, որ 24 հոդվածը վերաբերում է բոլոր աշխատողներին՝ պայմանով, որ Կողմը կարող է բացառել իր պաշտպանությունից կամ դրա մի մասից աշխատող անձանց հետևյալ կատեգորիաները՝

ա) որոշակի ժամանակաշրջանի կամ որոշակի առաջադրանքի համար աշխատանքային պայմանագրով աշխատողներ,

բ) աշխատանքային փորձաշրջան կամ որակավորման շրջան անցնող աշխատողներ՝ պայմանով, որ որոշված է նախապես և ընդունելի տևողություն ունի,

գ) կարճ ժամանակի համար պատահական հիմքով վարձված աշխատողներ:

Խարտիան հստակորեն սահմանում է որոշակի ժամանակաշրջանի կամ որոշակի առաջադրանքի համար որոշակի տևողություն ունեցող աշխատանքային պայմանագրով աշխատողի կարգավիճակը: Շեշտադրվում են հենց ժամանակավոր կամ որոշակի տևողություն սահմանող դեպքերը, ինչը, անշուշտ, թույլ է տալիս պնդել մեր այն տեսակետը, որ մշտական բնույթ կրող աշխատանքի դեպքում ժամկետի պայմանով, ապա դրա ավարտի հիմքով պայմանագրի լուծումը հակասում է ոչ միայն ազգային օրենսդրության, այլ միջազգային պայմանագրի պահանջներին:

Այսպիսով՝ խարտիայի նշված հոդվածների վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ մշտական բնույթ կրող աշխատանքների դեպքում ժամկետի պայմանով պայմանագրի կնքումն աշխատողի հետ և հետևաբար դրա հիմքով աշխատանքից ազատելը պետք է համարվի աշխատողի աշխատանքային իրավունքների պաշտպանվածության իրավունքի, ինչպես նաև երաշխավորված կայունության իրավունքի խախտում:

Այս դիրքորոշումն ուղղակիորեն արտահայտված է նաև դատական պրակտիկայում: Մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագիր կնքելու համար անհրաժեշտ հիմքերի բացակայության պայմաններում կնքված պայմանագիրն առաջացնում է գործատուի կողմից աշխատողի աշխատանքային իրավունքների և երաշխիքների սահմանափակում, հետևաբար, նման պայմանագիրը պետք է համարվի անորոշ ժամկետով կնքված, և դրա նկատմամբ պետք է կիրառվեն անորոշ ժամկետով պայմանագրի նկատմամբ կիրառելի նորմերը⁵:

Աշխատանքային հարաբերությունների կայունության սկզբունքն արտահայտվում է նաև աշխատանքային պայմանագիրը փոփոխելու, ներառյալ պայմանագրի պայմանները կատարելուց լրիվ կամ մասնակի հրաժարվելու, աշխատողի՝ այլ աշխատանքի փոխադրելու, պարտավորությունների բնույթը փոխելու, այսինքն՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 430 հոդվածին համապատասխան, պարտավորությունների նորացում կատարելու իրավունքը սահմանափակելու եղանակով⁶: Աշխատանքային պայմանագիրը դադարեցնելու

⁵ Տե՛ս թիվ 3-321 (ՎԳ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2008 թվականի մայիսի 23-ի և թիվ 3-322 (ՎԳ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2008 թվականի մայիսի 23-ի որոշումները:

⁶ Տե՛ս Գ. Վ. Պետրոսյան, «ՀՀ աշխատանքային իրավունք, Ընդհանուր մաս», Երևանի պետ. համալս. - Եր., ԵՊՀ հրատ., 2009թ., էջեր 153-155:

համար օրենքը սահմանում է պայմաններ՝ ի տարբերություն քաղաքացիական մի շարք պայմանագրերի (օրինակ՝ կապալի, ծառայությունների վճարովի մատուցման, հանձնարարության, կոմիսիայի և այլ պայմանագրեր), որոնց դեպքում օրենքը կողմերին թույլ է տալիս ցանկացած ժամանակ հանդես գալ պայմանագիրը լուծելու նախաձեռնությամբ՝ մյուս կողմին նախապես ծանուցելու պարտականությամբ: Իսկ աշխատանքային պայմանագրի դադարեցման համար օրենքով սահմանված պայմանների չպահպանումը ազդում է պայմանագրի լուծման օրինակացության վրա՝ դրանից բխող իրավական հետևանքներով: Աշխատանքային հարաբերությունների կայունության սկզբունքը դրսևորվում է նաև նրանում, որ աշխատանքային պայմանագրի առարկան հանդիսացող գործողությունն ունի խիստ որոշակի բնույթ: Աշխատողն ընդունվում է՝ պայմանագրով իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում որոշակի աշխատանք կատարելու համար: Աշխատողը չի կարող չարաշահել իր իրավունքները, այսինքն՝ աշխատանքային պարտականությունները չկատարել կամ ոչ պատշաճ կատարել, հակառակ պարագայում ենթարկվում է պատասխանատվության օրենքով սահմանված կարգով: Նույն տրամաբանությամբ գործատուն ևս իրավասու չէ միակողմանի փոխել աշխատողի աշխատանքային պարտականությունների շրջանակը առանց վերջինիս համաձայնության: Կայունության սկզբունքի հիմնադրույթին համապատասխան՝ Օրենսգրքի նորմերը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, արգելում են առանց աշխատողի նախնական համաձայնության նրան աշխատանքային պայմանագրով չնախատեսված այլ աշխատանքի փոխադրելը (Օրենսգրքից հոդված 105), նախատեսում են գործատուի համաձայնությամբ աշխատանքային պայմանագիրը լուծելու, այսինքն՝ աշխատողին աշխատանքից ազատելու բարդեցված պրարոդակարգ (Օրենսգրքի հոդված 113, 114, 115): Աշխատանքային պայմանագրի բովանդակությունը կազմող յուրաքանչյուր պայման ձեռք է բերվում և փոփոխվում կողմերի փոխադարձ համաձայնությամբ: Աշխատանքային հարաբերությունների փոփոխում է համարվում աշխատողին այլ աշխատանքի փոխադրելը և (կամ) աշխատանքի էական պայմանները փոփոխելը: Բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի՝ աշխատանքի էական պայմանների փոփոխումը կատարվում է միայն աշխատողի համաձայնությամբ: Բացառությունը վերաբերում է արտադրական

անհրաժեշտության դեպքերին, երբ գործատուն, առանց աշխատողի համաձայնության, նրան ժամանակավորապես փոխադրում է այլ աշխատանքի: Գործատուն իրավունք ունի աշխատողին մինչև մեկ ամիս ժամկետով նույն աշխատավայրում փոխադրելու աշխատանքային պայմանագրով չնախատեսված այլ աշխատանքի, ինչպես նաև փոփոխելու աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտում նշված որոշակի պայմանները (Օրենսգրքի 84-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ կետեր և 2-րդ մաս)՝ տարերային աղետների, տեխնոլոգիական վթարների, համաճարակների, դժբախտ պատահարների, հրդեհների և արտակարգ բնույթ կրող այլ հանգամանքների կանխարգելման կամ դրանց հետևանքների անհապաղ վերացման համար: Միաժամանակ, պետք է նկատի ունենալ, որ կողմերի համաձայնությունը ոչ բոլոր դեպքերում է բավարար աշխատողի աշխատանքի պայմանները փոփոխելու (այդ թվում՝ նաև ժամանակավորապես) համար: ՀՀ աշխատանքային օրենսգրքի 106-րդ հոդվածը սահմանում է, որ արգելվում է աշխատողին փոխադրել նրա առողջական վիճակին հակացուցված աշխատանքի: Դա նշանակում է, որ գործատուի համար արտադրական անհրաժեշտության առկայության հանգամանքը չի կարող հիմք ընդունվել աշխատողի առողջության պահպանման շահը ոտնահարելու, եթե անգամ աշխատողը տվել է այլ աշխատանքի փոխադրվելու իր նախնական համաձայնությունը: Անկախ այդ համաձայնությունից՝ աշխատողի առողջական վիճակին հակացուցված աշխատանքի տեղափոխող գործատուն կրում է վարչական կամ քրեական պատասխանատվություն ՀՀ օրենքով սահմանված կարգով: Բացի այդ, գործատուն պարտավոր է հատուցել իր անօրինական գործողություններով աշխատողին պատճառված վնասները: Խարտիայի 3-րդ հոդվածն ամրագրում է անվտանգ և առողջության համար անվնաս աշխատանքային պայմանների իրավունքը՝ Կողմերին պարտավորեցնելով ձևակերպել, իրականացնել և պարբերաբար վերանայել աշխատանքային անվտանգությանը, առողջությանը և միջավայրին վերաբերող առանձնահատուկ ազգային քաղաքականությունը: Այդ քաղաքականության առաջնային նպատակը պետք է լինի աշխատանքային անվտանգության ու առողջության բարելավումը և աշխատանքի ընթացքում ծագող, դրա հետ կապված կամ տեղի ունեցող վթարների և առողջությունը վնասելու հնարավորության կանխումը: Խարտիայի 3-րդ հոդվածն ան-

վնաս և առողջության համար անվտանգ աշխատանքային պայմանների ապահովման հիմնական բեռը, փաստորեն, դնում է գործատուի վրա: Ընդ որում, անվտանգ և առողջության համար անվնաս աշխատանքային պայմանների ապահովման գործառույթները, կազմակերպումը և գործունեության պայմանները պետք է սահմանվեն ազգային օրենքներով կամ կանոնակարգերով, կոլեկտիվ համաձայնագրերով կամ ազգային պայմաններին համապատասխան այլ միջոցներով: Ճիշտ է, Խարտիայում ուղղակիորեն չի սահմանվում աշխատանքի էական պայմանների փոփոխության հետևանքով աշխատանքի փոփոխման դեպքում կիրառվող ընթացակարգը, բայց 3-րդ հոդվածի ամրագրումը վկայում է այն մասին, որ յուրաքանչյուր աշխատող, անկախ իրավիճակից, պետք է երաշխավորված լինի առողջության համար անվտանգ աշխատանք ունենալու իրավունքով:

Աշխատանքային հարաբերությունների կայունության սկզբունքը դրսևորվում է նաև ՀՀ աշխատանքային օրենսգրքի այն նորմերում, որոնք ապահովում են ընդհատված աշխատանքային հարաբերությունների վերականգնումը: Մասնավորապես, Օրենսգրքի 265 հոդվածի 1-ին մասի համաձայն, եթե պարզվում է, որ աշխատանքի պայմանները փոփոխվել են, աշխատողի հետ աշխատանքային պայմանագիրը լուծվել է առանց օրինական հիմքի կամ օրենսդրությամբ նախատեսված կարգի խախտումով, ապա աշխատողի խախտված իրավունքները կարող են վերականգնվել: Օրենսդիրն առաջնային է համարում աշխատողի և գործատուի միջև աշխատանքային հարաբերությունների վերականգնումը, և դրա ամենարինության դեպքում մատուցում խախտված իրավունքների վերականգնման այլ եղանակներ (ՀՀ աշխատանքային օրենսգրքի հոդված 265, մաս 2-րդ): Խարտիայի 24-րդ հոդվածի համաձայն՝ բոլոր աշխատողներն ունեն աշխատանքից ազատման դեպքում պաշտպանվածության իրավունք: Ամրագրվում է պատշաճ փոխհատուցման կամ համապատասխան այլ օգնության նկատմամբ այն աշխատողների իրավունքը, ովքեր աշխատանքից ազատվել են առանց հիմնավոր պատճառի: Սույն հոդվածը տարածվում է բոլոր աշխատողների վրա, սակայն պետությունը կարող է իր պաշտպանությունից բացառել աշխատողների հետևյալ կատեգորիաներից մի քանիսին՝ կամ բոլորին՝

ա) աշխատանքային պայմանագրով սահմանված ժամկետով կամ հանձնարարականով աշխատող անձինք,

բ) փորձաշրջանում կամ հմտությունների ստուգման փուլում գտնվող աշխատողները պայմանով, որ նշված փուլը սահմանվի նախապես կամ ունենա ողջամիտ տևողություն,

գ) կարճաժամկետ ոչ հիմնական աշխատողները:

Եթե աշխատողը գտնում է, որ ինքն ազատվել է աշխատանքից առանց հիմնավոր պատճառների, ապա նա իրավունք ունի բողոք ներկայացնելու անկախ մարմնին: Խարտիայի իմաստով «աշխատանքից ազատում» կամ «ազատված» տերմինները նշանակում են աշխատանքային հարաբերությունների դադարեցում գործատուի նախաձեռնությամբ: Աշխատանքից ազատման հիմնավոր պատճառ չեն հանդիսանում՝

- խտրականությունը (հոդված 1 մաս 2-րդ, հոդված 4 մաս 3-րդ, հոդված 15, հոդված 20),
- արհմիությունների անդամակցելը (հոդված 5),
- գործադուլներին մասնակցությունը (հոդված 6 մաս 4),
- մայրությունը (հոդված 8 մաս 2),
- ընտանեկան պարտականությունները (հոդված 27),
- աշխատողների ներկայացուցչությունը (հոդված 28),
- բողոք ներկայացնելը կամ օրենքների և կամ կանոնակարգերի պահանջների խախտման մեղադրանքով գործատուի դեմ հարուցված դատական գործի վարություն մասնակցությունը, կամ իրավասու վարչական մարմին դիմելը, հիվանդության կամ մարմնական վնասվածքի պատճառով աշխատանքից ժամանակավոր բացակայությունը (հոդված 24)⁷:

Վերը նշված պատճառները ընդհանուր առմամբ յուրաքանչյուր աշխատողի նկատմամբ հավասարության իրավունքի դրսևորում են: Իսկ աշխատանքային հարաբերությունների կայունության առումով հավասարության ապահովումն ունի կարևոր նշանակության: Ցանկացած անհավասար պայմանների առկայությամբ աշխատանքային հարաբերությունների խաթարումն առաջին հերթին հանգեցնում է կայունության սկզբունքի խախտմանը:

⁷ Տե՛ս "Digest of the Case law of the European Committee of Social Rights" (Սոցիալական իրավունքների եվրոպական հանձնաժողովի նախադեպային իրավունքի ամփոփագիր), 2008, 1 september, p. 153.

Աշխատանքային հարաբերությունների կայունության ապահովման սկզբունքից բխում է, որ անօրինական ազատված աշխատողի խախտված աշխատանքային իրավունքների պաշտպանությունը նախևառաջ պետք է ներառի աշխատողի՝ իր նախկին աշխատանքի իրավունքի վերականգնումը, իսկ դրա անհնարինության դեպքում՝ համարժեք փոխհատուցման տրամադրումը: Ոչ պաշտոնական ուսումնասիրությունները հաստատում են, որ անօրինական հիմքերով ազատված աշխատողի դատարան դիմելու հիմնական նպատակը հենց իր նախկին աշխատանքի վերականգնումն է⁸: Ընդ որում, այստեղ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ մինչև իրավունքի խախտումը գոյություն ունեցած վիճակի վերականգնում պետք է համարվի նախկին աշխատանքին անցելու իրավունքը, այլ ոչ թե աշխատողին վերականգնել այլ համարժեք պաշտոնում⁹:

Խախտված իրավունքի վերականգնումը ենթադրում է այն բացասական հետևանքների վերացումը, որոնք անձի համար առաջացել են իրավունքի խախտման արդյունքում: Որպես կանոն, այդ բացասական հետևանքների վերացումը տեղի է ունենում մինչև իրավունքի խախտումը գոյություն ունեցած վիճակի վերականգնմամբ: Սակայն, առանձին դեպքերում, մինչև իրավունքի խախտումը գոյություն ունեցած վիճակի վերականգնումը կարող է օբյեկտիվորեն անհնար լինել: Միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ որպես առավել արդյունավետ և առավելագույն պաշտպանության մեխանիզմ ընտրվել է աշխատողին չվերականգնելու դիմաց փոխհատուցում վճարելու ինստիտուտը: ՀՀ Սահմանադրական դատարանը նույնպես որպես խախտման բացասական հետևանքները վերացնելու միջոց է համարում անձի կրած վնասի դիմաց տրվող փոխհատուցումը¹⁰: Այս մոտեցումն է արտահայտված նաև եվրոպական դատական նախադեպային իրավունքում¹¹: Որպեսզի ապահովվի աշխատողի աշ-

խատանքային իրավունքների երաշխավորված կայունություն, կարծում ենք, փոխհատուցումը պետք է լինի համարժեք ու ողջամիտ: ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվում է հարկադիր պարապուրդի գումարի առավելագույն չափ, այն է՝ աշխատողի միջին վաստակի տասներկուպատիկի չափը: Այս դրույթը կոչված է ապահովելու աշխատանքից անօրինական ազատված աշխատողի խախտված իրավունքների վերականգնումը: Բայց ամբողջական վերականգնման առումով, կարծես թե, օրենքը լիարժեք կարգավորում չի նախատեսում: Ստացվում է, որ անօրինական հիմքերով աշխատանքից ազատված աշխատողը, դիմելով դատարան, կարող է ստանալ հատուցում հասանելիք գումարի զանգված ձևով, սակայն օրենսդիրը հաշվի չի առել այն անգամանքը, որ հարկադիր պարապուրդի ժամանակահատվածը կարող է գերազանցել 12 ամիսը: Խարտիայի 24 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ առանց հիմնավոր պատճառի աշխատանքից ազատված անձինք պետք է ստանան համարժեք փոխհատուցում: Փոխհատուցման համակարգերը համարվում են համարժեք, եթե դրանք ներառում են հետևյալը՝

1. աշխատանքից ազատման օրվանից մինչև բողոքարկման մարմնի որոշում ընդունելու ամսաթիվը ընկած ժամանակահատվածում անձի կրած ֆինանսական վնասների փոխհատուցումը,
2. աշխատանքի վերականգնման հնարավորությունը,
3. և կամ ավելի բարձր չափի փոխհատուցում, որը թույլ է տալիս կաշկանդել (ապախրախուսել) գործատուին հետագա նման քայլերից և լիովին փոխհատուցել աշխատողի կրած վնասները¹²:

Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել հատկապես փոխհատուցման ենթակա ժամանակահատվածին: Ջրկվելով աշխատանքից՝ խախտվում են աշխատողի ոչ միայն աշխատանքային, այլև գույքային իրավունքները:

⁸ Տե՛ս Գ. Վ. Պետրոսյան, «Աշխատանքից անօրինական ազատված անձանց պատշաճ փոխհատուցման սկզբունքի իրացումը ՀՀ աշխատանքային օրենսգրքում», ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու, Եր., ԵՊՀ, 2012թ., էջեր 267-279:

⁹ Ի դեպ, անօրինական ազատված աշխատողին նախկին աշխատանքում վերականգնելու պարտականության մասին իրավադրույթ նախատեսում է նաև ՌԴ գործող աշխատանքային օրենսգրքը (հոդված 394):

¹⁰ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի 2012 թվականի հուլիսի 7-ի թիվ ՍՊՌ-902 որոշումը:

¹¹ Տե՛ս Վասիլեսկուն ընդդեմ Ռումինիայի (Vasilescu v. Romania) գործով 1998 թվականի մայիսի 22-ի վճիռը, կետ 61: Տվյալ դեպքում անօրինական ազատված անձին աշխատանքում չվերականգնելու, այն է՝ մինչև իրավունքի խախտումը գոյություն ունեցած վիճակի վերականգնելու անհնարինության դեպքում անձի խախտված իրավունքի արդյունավետ իրավական պաշտպանությունը կարող է տեղի ունենալ նրան փոխհատուցում վճարելու միջոցով:

¹² Տե՛ս "Digest of the Case law of the European Committee of Social Rights" (Սոցիալական իրավունքների եվրոպական հանձնաժողովի նախադեպային իրավունքի ամփոփագիր), 2008, 1 september, p. 153.

Եվ որպեսզի ապահովվի աշխատանքային իրավունքների լիարժեք պաշտպանություն, անձը պետք է ստանա փոխհատուցում աշխատանքից զրկվելու օրվանից մինչև ազատման անհիմն լինելու կամ վերականգնումն անհնարին լինելու մասին դատարանի որոշման ուժի մեջ մտնելու օրը ներառյալ: Նշված ժամանակահատվածի ամբողջական նախատեսումը ոչ միայն ցանկալի է, այլև անհրաժեշտ է իրավունքների լիարժեք պաշտպանության համար: Քննարկվող դեպքերի փաստացի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ վերը նշված իրավիճակներում այլ սկզբունքով փոխհատուցման վճարման արդյունքում աշխատողը չի ստանում համարժեք փոխհատուցում¹³: Ստացվում է, որ ՀՀ օրենսգրքի վերը նշված նորմը, սահմանելով 12-ամսյա ժամկետի համար փոխհատուցում, չի համապատասխանում Խարտիայի պահանջներին, ինչն էլ հանգեցնում է աշխատողի աշխատանքային իրավունքների ոտնահարման:

Մեր կարծիքով, փոխհատուցումը համարժեք է և ողջամիտ, եթե ներառում է՝

1. աշխատանքից ազատման օրվանից մինչև բողոքարկման մարմնի որոշումն օրինական ուժի մեջ մտնելու ամսաթիվը ընկած ժամանակահատվածում անձի աշխատանքից ազատված լինելու հետևանքով կրած ֆինանսական վնասները,

2. կամ կրած վնասներից ավելի բարձր չափի փոխհատուցում, որը թույլ կտա կանխարգելելու գործատուի հետագա նման քայլերը: Ավելի բարձր փոխհատուցում ասելով՝ նկատի ունենք, որ փոխհատուցման չափը որոշելիս պետք է հաշվի առնել աշխատողի աշխատանքային ստաժը, մասնագիտական որակավորման աստիճանը (օրինակ՝ դասա-

յին աստիճան): Այլապես, հավասար պայմաններում են հայտնվում անօրինական հիմքով աշխատանքից ազատված բոլոր աշխատողները՝ անկախ զբաղեցրած պաշտոնից, կոչումից և աշխատանքային ստաժից:

Այսպիսով՝ Խարտիան ամրագրելով, որ որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագիր կարող է կնքվել միայն, եթե աշխատանքը կրում է ոչ մշտական բնույթ, կամ, եթե նման պայմանագրի կնքումը նախատեսված է օրենքով, գործատուի նախաձեռնությամբ առանց հիմնավոր պատճառի (աշխատանքային կարողություններին ու վարքագծին չառնչվող հիմքով) աշխատանքից ազատումը համարվում է անօրինական գործողություն, և աշխատողը ձեռք է բերում վերականգնվելու, իսկ դրա անհնարինության դեպքում՝ համարժեք ու ողջամիտ փոխհատուցման իրավունք՝ արտացոլում է կայունության սկզբունքը:

Միաժամանակ անդրադառնալով այն հարցին, թե կայունության ապահովման տեսանկյունից որքանով են ՀՀ աշխատանքային օրենսգրքում պահպանվում Խարտիայով երաշխավորված իրավունքները՝ պրակտիկայի և գործող իրավակարգավորումների համադրական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ողջամիտ ու համարժեք փոխհատուցման ընթացակարգի հարցը չի համապատասխանում Խարտիայի ընդհանուր կանոնին: Օրենսդիրը փոխհատուցման ինստիտուտը մշակելիս առաջնային պետք է համարեր այնպիսի ընթացակարգի սահմանումը, որը հենց կայունության սկզբունքին համապատասխան կապահովեր աշխատանքային հարաբերությունների մասնակիցների, մասնավորապես՝ աշխատողների իրավունքների ու օրինական շահերի ապահովման երաշխիքը:

¹³ Տե՛ս Գ. Վ. Պետրոսյան, «Աշխատանքից անօրինական ազատված անձանց պատշաճ փոխհատուցման սկզբունքի իրացումը ՀՀ աշխատանքային օրենսգրքում», ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսոր Կարապետյանի կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու, Եր., ԵՊՀ, 2012թ., էջեր 267-279:

ԳՈՒՐԳԵՆ ՄԱՂՈՅԱՆ

ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի հայցորդ

ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ

Մարդու, ինչպես նաև հասարակության, պետության նպատակաուղղված գործունեության կարևորագույն տեսակներից մեկը ծառայությունն է: Այս հասկացությունն օգտագործվում է տարբեր իմաստներով՝ որպես մարդկային գործունեության տեսակ, որպես սոցիալական-իրավական ինստիտուտ, որպես պետության մարմինների համակարգ, ինչպես նաև որպես հոգևոր գործունեություն և այլն: Ծառայության իմաստը կայանում է մարդկանց ղեկավարման, պետական գործունեության իրականացման, ղեկավարման ապահովման, սոցիալ-մշակութային սպասարկման մեջ¹:

Որպես սոցիալական գործունեության տեսակ՝ ծառայությունը հասարակական հարաբերություններում առանձնանում է իբրև հասարակության բնականոն կենսագործունեության անհրաժեշտ պայման: Ծառայողական գործունեությամբ են ապահովվում արտադրության, արտաքին կապերի, նյութական և այլ արժեքների բաշխման, անվտանգության, կրթության, հասարակարգի պահպանման և այլ ոլորտները:

Ծառայության յուրահատուկ տեսակ է հանդիսանում հանրային ծառայությունը, որի հիմնահարցը ունի թե՛ տեսական, թե՛ գործնական նշանակություն:

Կապված այն հանգամանքի հետ, որ Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումից հետո բավականին ժամանակ օրենսդրորեն բացակայում էր «հանրային ծառայություն», «պետական ծառայություն» հասկացությունների պարզաբանումը, որոնք իրավաբանական գրականությունում տարբեր կերպ էին մեկնաբանվում: Ընդ որում, մեկնաբանությունները հիմնականում իրենց վրա կրում էին արտասահմանյան տեսաբանների՝ այդ հարցի շուրջ ունեցած մոտեցումների ընդգծված ազդեցությունը:

Մասնագիտական գրականությունում հենց այս մոտեցմամբ էլ հանրային ծառայությունը մեկնաբանվում է որպես առավել ընդգրկուն հասկացություն և իրենից ներկայացնում է օ-

րենսդրությամբ պետությանը վերապահված լիազորությունների իրականացում, որի ընթացքում իրագործվում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների քաղաքականությունը²:

Այս ինստիտուտն ունի դարերի պատմություն, այն ժամանակի ընթացքում կատարելագործվել ու մշակվել է, ճշտվել են նրա տարրերը, օբյեկտները, մեթոդները, կառուցակարգերը, ձևավորվել են դրա տարբեր մոդելներ (անգլո-սաքսոնական, ռոմանագերմանական և այլն):

Պետական ծառայությունը՝ որպես հանրային ծառայության հատուկ ուղղություն, տիրապետող իշխանության քաղաքական կամքի իրացման մեխանիզմ, առաջացել է պետության հետ մեկտեղ՝ որպես պետությանը հատուկ ներուճակ տարր: Պետությունը հանդես է եկել հասարակության զարգացման այն փուլում, երբ առաջացել է հասարակական կյանքի քաղաքական կարգավորման օբյեկտիվ անհրաժեշտություն, իսկ հանրային ծառայությունը՝ այն ժամանակ, երբ պետության գործառույթների իրականացման համար անհրաժեշտ էր ունենալ կառավարման հատուկ ապարատ: Դրա համար հարկավոր էր բնակչությունից առանձնացնել մարդկանց հատուկ խումբ, նրանց պատրաստել մասնագիտական գործունեության, վերջիններիս համար ստեղծել արտոնյալ պայմաններ և դարձնել պետական քաղաքականության իրականացման հուսալի միջոց: Անհրաժեշտ է նկատի ունենալ նաև այն, որ քիչ թե շատ զարգացած պետական ծառայությունն առաջանում է պետականության զարգացման այն փուլում, երբ տեղի է ունենում աշխատանքի որակական բաժանում քաղաքական իշխանության և կառավարչական ապարատի միջև, պետական քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց և պետական ծառայության համակարգում մասնագիտական պարտականություններ կատարողների միջև: Իշխանությունը, քաղաքական էլիտան իր վրա է վերցնում ներքին և արտաքին քաղաքականության մշակ-

¹ Տե՛ս Տарилов Ю. Н., “Служебное право Москва” 1996, с.128.
² Տե՛ս Овсебян О.А., “Правовое регулирование государственной службы в Республике Армения” Дисс. канд.юр.наук, М., 2003, с. 55-56.

ման գործառույթը, իսկ կառավարչական ապարատը՝ չինովնիկները, այդ քաղաքականության իրացման գործառույթը: Այստեղից հետևում է, որ հանրային ծառայությունը և նրա բաղադրատարրերը հանդես են գալիս, որպես աշխատանքի բաժանման հետևանք:

Դարերի ընթացքում հասարակությունը լրիվ ծավալով չի գնահատել պետական ծառայության և ծառայողների դերը: Հասարակությունում առկա հակասությունները, ժամանակի ընթացքում վերաճելով կոշտ հակասությունների ժողովրդի մի մասի և պետական մարմինների ու ծառայողների միջև, նույն իրավիճակն են ստեղծել Հայաստանի Հանրապետությունում նաև այսօր: Նման պայմաններում առավել խոցելի են դառնում պետական մարմինները, որի արդյունքում հասարակության լայն շերտերի աչքում արժեզրկված է պետական ծառայության և պետական ծառայողի դերը:

Բազմաթիվ երկրների երկարամյա փորձն ապացուցել է, որ պետական ծառայությունը կարող է ապահովել պատմական, քաղաքական, տնտեսական, տեղեկատվական և այլ բազմաթիվ ու բազմաբնույթ խնդիրների արդյունավետ լուծումը: Նրա ձևավորումը, որպես պետական կառավարման մասնագիտական բարձր պատրաստվածությամբ օժտված անձնակազմով ապահովված գործառույթային երևույթի, հանդիսանում է կարևոր նախապայման պետության և հասարակության միջև փոխվստահելի հարաբերությունների ձևավորման համար:

Իրավաբանական գրականությունում «պետական ծառայություն» հասկացության համընդհանուր հավանության արժանացած մոտեցում չկա: Ներկայումս վարչական իրավունքի դասագրքերում պետական ծառայությունը մեկնաբանվում է լայն և նեղ իմաստներով:

Ամենալայն առումով պետական ծառայությունը պետական մարմինների կողմից կադրային գործառույթի իրականացումն է, գործունեությունն ու իրականացվող վերահսկողությունն այն անձանց կողմից, ովքեր դրա համար ստանում են աշխատավարձ պետական բյուջեից և զբաղեցնում են մշտական կամ ժամանակավոր պաշտոն պետական մարմինների համակարգում, այդ թվում՝ օրենս-

դիր, գործադիր և դատական իշխանության մարմիններում, դատախազությունում, հսկող և վերահսկող մարմիններում, պետական ձեռնարկությունների վարչակազմերում³:

Լայն առումով այն մեկնաբանվում է որպես ծառայողական պարտականությունների կատարում պետական կազմակերպություններում՝ պետական իշխանության մարմիններում, ձեռնարկություններում, հիմնարկներում և այլ կազմակերպություններում: Նեղ առումով պետական ծառայությունը մեկնաբանվում է որպես ծառայողական պարտականությունների կատարում միայն պետական մարմիններում⁴: Այդ թեզի կողմնակիցներ են նաև Ա. Այրիսինը և Յու. Կոլովը, ովքեր այնուամենայն էլ պետական ծառայությունն իրականացվում է միայն պետական հիմնարկներում⁵: Պրոֆեսոր Գ.Ատամանչուկը նշում է, որ պետական ծառայությունը քաղաքացու գործնական և մասնագիտական մասնակցությունն է պետության գործառույթների և նպատակների իրականացմանը՝ կոնկրետ պետական մարմնում ի պաշտոնե ստանձնած պարտականությունների կատարմամբ⁶: Իսկ Վ.Մելնիկովը և Վ.Նեչիպորենկոն պետական ծառայությունը ներկայացնում են որպես իրավական կազմակերպչական և սոցիալական ինստիտուտ: Այն կարգավորում է համասեռ իրավական հարաբերություններ և շուկայական հարաբերությունների պայմաններում նպատակաուղղված է պաշտպանելու մարդու իրավունքներն ու ազատությունները⁷:

Իրավաբանական գրականությունում ավանդական է դարձել պետական ծառայությունը Վ.Մանդիսինի կողմից տրված բնութագրումը: Դրա համաձայն պետական ծառայությունը հանդիսանում է պետության գործունեության ուղղություններից (տեսակներից) մեկը, որն ընդգրկում է պետական մարմինների և այլ պետական կազմակերպությունների աշխատողների՝ պետական ծառայողների, գործունեության կազմակերպումը և իրավական կարգավորումը, ինչպես նաև անմիջականորեն պետության խնդիրների և գործառույթների իրականացմանը ուղղված պետական ծառայողների գործունեությունը⁸:

³ St'u Стариков Ю.Н., "Служебное право Москва" 1996, с.132.

⁴ St'u Коренов А. П., "Административное право" Ч. 1, 1996, с. 107.

⁵ St'u Алексин А. П., Козлов Ю. М., Кармолицкий А. А., "Административное право Российской Федерации", М., 1995, с. 135.

⁶ St'u Амаманчук Г. В., "Государственное управление, Курс лекций", М., 1997, с. 263.

⁷ St'u Мельников В. П., Нечипоренко В. С., "Государственная служба в России: отечественный опыт организации и современность." М. 2000. Ч. 1, с. 4.

⁸ St'u Манохин В. М., "Советская государственная служба". М., 1966, с. 5-14, "Государственная служба. Государственное управление и административное право". М., 1978, с. 292.

Սակայն այս տեսակետը քննադատության է ենթարկվել որոշ հեղինակների կողմից: Մասնավորապես Բ.Լազարը նրանում առաջ է քաշում հետևյալ թերությունները՝

1. պետական ծառայության հասկացությունը տրվում է պետական ծառայողի հասկացության միջոցով, ինչն արդյունավետ չէ,

2. նրանում հաշվի չի առնվում, որ պետական ծառայողը ոչ միայն իրականացնում է անհրաժեշտ խնդիրներ, այլև իրականացնում է քաղաքացիների, հասարակության և պետության իրավունքների պահպանություն և պաշտպանություն,

3. այս բնորոշումը միավորում է երկու տարբեր երևույթներ՝ պետական ծառայություն և գործունեություն՝ ուղղված նրա կազմակերպման և իրավական կարգավորմանը⁹:

Բ.Լազարը պետական ծառայությունը բնորոշում է, որպես պետությանը ծառայություն, այսինքն՝ պետությունից համապատասխան վարձատրությամբ և նրա հանձնարարությամբ պետական մարմիններում իրականացվող գործունեություն՝ ուղղված պետության խնդիրների և գործառույթների լուծմանը¹⁰:

Անկախ այն բանից, թե ինչպիսի բովանդակություն է վերագրվում երկրի պետականության մեխանիզմին, նրա կարևորագույն և ամբաժան մասերի դերում համոզես են գալիս պետական մարմիններն ու դրանց կառույցներում պետական ծառայության պաշտոնյաները: Մասնագիտական գրականության մեջ դրանք բազմանշանակորեն են հիշատակվում:

Ս.Մարչենկոն պետական մարմնի տակ հասկանում է «հաստատություն, որը հասարակական կյանքի այս կամ այն բնագավառում որոշակի խնդիրներով է զբաղվում»¹¹: Ս.Դենիսովը և Պ.Սմիռնովը այն ըմբռնում են որպես պետականության մեխանիզմի բաղադրիչ, որն օրենքին համապատասխան ունի իր սեփական կառուցվածքը, հասարակական կյանքի կոնկրետ բնագավառի կարգավորման որոշակի իրավասություններ և փոխազդեցության մեջ է գտնվում պետական մեխանիզմի այլ բաղադրիչների հետ¹²: Ռ.Ձ.Լիվշիցը պետական

մարմինը մեկնաբանում է որպես «մարդկանց որոշակիորեն կազմակերպված խումբ, որը գործում է համապատասխան բնագավառում, իր իրավասության շրջանակներում և մասնակցում է պետության որոշակի գործառույթի իրականացմանը»¹³: Բ.Գաբրիչիձեն և Ա.Չեռնյավսկին պետական մարմինը բնութագրում են որպես պետական ապարատի բաղկացուցիչ և միևնույն ժամանակ հարաբերականորեն ինքնուրույն ստորաբաժանում, որը, գործելով պետության անունից և լիազորված լինելով նրա կողմից, մասնակցում է պետության խնդիրների և գործառույթների իրականացմանը, ունի համապատասխան կառուցվածք, օրենսդրությամբ օժտված է իշխանական լիազորություններով և կիրառում է իրեն վերապահված գործունեության ձևերն ու մեթոդները¹⁴:

Յու.Ստարիլովը կարծում է, որ պետական մարմինը հանդիսանում է պետության մասը և իրականացնում է պետության գործառույթները¹⁵, իսկ Դ.Բախրախի կարծիքով պետական մարմինը պետական ապարատի ինքնուրույն մասը ձևավորող կազմակերպված կոլեկտիվ է, որն օժտված է լիազորություններով, իրականացնում է հանրային գործառույթներ և որի կառուցվածքն ու գործունեությունը կարգավորվում է իրավունքով¹⁶:

Իրավաբանական գրականությունում պետական մարմնի վերաբերյալ առկա վերը նշված հասկացությունների ընդհանրացման արդյունքում առանձնանում են քննարկվող երևույթը բնութագրող բավականին ինքնուրույն մի շարք համագամանքներ, մասնավորապես պետական մարմինը՝

1. հանդիսանում է պետական ապարատի բաղկացուցիչ մասը,
2. ստեղծվում է պետության խնդիրներն ու գործառույթներն իրականացնելու համար,
3. գործում է պետության անունից և նրա հանձնարարությամբ,
4. օժտված է օրենքով նախատեսված իշխանական լիազորություններով,
5. ունի համապատասխան կառուցվածք և իրավասություններ,

⁹ Տե՛ս Լազարե Բ. Մ., “Государственная служба”. Մ., 1993, с. 5-6.
¹⁰ Տե՛ս նույն տեղում, էջեր 6-7⁹
¹¹ Տե՛ս Մարչենկո Մ. Ն., “Терия государства и права: Учебник, 2-е изд., перераб. и доп.”, М., Проспект, 2005, с. 342.
¹² Տե՛ս Դենիսով Ս. Ա., Սմիրնով Ս. Պ., “Терия государства и права: Конспект авторских лекций.”, Тюмень, 2000, с. 185.
¹³ Տե՛ս Լիվշից Ք.Յ., “Терия права”, М., 2001, с. 194.
¹⁴ Տե՛ս Բախրախ Դ. Ն., “Административное право России: учеб. пособие”/Д.Н.Бахрах.-М: НОРМА-ИН-ФРА, 2000, с. 98.
¹⁵ Տե՛ս Տարիլով Յու. Ն., “Государственная служба в Российской Федерации: теоретико-правовое исследование”. Воронеж :Изд-во Воронеж. Гос. Ун-та, 1996, с. 12.
¹⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 75:

6. կիրառում է իրեն վերապահված գործունեության ձևեր և մեթոդներ,

7. պետական մարմնին պետական իշխանության խնդիրներն ու գործառնություններն իրականացնելու համար տրամադրված են ֆինանսական-նյութական միջոցներ:

«Պաշտոն» հասկացության բացահայտման, որպես այդպիսին նրա բարդության ընկալման համար նախ և առաջ անհրաժեշտ է պարզել նրա սոցիալ-դերային բնույթը: Նման մոտեցման դեպքում պաշտոնը կարելի է բնորոշել որպես մարդու կողմից իրականացվող հաստատված սոցիալական դեր պետական մարմիններում, հասարակական, մասնավոր կազմակերպություններում, հիմնարկ-ձեռնարկություններում:

4. Մանդիսինը նշել է, որ պաշտոնը պետական մարմնի կազմակերպական կառուցվածքի մասն է, որը պետական մարմնի (կազմակերպության) իրավասությունների համապատասխան մասով, դրանց գործնականում կիրառման համար, վերապահված է անձին՝ պետական ծառայողին և կոնկրետացված ու ամրագրված է պաշտոնական փաստաթղթերում: Պաշտոնը պետական մարմնի սկզբնական կազմակերպական-կառուցվածքային միավորն է¹⁷:

Դ.Բախրախը կարծում է, որ պետական ծառայության պաշտոնը պետության գործառնությունների իրականացման համար իրավասու պետական մարմնի կողմից ստեղծված, որոշակի անուն ունեցող և պետական ծառայության շեքստրում ընդգրկված, իրավունքների և պարտականությունների կուռ համակարգ հանդիսացող պետական մեխանիզմի կառուցվածքային ստորին միավորն է, որը պետական վարչակազմի իրավակիրառ ակտի հիման վրա զբաղեցված է անձի կողմից և որը (այդ թվում պետական ծառայողի վարձատրությունը) ֆինանսավորվում է պետական բյուջեի միջոցների հաշվին¹⁸:

Ըստ Ա.Նոզդրաչևի պետական ծառայության պաշտոնը մեկ աշխատողի համար նախատեսված, նրա տեղն ու դերը, նրա վրա դրված պարտականությունների կայուն շրջանակը կանխորոշող պետական ապարատի միավոր տեղ է¹⁹:

Յու. Ն.Ստարիլովը գտնում է, որ պետական ծառայության պաշտոնը պետական կազմավորման (վարչակազմի) առաջնային միավոր բաղադրամասն է և այն իրենից ենթադրում է պետական իշխանության մաս, որը տրված է այն զբաղեցնող անձին²⁰:

Պետական ծառայության պաշտոնի սահմանման առթիվ անկասկած գիտական հետաքրքրություն է ներկայացնում Ա.Գրիշկովեցի մոտեցումը: Ըստ նրա՝ պետական ծառայության պաշտոնը վարչական բյուջետային հաստատություն է: Այն անհրաժեշտ է դիտարկել նախ և առաջ որպես տրամադրվող բյուջետային միջոցների ամբողջություն, տրվող՝

1) ըստ ծառայողական տեղի բովանդակության: Այսինքն՝ որպիսի պետական ծառայողը կարողանա իրականացնել իր պաշտոնական լիազորությունները (նյութատեխնիկական բազայի ապահովում, գործուղումների ընթացքում կատարվող ծախսերի փոխհատուցում, վերապատրաստման ծախսեր և այլն):

2) Ըստ անմիջապես պետական ծառայողի բովանդակության (նյութական ապահովություն, բժշկական սպասարկում և այլ վճարումներ ուղղված պետական ծառայողի և նրա ընտանիքի անդամների որոշ կարիքների բավարարմանը²¹):

Պետական պաշտոն հասկացությունն իրավաբանական գրականությունում բնութագրվում է նախ և առաջ կարգավիճակա-իրավական, կոնկրետ և վերացական գործառնության իմաստներով:

Առաջին դեպքում պաշտոնը ներկայացվում է որպես միջոց պետական ծառայողի կարգավիճակի ամրագրման համար և հանդիսանում է իրավունքների, պարտականությունների և պատասխանատվության ամբողջություն:

Կոնկրետ գործառնության իմաստով պաշտոնը կոնկրետացնում է այն հասկացությունները, որոնք սահմանում են պետական ծառայողի խնդիրները, իսկ անորոշ (աբստրակտ) գործառնության իմաստով պաշտոնի տակ հասկացվում է պետական համապատասխան մարմնի շրջանակներում պետական ծառայողների կողմից իրականացվող խնդիրների անորոշ շրջանակը, որոնք պետք է համապա-

¹⁷ Տե՛ս Манохин В. М., «Советская государственная служба.» / В.М.Манохин: М.: Юрид.лит., 1966. с. 72.

¹⁸ Տե՛ս Д. Н. Бахрах, «Государственная служба России. :учеб. Пособие»/ Д.Н Бахрах. –М.: ТК Велби, Изд-во «Проспект» 2007. с. 16.

¹⁹ Տե՛ս Ноздрачев А. Ф., «Государственная служба. Учеб. Для подготовки государственных служащих»/А.Ф.Ноздрачев.-М.: Статус 1999 с. 123.

²⁰ Տե՛ս Ю. Н. Стариков, «Государственная служба в Российской Федерации: теоретико-правовое исследование.», Воронеж: Изд-во. Воронеж. Гос. Ун-та, 1996. с. 119.

²¹ Տե՛ս Гришкова А. А., «Проблемы правового регулирования и организации государственно-гражданской службы в Российской Федерации»: дис. Д-ра юрид.наук. М., 2004. с. 10.

տասխան պետական ծառայողների կողմից իրականացվեն իրավասու անձի կամ մարմնի կողմից տրված պարտադիր կատարման հանձնարարականի առկայության դեպքում²²:

Որպես եզրահանգում՝ այս առումով կարելի է տալ պետական պաշտոնի հետևյալ բնութագրումը. պետական պաշտոնը պետական մարմնի կամ մարմինների գործառնության կամ խնդիրների իրականացման կամ պաշտոնատար անձանց գործունեության իրականացման ապահովման համար պետական մարմնի կառուցվածքում նախատեսված միավոր աշխատատեղ է:

Քննարկելով պետական մարմնի և պետական պաշտոնի հարաբերակցության հարցը՝ Գ.Վ.Ատամանչուկը մեր կողմից ամբողջությամբ կիսվող տեսակետ է հայտնել այն մասին, որ դժվար է համաձայնել պնդվող այն կարծիքին, թե պաշտոնը հանդիսանում է պետական մարմնի սկզբնական կառուցվածքային միավորը: Կարծես, թե պետական պաշտոնն ունի ինքնուրույն նշանակություն և նրանից՝ ինչպես մասերից, կառուցվում է պետական մարմինը: Իրականում ամեն ինչ ունի հակառակ տրամաբանությունը: Միայն պետական մարմինն է օժտված իրավասություններով և դրանց իրականացման ապահովման համար նրանում ստեղծվում է պետական պաշտոնների որոշակի կազմակերպական համակարգ²³:

Ներկայումս պետական ծառայությունը հանդիսանում է քաղաքակիրթ ժողովրդավարական հասարակության անբաժան մասը, ընդ որում, այն առավելագույնս ապաքաղաքականացված է և մասնավոր հատվածում ծառայությունից նախ և առաջ տարբերվում է հետևյալ չորս հանգամանքներով՝

1) ծառայության բնութագրումը որպես պետականի նշանակում է, որ նրա բովանդակությունը, սկզբունքները և գործառնությունները հանդիսանում են ածանցյալ և սահմանվում են բխելով պետության տեղից և դերից,

2) պետական ծառայությունն ապահովում է ինչպես համապետական, քաղաքական, այնպես էլ պետական կառավարման խնդիրների լուծումը, արտացոլում է պետության հիմնական խնդիրները, գործառնությունները: Ուստի պետական ծառայողները չեն դիտարկվում որպես սովորական վարձու աշխատողներ, այլ պետության մարդ, անձնավորություն, որը ներկայացնում և պաշտպանում է պետության շահերը:

3) Պետական ծառայողների աշխատանքն իր բնույթով կայուն է, նրանց տրվում է համապատասխան աստիճան,

4) պետական ծառայողների կարգավիճակը ենթարկվում է պետական-իրավական կարգավորման: Իրենց կարգավիճակով պետական ծառայողները տարբերվում են այն աշխատողներից, որոնց իրավահարաբերությունները կարգավորվում են աշխատանքային օրենսդրության նորմերով: Պետական ծառայությունում գտնվող ծառայողների նկատմամբ թույլատրվում է մարդու և քաղաքացու որոշ իրավունքների սահմանափակում: Այստեղ գործնականում բացակայում է գործատուի և աշխատակցի իրավական հավասարությունը: Պետական իշխանությունը և իր ծառայողները գտնվում են ստորակարգության հարաբերություններում:

Ելնելով տարբեր երկրներում կիրառում գտած մոդելների և դրանց առջև ծառայած հիմնախնդիրների որոշակի առանձնահատկություններից՝ 20-րդ դարի վերջերում բազմաթիվ երկրներ բռնեցին հանրային ծառայության համակարգում բարեփոխումների իրականացման ուղին: Դրանք ուղղված էին հանրային ծառայության արդյունավետության բարձրացմանը, հանրային ծառայողների թվի և պահպանման ծախսերի կրճատմանը, դրանց գործունեության բարելավմանը, հանրային ծառայության ժողովրդավարության ընդլայնմանը և այլ հրատապ խնդիրների լուծմանը²⁴: Նշված խնդիրների առջև անխուսափելիորեն կանգնած են հանրային ծառայության «երիտասարդ» համակարգ ունեցող երկրները, այդ թվում՝ նաև Հայաստանի Հանրապետությունը: ՀՀ անկախության հռչակումից հետո երկրում, փոքր ինչ ուշացումով, բայց բավարար հետաքրքրություն առաջացավ հանրային ծառայության ձևավորման հիմնախնդրի շուրջ: Ուշադրության կենտրոնում հայտնվեցին վերջինիս տեսական գիտակցման և կազմակերպահրավակական ապահովմանը վերաբերող հիմնահարցերը: Այս գործընթացները էական նշանակություն ունեին և ունեն Հայաստանի Հանրապետության որպես ժողովրդավարական և իրավական պետության ձևավորման գործում:

Իրականացվող բարեփոխումների իրավական հիմքերը ՀՀ-ում դրվեցին «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ՝ 2001 թվականի դեկտեմբերի 4-ին,

²² Տե՛ս Տարիлов Ю. Н., Указ. соч. с. 108 А.Ф. Наздаров "Государственная служба" Москва 1999: с. 114.
²³ Տե՛ս Атаманчук Г. В., "Сущность государственной службы: история, теория, закон, практика". М. 2004, с. 127.
²⁴ Տե՛ս Հարությունյան Ա. Շ., «Եվրոպական Միության հանրային ծառայությունը», «Հանրային կառավարում», N 3-4, 2004, էջեր 4-17:

որը ուժի մեջ մտավ 2002 թվականի հունվարի 9-ին: Դրանով որոշակիացվեցին այս բնագավառի համար հիմնարար նշանակություն ունեցող մի շարք հասկացություններ՝ ինչպիսիք են հանրային ծառայությունը, պետական ծառայությունը, համայնքային ծառայությունը և այլն: Դրանով իսկ այն կարևոր նշանակություն ձեռք բերեց ոչ միայն քաղաքացիական ծառայության՝ որպես պետական ծառայության տարատեսակի, այլև պետական ծառայության մյուս տեսակների իրականացման ընթացքում առաջացող հարաբերությունների կարգավորման համար:

«Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ հանրային ծառայությունը բնութագրվում էր որպես պետության օրենսդրությամբ վերապահված լիազորությունների իրականացում, որն ընդգրկում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից քաղաքականության իրականացումը, պետական ծառայությունը, տեղական ինքնակառավարման մարմիններում ծառայությունը, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում քաղաքացիական աշխատանքը:

Այնուհետև իրականացվող բարեփոխումների շրջանակներում առանձին իրավական կարգավորում ստացան պետական ծառայության առանձին տեսակները և տեղական ինքնակառավարման մարմիններում ծառայությունը, որոնցից յուրաքանչյուրին բնորոշ են յուրահատուկ գծեր և կարգավիճակ:

Այս ոլորտում առաջացող հասարակական հարաբերությունների նոր որակով կարգավորմանն էր ուղղված «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի ընդունումը, որի 3-րդ հոդվածի համաձայն հանրային ծառայությունը պետությանը ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված լիազորությունների իրականացումն է և որն ընդգրկում է պետական ծառայությունը, համայնքային ծառայությունը, պետական և համայնքային պաշտոնները:

Կարծում ենք, որ հանրային ծառայության հասկացության օրենսդրական բնորոշումը թերի է և չի բխում այդ առթիվ ձևավորված տեսական պատկերացումներից և իրավական տրամաբանությունից հետևյալ պատճառաբանությամբ. այսպես, հանրային ծառայությունը բնորոշվում է որպես պետությանը ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված լիազորությունների իրականացում: Կարծում ենք, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ծառայությունն ընդհանրապես դիտվում է որպես մասնագիտական գործու-

նություն, առավել նպատակահարմար կլինեն հանրային ծառայությունն օրենսդրորեն բնորոշել որպես մասնագիտական գործություն, որն ուղղված է պետությանը ՀՀ սահմանադրությամբ և օրենքներով վերապահված լիազորությունների իրականացմանը:

Մյուս թերություններն առավել ակնհայտ են դառնում վերջինիս բովանդակությունը կազմող բաղադրատարրերի պարզաբանմամբ: Մասնավորապես, օրենսդիրը սահմանել է, որ հանրային ծառայությունն ընդգրկում է պետական ծառայությունը, համայնքային ծառայությունը, պետական և համայնքային պաշտոնները:

Հաշվի առնելով այս ամենը՝ ակնհայտ է, որ հանրային ծառայությունը՝ որպես պետությանը սահմանադրությամբ և օրենքներով վերապահված լիազորությունների իրականացմանն ուղղված մասնագիտական գործունեություն, չի կարող ներառել պաշտոն երևույթը՝ վերևում նշված իր ցանկացած մեկնաբանությամբ, քանի որ դրանք տարատեսակ հասկացություններ են և չեն կարող ներառվել մեկը մյուսում:

Նկատի ունենալով այդ հանգամանքը՝ նպատակահարմար է հանրային ծառայությունն օրենսդրորեն բնորոշել որպես մասնագիտական գործունեություն, որն ուղղված է ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված խնդիրների և գործառույթների իրականացմանը, որն ընդգրկում է պետական ծառայությունը, համայնքային ծառայությունը, ինչպես նաև պետական և համայնքային պաշտոններ զբաղեցնող անձանց ծառայությունը:

Այն ընդգրկում է քաղաքացիական ծառայությունը, դատական ծառայությունը, դիվանագիտական ծառայությունը, հատուկ ծառայությունները՝ պաշտպանության, ազգային անվտանգության, ոստիկանության, հարկային, մաքսային, փրկարարական ծառայության հանրապետական գործադիր մարմիններում, ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայությունը, Ազգային անվտանգության խորհրդում, ինչպես նաև օրենքներով նախատեսված այլ ծառայությունները:

Պետական ծառայության համակարգը կազմող ծառայության այս, այդ թվում՝ նաև հատուկ տեսակների, սահմանումն ամբողջական չէ: Մասնավորապես, ՀՀ օրենսդրությունը որպես պետական ծառայության հատուկ տեսակներ սահմանում է նաև ՀՀ հատուկ քննչական ծառայությունում ծառայությունը, քրեակատարողական ծառայությունում ծառայությունը, դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը և այլն:

ՍԵՐԳԵՅ ՅՈՎՅԱՆՆԻՍՅԱՆ

ԵՊՅ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի ասպիրանտ

1853Թ. ՌՈՒՄ-ԹՈՒՐԷԱԿԱՆ ԲԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍՐԲԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՒՐԶ

Ցանկանալով սկսել ռազմական գործողություններ Թուրքիայի դեմ՝ Նիկոլայ I ցարը մտադրվեց սրել իրավիճակը: Վերջինս որոշեց գործել հետևելով Նապոլեոն III-ի կողմից սրբավայրերի հետ կապված հերթական սադրանքներին, և դրա հիման վրա ձեռնարկել դիվանագիտական, իսկ հետո, հարկ եղած դեպքում, նաև՝ ռազմական հարձակում սուլթանի վրա, որպեսզի հասնի այնպիսի կարգավիճակի, որ Թուրքիան այս կամ այն չափով փաստացի ճանաչի ռուսական իշխանությունը: Թվում էր՝ դա անելը հեշտ է, քանզի այդ ժամանակ ավելի հաճախակի բնույթ էին կրում Նապոլեոն III-ի՝ ցարի նկատմամբ սադրանքները:

1853 թվականի հունվարին սուլթանի լիազորված դեսպան Աֆիֆ բեյը հարցրեց Երուսաղեմի կաթոլիկ և ուղղափառ հոգևորականությանը, թե որ հին մատուցներն են մտնում կաթոլիկների իրավասության տակ, և որոնք՝ ուղղափառների:

Կաթոլիկական արծաթե աստղը (փորագրված ֆրանսիական զինանշանով) մեծ հանդիսությամբ տեղադրվեց Բեթղեհեմի քարանձավում՝ մուտքի մոտ, որտեղ, համաձայն առասպելի, գտնվում էր Նորածին Տիրոջ մուրը: Նույն հանդիսավոր կերպով կաթոլիկ եպիսկոպոսին հանձնվեցին նաև Երուսաղեմի «սուրբ Գերեզմանի» եկեղեցու և Բեթղեհեմի եկեղեցու արևելյան ու հյուսիսային դարպասների բանալիները: Այս ամենը կազմակերպված էր միտումնավոր և սադրիչ ցուցամուրությամբ¹:

Սանկտ Պետերբուրգում որոշվեց էլ ավելի նշանակալից սադրանքով պատասխան տալ Նապոլեոն III-ի սադրանքին: Գործը հասնում էր արդեն ուժերի կիրառմանը, և Նիկոլայ I ցարը որոշեց ոչ մի դեպքում չնահանջել²:

Օովային նախարար, իշխան Ալեքսանդր Սերգեևիչ Մենշիկովը հրաման ստացավ Նիկոլայ I ցարի կողմից մեկնել Կ.Պոլիս՝ սուլթան Աբդուլ-Մեջիդի մոտ, իր խիստ պահանջներով:

1853 թվականի փետրվարին Մենշիկովը հրաժեշտ է տալիս Նիկոլայ կայսրին և գնում իր նշանակման վայրը: Իրեն շրջապատող մեծաքանակ մարդկանց հետ Մենշիկովը նստեց ռազմական «Գռնմոնուսեց» նավը և մեկնեց Կոստանդնուպոլիս:

1853 թվականի փետրվարին «Գռնմոնուսեցը» հասել էր Բոսֆորի ափին և կանգ առել Տոպ-Յանում: Սկսվեց դիվանագիտական խաղ, որը կարող էր արյունալի հանգուցալուծմամբ վերջանալ: Երեք ամսից ավելի քիչ ժամանակ պահանջվեց, որ հնարավոր պատերազմը դառնա անխուսափելի: Մենշիկովի առաջին այցը եղել է Մեծ վեզիրին: Երկրորդ այցը պետք է կատարվեր արտաքին գործերի նախարար Ֆուադ էֆենդիին, ով հայտնի էր իր հակառուսական տրամադրություններով և Ֆրանսիայի կողմնակիցն էր: Արտաքին գործերի նախարարությունն արդեն առատորեն զարդարված էր, նախարարը դեսպանին պատրաստվում էր հանդիսավոր ընդունել, երբ հանկարծ վերջին պահին պարզվեց, որ Մենշիկովը Ֆուադ էֆենդուն չի այցելելու, և ընդհանրապես նրա հետ գործ ունենալ չի ցանկանում: Այցելելուց հետո Մեծ վեզիրին Մենշիկովն անցնում էր մի դահլիճով, որտեղ սպասում էր հատուկ նշանակված շարասյունը, որը պետք է դեսպանին ուղեկցեր արտգործնախարար Ֆուադ էֆենդիի գրասենյակ, սակայն Մենշիկովն առանց կանգ առնելու և որևէ մեկին ուշադրություն դարձնելու դուրս է գալիս և գնում դեսպանատուն³:

Սուլթանը, ճնշված դաժան անհանգրստությամբ, վախեցած լսելով Բեսարաբիայում երկու ռուսական կորպուսների (5-րդ և 4-րդ) կենտրոնացման մասին, անմիջապես հեռացնում է Ֆուադ էֆենդիին և նշանակում արտաքին գործերի նախարար Ռիֆաթ փաշային:

Երբ Եվրոպայում տեղեկանում են Մենշիկովի առաջին քայլերի մասին, ամենուր խոսում էին այն մասին, որ Արևելյան հարցը մտնում է նոր և շատ կտրուկ շրջան: Մենշիկովի վարքագիծը պատկերված էր Եվրոպայում

1 Տե՛ս С. Е. Villiamy, "Crimea". London, 1939, p. 50.

2 Տե՛ս Тарле Евгений Викторович, "Крымская война. Том 1" // Москва, 2003, с. 121.

3 Տե՛ս Malcolm-Smith E. F., "The Life of Stratford Canning" London, 1933, p. 139.

որպես միտումնավոր սադրանքների և ահաբեկումների շարունակական շարք⁴:

Մենշիկովի Կոստանդնուպոլսում գտնվելու ընթացքում անգլիական գործերի հավատարմատարն էր գնդապետ Ռուզզը: Նորանշանակ դեսպան Լորդ Սորբեդֆորդ-Ռեդկլիֆը հայտնվեց Պոլսում Մենշիկովի առաջին քայլերն անելուց հետո:

Այս պահից սկսած արդեն ոչ թե մեկ, այլ երկու դիվանագետներ Կոստանդնուպոլսում պայքարում էին ամեն կերպ Ռուսաստանի և Թուրքիայի միջև հարաբերությունների վատթարացման և պատերազմի համար՝ Մենշիկովը և Սորբեդֆորդը: Բայց նրանք դա տարբեր ձևով էին անում. Մենշիկովը բավականին բաց, Սորբեդֆորդը զգուշորեն, աստիճանաբար՝ նախապես ուրվագծելով հերթագայող փուլերը: Մինչև Սորբեդֆորդի գալուստը Թուրքիայի մայրաքաղաքում մեծ նշանակություն ունեցող իրադարձություն էր տեղի ունեցել, որը մեծապես նպաստել էր Սորբեդֆորդի նպատակներին. ֆրանսիական նավատորմը հանկարծ հրահանգ էր ստացել Թուլոնից լողալ դեպի թուրքական ջրերը: Որպեսզի հասկանանք այն միջազգային իրավիճակը, որի պայմաններում տեղի է ունեցել այս իրադարձությունը, պետք է իմանալ Մենշիկովի կատարած երկու դիվանագիտական քայլերի մասին Մեծ վեզիրին արված նրա առաջին այցելությունից հետո: Մենշիկովը պետք է տեղեկացներ սուլթանին Նիկոլայի կամքի մասին: Առաջին անգամ սուլթանին այցելության ժամանակ Մենշիկովը հանձնեց նրան նամակ Նիկոլայի անունից: Նամակը քաղաքավարի էր, բայց պարունակում էր սպառնալիք: Ռուս ցարը կոչ էր անում սուլթանին հարգել «ուղղափառ եկեղեցու դարերով սրբազործված իրավունքը» և խորհել հետևանքների մասին հրաժարվելու դեպքում:

Թագավորի ուղերձի մյուս միտքն այն էր, որ եթե մեկ այլ տերություն դրդի Թուրքիային չկատարել ռուսական պահանջները, ապա «ցարը ավելի կսերտացնի «միության» կապերը, որը արդեն իսկ գոյություն ունի իր և սուլթանի միջև: Եվ այդ ռուս-թուրքական համաձայնագիրը վերջ կտա «ոտնձգություններին, որոնք անհամատեղելի են անկախության հետ»⁵:

Այլ կերպ ասած՝ սուլթանին առաջարկվում էր դաշինք Ռուսաստանի հետ, որն իր սուր ծայրով ուղղված էր Ֆրանսիայի դեմ:

Արդու-Մեջիդը խուճապի մեջ էր:

Մենշիկովի հանձնած նոտան նպատակ ուներ իրավիճակը թուրք նախարարների ուշադրությունն այն փաստին, որ Նիկոլայը ոչ միայն ցանկանում է ապահովել Պաղեստինում ուղղափառ եկեղեցու իրավունքները, այլև «հանգստացնել հույների դժգոհությունը»: Ռուսները հստակ հասկացնում էին, որ այլևս չեն բավարարվի սուլթանի բանավոր հավաստիացումներով՝ պահանջելով պարտավորություններին տալ իրավաբանական տեսք: Փաստաթուղթն ավարտվում էր սպառնալիքով: Նշվում էր, որ թուրք նախարարների հետագա հակառուսական գործունեությունը կարող էր լուրջ հետևանքներ ունենալ ինչպես Թուրքիայի, այնպես էլ եվրոպական մայրցամաքում խաղաղության համար:

Չենց այս վերջին տողերն էին առանցքային ամբողջ փաստաթղթում, հենց այս տողերի համար էր գրվել ամբողջ փաստաթուղթը, քանի որ մնացած հարցերը կապված էրուսաղենի Չարության Տաճարի գմբեթի շինարարության հետ, կամ ռուսական դեսպանության քիկունքում թուրքական կառավարության և ֆրանսիական դեսպանության մամակագրության մասին այնքան էլ այդ պահին չէին հետաքրքրում ռուս ցարին⁶: Ավելին, մարտի 4-ին (16) Թուրքիայի նորանշանակ արտաքին գործերի նախարար Ռիֆաթ փաշային հանձնած մեծ նոտայում Մենշիկովը բավականին կտրուկ տոնով պահանջում էր, որ սուլթանն ետ վերցնի «լատիններին» (կաթոլիկներին) արված որոշ զիջումները: Խոսքը գնում էր Սբ. Բեթղեհեմի եկեղեցու մեծ դռան բանալիի մասին: Մենշիկովը բողոքում էր «Լատինական» աստղը Բեթղեհեմի եկեղեցում դնելու թույլտվության և այս առթիվ կաթոլիկ վանականների ամբարտապան հայտարարությունների դեմ: Նոտայում նաև բողոք էր արտահայտվում թուրքական նախարարների դեմ, ովքեր դավեր էին հյուսում Ռուսական կայսրության դեմ⁷: Դեռ մեկ շաբաթ էլ չէր անցել, երբ Մենշիկովը կրկին դիմում է թուրքերին, ավելի սպառնալից նոտայով, և, ընդ որում, նոր վերջնագրային պահանջներով: 1853 թվականի մարտի 10-ին (22) Մենշիկովը Ռիֆաթ Փաշային հայտարարեց, որ ռուսական կայսրության պահանջները վերջնական են: Իսկ երկու օր անց հետևեց երրորդ նոտան՝ ավելի կտրուկ և սպառնացող: Մենշիկովը բողոքում էր ռուսական կայսեր նկատմամբ անհարգալից վերաբերմունքի համար և

⁴ Stü Temperley H.W.V., "The Victorian Age in Politics, War and Diplomacy". Cambridge, 1928, p. 50.

⁵ Стү Тарле Евгений Викторович, "Крымская война". Том 1, Москва, 2003, с. 172.

⁶ Stü Malcolm-Smith E. F., "The Life of Stratford Canning". London, 1933, p. 180.

⁷ Stü Temperley H.W.V., "England and the Near East. The Crimea". London, 1936, p. 121.

պահանջում անմիջապես փոխել նման վերաբերմունքը՝ ներկայացնելով ռուս-թուրքական կոնվենցիայի նախագիծը, ինչն անակնկալ էր Թուրքիայի արտգործնախարարի համար⁸:

Երբ Նիկոլայի կողմից Թուրքիային ներկայացված պահանջները հայտնի դարձան Փարիզում, Նապոլեոն III-ը Տյուրիիլյան արքունիքում հրավիրեց նախարարների խորհուրդ՝ քննարկելու հետագա վարքագիծը: Նախարարների ճնշող մեծամասնությունը դեմ էր վայրկյանական ակտիվ պատասխանին, սակայն Նապոլեոն III-ը հրամայում է նավատորմի նախարարին անմիջապես ֆրանսիական նավատորմը Տուլունից ուղարկել Սալամին⁹:

Պատերազմի առաջին իրական քայլը կայացվել էր: Նավատորմը դուրս եկավ Տուլունից 1853 թվականի մարտ 23-ին:

Փաստերը ցույց են տալիս, որ առաջին իսկ պահից, երբ Եվրոպան իմացավ Մենշիկովի սպասվելիք առաքելության մասին, անգլիական և ֆրանսիական դիվանագիտության միջև հաստատվեց սերտ համագործակցություն և կնքվեց համաձայնագիր, որի համաձայն երկու կողմերն տեղեկացնում էին միմյանց իրենց քայլերի մասին, որոնք վերաբերում էին արևելյան հարցին:

